ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

3

ԵՐԵՎԱՆ
2001

9(47·925)
Հ-28

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

3

3581

Երևան 2001

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 282

ՄԱՏԵՆԱՇԱՐ

թիվ 3

Հ 282 Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր: - Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2001, էջ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ Է ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ՌՈՍԱ ՄԱԽՅԱՆԻՆ՝ ՀԱՆԴԵՍԻ ՆԵՐԿԱ ՀԱՄԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տեղեկատվություն Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրատարակված աշխատությունների մասին:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ
Լ. Ա. Բարսեղյան (գլխ. խմբագիր)
Ս. Բ. Բաղդասարյան
Ս. Կ. Պողոսյան

ԿԱԶՄԵՑ՝
Ս. Կ. Պողոսյան

0503020913
Հ ——————— 2001
0176 (01) - 2001

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-895-5-9

© ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2001

ՏԱՏՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով

Մասաչուսեթս, Պայքար հրատ., 1995, 147 էջ

Պրոֆ. Վ. Տատրյանը Հայոց ցեղասպանության ամենատարբեր հարցերն ուսումնասիրող նվիրյալներից է: Հանձին նրա մենք գործ ունենք մասնագիտական բարձր վարպետությամբ օժտված, հմուտ և գիտական աշխատանքում նախանձելի հետևողականություն ու համառություն դրսևորող խոշոր հայագետի հետ: Նա ցեղասպանության հիմնահարցերին անդրադարձել ու անդրադառնում է ոչ միայն պատմագիտական, այլև իրավափիլիսոփայական, սոցիալիոգեբանական տեսանկյուններից: Մի շարք լեզուների, այդ թվում թուրքերենի իմացությունը Վ. Տատրյան պատմաբանին հնարավորություն է տալիս իր հետազոտություններում օգտագործել այլալեզու գրականություն ու վավերագրեր և Հայոց ցեղասպանության հարցերը քննել այլ ազգերի պատմության ու զարգացման օրինաչափությունների հենքի վրա: Ընթերցողի ուշադրությանն առաջարկվող գիրքը մենագրություն չէ և ոչ էլ ուսումնասիրությունների ժողովածու: Այն ներառում է Մեծ եղեռնի նախապատրաստության շրջանի՝ մի շարք խնդիրներին նվիրված տեսակետներ և 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանում ցեղասպանության հեղինակներին պատասխանատվության ենթարկելու շուրջը ծավալված քննարկումների նյութերը:

Գիրքն ունի երկու բաժին.

«Հայկական ցեղասպանութիւնը հետպատերազմեան օսմանեան խորհրդարանին մեջ (Հայ երեսփոխաններու մեղադրական ելույթները)» (էջ 5-103):

«Պետութեան մը և պետական կուսակցութեան մը միաձույլ դերը հայկական ցեղասպանութեան մեջ» (էջ 107-140):

Առաջին բաժնում տրված են օսմանյան խորհրդարանի 1918 թ. նո-

յեմբերի 4-ի, 18-ի և դեկտեմբերի 9-ի, 11-ի, 12-ի նիստերի արձանագրությունները՝ գրեթե սղագրական ճշտությամբ, ինչպես նաև հեղինակի՝ յուրաքանչյուր նիստի նյութերին առնչվող վերլուծություն-մեկնաբանությունները:

Երկրորդ բաժինը կազմված է հետևյալ գլուխներից.

1. «Իթթիհատ կուսակցութեան սկզբնական խարխափումները»,
2. «Ատանայի ջարդը փորձաքար՝ անպատիժ կոտորածի մը»,
3. «Պալքանեան պատերազմի պարտութիւնը: Անկիւնադարձ մը իթթիհատ կուսակցութեան և պետութեան միաձուլման հոլովոյթին մեջ»,
4. «Յատուկ կազմակերպութիւնը իբրեւ Հայկական ցեղասպանութեան գլխավոր գործիք»,
5. «Իթթիհատ կուսակցական կազմակերպութեան ցեղասպանական կարողութիւնը»:

Երկու բաժիններն էլ ունեն ներածություն, ծանոթագրություններ, առաջին բաժինը՝ նաև եզրափակում:

Գրքի վերջում տրված են հեղինակի համառոտ կենսագրությունն ու գիտական-մանկավարժական գործունեության գնահատականը, նրա աշխատությունների մատենագիտական ցանկը:

Ժամանակագրական առումով, թերևս, նպատակահարմար կլիներ գիրքը սկսել երկրորդ բաժնով, սակայն հեղինակը ղեկավարվել է ոչ թե ժամանակագրական, այլ նյութի պատմագիտական նշանակության սկզբունքով: Վ. Տատրյանն առաջին պատմաբանն է, որը գրեթե քննական վերլուծությամբ ներկայացնում է օսմանյան խորհրդարանում հայոց ցեղասպանության հիմնահարցերի շուրջը ձևավորված դիրքորոշումները, ինչը կարող է կողմնորոշիչ դառնալ Մեծ եղեռնի առնչությամբ թուրքական պետական-քաղաքական և պատմագիտական մոտեցումները, դրանց ելակետերն ու նպատակադրումներն ըմբռնելու համար:

Գրքի ներածությունում կարդում ենք. «Առաջին համաշխարհային պատերազմը վերջացավ թուրքերի լիակատար պարտությամբ, այնպես որ ամբարտավան իթթիհատական [Միություն և առաջադիմության կուսակցության -Ս.Պ.] ջոլիրը հարկադրված էր նվաստանալ և զինադադար խնդրել... 1918-ի օգոստոսի 30-ին համաձայնագիրը երկուստեք՝ այսինքն թուրքերի և դաշնակիցների լիազոր՝ անգլիացիների կողմից, ստորագրվեց Մուդրոսում: Համատարած հուսալքումը, որով համակված էր թուրք ժողովուրդը, էլ ավելի շեշտվեց, երբ նոյեմբերի 1-ի

գիշերն այդ ջոլիրի յոթը պարագլուխները՝ Թալեաթը, Էնվերը, Քեմալը, երկու բժիշկներ՝ Շաքիրն ու Նազըմը և ոստիկանապետեր Բեդրին և Ազմին, գերմանական տորպեդային նավով... գաղտագողի Թուրքիայից փախան նեղուցի և Սև ծովի ճանապարհով: Այս առիթ տվեց, որպեսզի մինչև այդ իթթիհատի՝ ահուդողի մատնված հակառակորդները, իրենց լռությունը փարատելով, մամուլի միջոցով ահազանգ հնչեցնեն և ազդարարեն կառավարությանը՝ գործի անցնելու ու ձերբակալելու մյուս մեղսակիցներին, քանի դեռ նրանք էլ փախուստի չէին դիմել: Այս կապակցությամբ թերթերը լցվեցին հոդվածներով, տեղեկություններով և առաջարկներով: Իթթիհատ կուսակցությունը և այդ կուսակցությանն ապավինած՝ չարագործություններին մասնակցող և կամ նրանց հովանավորող կառավարական և վարչական իշխանավորները անարգանքի սյունին էին գամվում, իբրև երկչոտ և պատեհապաշտ հանցագործներ, որոնք երկիրն անդունդի եզրին հասցրեցին և այժմ անարգորեն փախուստի մասին էին մտածում» (էջ 5):

Իթթիհատ վե թերաքքի կուսակցության ու նրա կառավարության դեմ բարձրացել էին ոչ միայն ընդդիմադիր՝ իթիլաֆ կուսակցության անդամները, այլև թուրք ազգաբնակչության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ, նաև՝ հայերը, հույները, արաբները:

«Մի կողմից՝ այս տարբեր աղբյուրների կիրառած ճնշումները, մյուս կողմից՝ հաղթանակած դաշնակիցների տիրական ներկայությունը Կ. Պոլսում այն ազդակներն էին, որոնք զուգորդվելով անհրաժեշտ նախադրյալներ և մթնոլորտ ստեղծեցին՝ թուրք ջարդարարների դեմ դատական հետապնդում սկսելու համար... Այս բոլորը նախաքայլ հանդիսացավ դատական այն գործողությունների համար, որ վարեց 1918-ի դեկտեմբերին հիմնված Ռազմական ատյանը» (էջ 5-6): Այդ ատյանին դատական գործեր մատակարարելու համար ստեղծվեց մի հանձնաժողով, որը գլխավորում էր Անկարայի նախկին կուսակալ Հասան Մազհարը: Վերջինս կուսակալի (վալու) պաշտոնից ազատվել էր հայերի բռնագաղթի ու բնաջնջման դեմ հանդես գալու համար:

Մազհարի հանձնաժողովը եռանդուն աշխատանք ծավալեց: Նահանգներից ու գերատեսչություններից պահանջեց նյութեր ներկայացնել հայերի ջարդերի ու բռնագաղթի վերաբերյալ: Հաջողվեց հավաքել վիթխարի քանակությամբ փաստեր: Հանձնաժողովը դրանք մանրազնին քննության ենթարկեց ու վավերագրական հավաստիություն ունեցողները հանձնեց Ռազմական ատյան: Դրանց հիման վրա սկսեցին ե-

ռիտթուրքերի պարագլուխների 1919-20 թվերի դատավարությունները: «Ատյանը հաստատեց, որ հայկական եղեռնը կանխամտածված, ծրագրված և հսկողությամբ իրագործված ոճիր էր, որն իրականացվեց կառավարությունն իր ձեռքն առած և այն իր գաղտնի ու քրեական նպատակների համար շահագործած իթթիհատ կուսակցության կենտրոնական կոմիտեի և նահանգներում գործող նրա արբանյակների գլխավոր մեղսակցությամբ» (էջ 6):

Բնականաբար՝ քաղաքական ալեկոծումների, հուսալքության ու կորուստների առիթով ողբի այդ համընդհանուր տագնապահարույց մթնոլորտը չէր կարող ազդեցություն չունենալ օսմանյան խորհրդարանի վրա, չնայած այն, հիմնականում, կազմված էր երիտթուրքական հացկատակներից: Խորհրդարանը հարկադրված եղավ ստեղծել մի նոր հանձնաժողով, որի պարտականությունն էր հարցաքննել Առաջին աշխարհամարտի տարիներին Սայիդ Հալիմի և Թալեաթի գլխավորած կառավարությունների նախարարներին և որոշել՝ նրանք պե՞տք է որպես քրեական հանցագործներ դատվեին: Հանձնաժողովը մի շարք հույժ կարևոր վավերագրեր ձեռք բերեց, սակայն չկարողացավ ավարտին հասցնել սկսած գործը, քանի որ սուլթան Վահդեդդինը լուծարեց խորհրդարանը: Չնայած դրան, հանձնաժողովի հավաքած նյութերը հետագայում լայն շրջանառություն ունեցան:

Օսմանյան խորհրդարանը հետպատերազմյան իր առաջին նիստը գումարեց 1918 թ. հոկտեմբերի 10-ին: Նախագահն էր Թալեաթի մտերիմ անձերից մեկը՝ արտաքին գործերի նախկին նախարար, իթթիհատական Հալիլը, փոխնախագահն էր նշանավոր հրապարակախոս Հյուսեին Ջահիդը (Յալչընը):

«Խորհրդարանի այս նիստերի ուսումնասիրությունը,- նշում է Վ.Տատրյանը,- անսովոր հանգամանք ունի: Ինչպես հայտնի է, առաջին և վերջին անգամ՝ թուրք երեսփոխաններն ու նախարարները ստիպված էին դիմագրավել ուղղակի ու շեշտակի կերպով իրենց դեմ եղած մեղադրանքներին՝ տեղահանությանն ու ջարդին առնչվող ոճիրների կապակցությամբ: Առաջին և վերջին անգամ՝ եղան մանրամասն խոստովանություններ, զղջումի արտահայտություններ և ելք գտնելու անհրաժեշտության հավաստիքներ... Թուրքիայի պատմության մեջ առաջին և վերջին անգամ՝ թուրքական պետության կողմից հայերի դեմ ծրագրված և իրագործած ոճիրը խորհրդարանային մակարդակով քննարկման նյութ դարձավ» (էջ 89):

Վ. Տատրյանն առանձնակի նշում է, որ դա առաջին քաղաքական առճակատումն էր, որով հայ երեսփոխանները մերթ փաղաքշելով, մերթ սաստելով և մերթ էլ երկիմաստ կամ թաքուն արտահայտություններով իրենց թուրք պաշտոնակիցներին հրապարակավ ներկայացրին Մեծ եղեռնի առնչությամբ գործադրված ոճրագործությունները: Ի դեպ՝ այդ ժամանակվա ներքին գործերի թուրք նախարարը նույնպես հարկադրված եղավ բացատրություններ տալու համար անձամբ ներկայանալ խորհրդարան:

Օսմանյան խորհրդարանի 9-ը հայ պատգամավորներից նստաշրջանին մասնակցում էին 6-ը. Կոզանից (Սիս)՝ Մաթևոս Նալբանդյանը, Իզմիրից՝ Օննիկ Իհսանը, Կարինից՝ Հովսեփ Մադաթյանը, Հալեպից՝ Արթին Բոշկեզենյանը, Մարաշից՝ Հակոբ Խրլակյանը, Սեբաստիայից՝ Տիգրան Պարսամյանը: Նիստին չէին մասնակցում Վռամյանը (Օնիկ Դերձակյան), Գր. Զոհրապը և Վարդգեսը, որոնք զոհ էին դարձել հայոց ցեղասպանությանը: Նստաշրջանին չէր մասնակցում նաև Տարոնի պատգամավոր, հենց նոր իր մահկանացուն կնքած Գ.Տեր-Կարապետյանը:Իսկ Տարոնից մյուս երեսփոխան Վահան Փափազյանը հեռացել էր երկրից: Նստաշրջանին չէր մասնակցում նաև Պոլսի պատգամավոր Պետրոս Հալաճյանը: Այսինքն՝ մասնակիցների թվում չէին այն հայ պատգամավորները, ում խոսքը մեծ կշիռ ուներ ոչ միայն հայերի, այլև ամբողջ պատգամավորական կազմի, կայսրության տարբեր ազգերի հանրության համար, և, թերևս, հենց այդ պատճառով էլ նրանք յաթաղանի առաջին զոհերն էին դարձել:

Իսկ թե ինչպե՞ս կենդանի մնացին մյուս պատգամավորները, այդ մասին նոյեմբերի 18-ի նիստում Արթին Բոշկեզենյանն ասաց. «...անիծյալ պարանը մեր բոլորի լեզուն կապել էր: Դաժան կախաղանը դամոկլյան սրի նման ցցված էր մեր աչքերի առջև: Ահա այս պատճառով ես էլ լռելուս համար... կարծում եմ թե մեղսակից եմ»: Այո՛, նրանց փրկել էր լռությունը, արհավիրքի հանդեպ աչք փակելը, իսկ ոմանց էլ (Մ.Նալբանդյան)՝ մեծագումար կաշառքը: Հավանաբար ջարդարարները կենդանի մնացած հայ պատգամավորներից ըմբոստ կեցվածք չէին սպասում: Իսկ խորհրդարանում անմռունչ հայեր ունենալն ու պաշտոնական քաղաքականության հանդեպ նրանց չեզոքությունը շատ էր անհրաժեշտ երիտթուրք պարագլուխներին:

Բայց, ինչպես ասում են, լինում են պահեր, երբ լռել այլևս հնարավոր չէ, երբ լռելը հավասարազոր է հանցանքի, և նա՝ լռողը, ընդդիմա-

նում է, բողոքում: Այդպես եղավ նաև կենդանի մնացած հայ պատգամավորների հետ: Մանավանդ որ խորհրդարանի մթնոլորտը, ընդդիմության եռանդուն ընդվզումը, հպատակ ժողովուրդների ներկայացուցիչների հարձակողական կեցվածքը դրա համար բարենպաստ պայմաններ էին ստեղծել:

Խորհրդարանի նոյեմբերի 4-ի նիստում առաջինը քննարկման դրվեց Իզմիրից հույն պատգամավոր Էմանուել Էմանուելիդիի առաջարկությունը, ըստ որի խարհրդարանի քննարկման առաջնակարգ հարցը պետք է դառնա Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան կառավարության վարքագիծը: Իսկ Տրապիզոնի պատգամավոր Հաֆըզ Մեհմեդ Էմինը պահանջեց, որպեսզի քննարկվեն թուրքական կառավարության այն փաստաթղթերը, որոնք առնչվում են պատերազմին օսմանյան կառավարության մասնակցությանը:

Հույն պատգամավոր Է. Էմանուելիդիի առաջարկությունը բովանդակում էր հետևյալ պատճառաբանությունները.

- Հայ ազգին պատկանելուց բացի որևէ այլ հանցանք չունեցող մեկ միլիոն հոգի, առանց բացառելու կանանց ու երեխաներին, սպանվեցին ու ոչնչացվեցին:
- 250 հազար հույն արտաքսվեց կայսրությունից, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց:
- Պատերազմի ավարտից հետո ևս 550 հազար հույն Սև ծովի ափամերձ շրջաններում, Չանաքկալեի (Դարդանելի), Մարմարա ծովի և կղզիների գոտիներում սպանվեցին, ոչնչացվեցին, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց և կողոպտվեց:
- Երեսփոխաններ Զոհրապն ու Վարդգեսը գազանաբար սպանվեցին:

Այս հարցապնդումները դեռ հոկտեմբերի վերջերին ձևակերպել էր արաբ պատգամավոր Ֆուադը:

Ֆուադի առաջարկությունների 5-րդ կետով նշվում էր, որ օսմանյան կառավարությունը «Մարդկային և իրավական կանոնների դեմ լրիվ մեղանչող և, հատկապես, մեր Սահմանադրության ոգին ու բացահայտ նկարագիրը ոտնակոխ անող ժամանակավոր օրենքներ, հրամաններ ու կանոնադրություններ հրապարակելով երկիրը վերածեց ողբերգության թատերաբեմի» (էջ 9): Իսկ 10-րդ կետով նշվում էր. «Երկրի ներսում քաոս ու խառնակություն ստեղծելով, մարդկանց կյանքը, սեփականությունը և պատիվը վստահեցին իրենց իսկ օժանդակությունը

ստացող մի շարք չեթեներին և այդ միջոցով աղետալի ոճիրների մասնակից դարձան» (էջ 10):

Խնդրի նախապատմությունը հետևյալն էր: Ինչպես հայտնի է՝ իշխանության գլուխ անցնելուց հետո իթթիհատականները կայսրությունում պաշարողական դրություն հայտարարեցին, իսկ երկրորդ անգամ 1913-ին կառավարման ղեկին տիրանալուց հետո՝ իշխանության թե՛ կենտրոնական, թե՛ տեղական մարմինները մաքրեցին բոլոր այն տարրերից, ովքեր երիտթուրքական կուսակցության անդամ չէին կամ այդ կուսակցությանը չէին համակրում: Դառնալով ռազմական նախարար՝ Էնվերը մի հրամանով զորացրեց 1100 փորձառու սպաների: Հիմնականում իթթիհատական էր նաև խորհրդարանը: Այսուհանդերձ՝ Թալեաթն ու նրա համախոհները չհամարձակվեցին բռնագաղթին ու բնաջնջմանն առնչվող օրենքներն անցկացնել խորհրդարանով: Նրանց հաջողվեց 1915 թ. փետրվարի 20-ին ժամանակավորապես՝ վեց ամսով, դադարեցնել խորհրդարանի աշխատանքը: Երիտթուրք գաղտնի կոմիտեն սկսեց, մի կողմից՝ մասնակի ջարդերը Զեյթունում, Մարաշում, Պոլսում, Սասունում, իսկ մյուս կողմից՝ Սայիդ Հալիմին հարկադրեց ստորագրել տեղահանության մասին ժամանակավոր օրենքը (1915 թ. մայիսի 14/27-ին): Եվ այդ արվեց օսմանյան սահմանադրության մի շարք կետերի կոպիտ խախտման միջոցով: Համաձայն սահմանադրության՝ կառավարության ընդունած ժամանակավոր օրենքներն անմիջապես պետք է ներկայացվեին խորհրդարանի հաստատմանը: Սակայն իթթիհատականներն այդպես չվարվեցին: Խորհրդարանն աշխատանքը վերսկսեց 1915 թ. սեպտեմբերի 28-ին, երբ հայերի բռնագաղթը հիմնականում ավարտված էր, Հայաստանը հայերից դատարկված, չնայած բռնագաղթված հայության բնաջնջումը դեռ ընթացքի մեջ էր: Ահա թե ինչու տեղահանության մասին ժամանակավոր օրենքը խորհրդարանի հաստատմանը չներկայացվեց ո՛չ 1915 թ. սեպտեմբերին և ո՛չ էլ 1916-17 թվերին: Այն հաստատման ներկայացվեց միայն պատերազմում պարտվելուց հետո՝ 1918 թ. նոյեմբերին, այն էլ ոչ թե կառավարության, այլ առանձին պատգամավորների կողմից: Խորհրդարանը, բնականաբար, մերժեց այդ ժամանակավոր օրենքի հաստատումը, ոչ միայն այն պատճառով, որ հայերի բռնագաղթն ու բնաջնջումը վաղուց ավարտվել էր, այլև այն, որ կառավարությանը սպասում էին դժվար բանակցություններ՝ հաղթող տերությունների հետ:

Տարագրության մասին ժամանակավոր օրենքը խորհրդարանի

հաստատմանը չներկայացնելու Թալեաթի դիտավորությունը հետևանք էր նաև այն բանի, որ այդ օրենքի ու նրա գործադրման ձևերի ու միջոցների միջև ընդհանուր գրեթե ոչինչ չկար:

«Այդ օրենքի, առհասարակ թաքուն մնացած 4-րդ հոդվածը սահմանում էր, որ տեղահանությունը պետք է իրականացվեր ռազմական նախարարության մարմինների կողմից, մինչդեռ այդ գործողությունները գրեթե ամբողջությամբ ի կատար ածվեցին ներքին գործերի նախարարության և նրա ենթակա՝ մյուս բոլոր մարմինների կողմից, հատկապես նահանգային ոստիկանության (ժանդարմերիայի), գաղտնի ոստիկանության և բանտերում եղող հանցագործների ոհմակներով, որոնք, Հատուկ կազմակերպության պիտակի տակ, գլխավոր ջարդարարները հանդիսացան: Բնաջնջման այդ գործողություններին լծված էր նաև կուսակալությունների վարչությունների համակարգը՝ իր ստորադաս բաժանմունքներով» (էջ 10):

Արաբ պատգամավոր Ֆուադը կարողացավ իր առաջարկությունները ներկայացնել այնպես, որ դրանք ընդունելի լինեին խորհրդարանի թուրք մեծամասնության կողմից, նախ՝ դրանցում օգտագործված չէին «հայկական ջարդ, սպանդ, եղեռնագործություն» և այլ բառեր, իսկ քննարկումն էլ չէր սահմանափակվելու ջարդերի շրջանակում, այլ ընդգրկելու էր նաև ներթուրքական-միջկուսակցական պայքարին առնչվող հարցերը:

Առաջադրված խնդիրներից գլխավորը հետևյալ էր. եթե կառավարության անդամները գործադրված հանցագործությունների համար պատասխանատու ճանաչվեին, ո՞ր դատարանի՝ Բարձրագույն ատյանի՞, թե՞ Ռազմական արտակարգ դատարանի կողմից էին դատվելու: Խորհրդարանի իթթիհատական մեծամասնությունը փորձում էր անցկացնել առաջին տարբերակը, քանի որ այն կազմված էր իրենց համախոհներից և գործակիցներից: Այնուամենայնիվ խորհրդարանը որոշեց այդ խնդիրների քննարկումը հանձնել Ռազմական արտակարգ դատարաններին:

Պատասխանելով իթթիհատական կառավարության հասցեին սուր քննադատությանը՝ նախկին իթթիհատական, հետպատերազմյան առաջին կառավարության ներքին գործերի նախարար Ֆեթիին նշեց, որ զոհերը միայն հույներն ու հայերը չէին, այլ նաև՝ թուրքերը: Նա խոստացավ, որ կառավարությանը «... իր ուժերը եղածի չափով պիտի վերացնի մինչև այժմ եղած անարդարությունները, աքսորվածներին պիտի

վերադարձնի իրենց բնակավայրերը, հնարավորին չափով պիտի հատուցի նյութական կորուստները: Սրանք,- ասաց նա,- կառավարության գլխավոր նպատակներն են, և այն արդեն գործի է անցել» (էջ 13):

Ապա կարդացվեց Կոզանի (Սիս) պատգամավոր Մ. Նալբանդյանի տեղեկագիրը, որը ստորագրել էին նաև Խրլաքյանը, Բոշկեզենյանը, Մաթաղաթյանը և Պարսամյանը: Կառավարության առաջ հարց էր բարձրացվում, թե նա ի՞նչ դիրքորոշում ունի տարագրության (14/27 մայիսի 1915 թ.) և լքյալ գույքերի (13/26 սեպտեմբերի 1915 թ.) մասին օրենքների հանդեպ, և նա «պատճառած ողբերգությունների, մարած անթիվ օջախների, ոտնահարված պատիվների, բռնագրավված անհամար ունեցվածքի ու հարստությունների, ստվարաթիվ որբերի և այրիների մասին ի՞նչ է մտածում» (էջ 13):

Իր ճառում Մաթևոս Նալբանդյանն ասաց. «Այստեղ ավելորդ եմ համարում անդրադառնալ այն պայմաններին, որոնց ժողովուրդը ենթարկվեց նշված օրենքների գործադրման հետևանքով... հարկ չկա այս ամենը մոլեռանդության նման բաների վերագրելու... Իմ կարծիքով, առանց կրոնական և ցեղային խտրականության, օջախներ են մարել, և կրակի ծուխը դեռևս բարձրանում է... Ես գիտեմ, որ օսմանցու անունը մրոտող այս տգեղ իրադարձությունում թե՛ պատմականորեն, թե՛ ներկայիս և թե՛ ապագայի ընբռնումով հանցագործությանն անմասն մնացողների թիվը շատ փոքր է»:

Պատասխան խոսքով հանդես եկավ ներքին գործոց նախարար Ֆեթիի բեյը: Նշելով, թե ներկա պայմաններում կառավարությունը միայն մի բան կարող է կատարել՝ տարագրյալներին իրենց բնակավայրերը վերադարձնել, նա ասաց. «Դրա գործադրման եղանակը կա, և այդ եղանակը ձեր կարծածի չափ դյուրին չէ:

Տարագրված մարդիկ կարողանալո՞ւ են իրենց վերադառնալիք վայրերում այսօր օթևան գտնել, տաք կերակուր ուտել... Արդարև, կառավարությունը այս գործն աստիճանաբար կատարելու կողմնակից է, և պետք է աստիճանաբար անել... քանդված գյուղերը նորոգելը և դրանք կրկին բնակելի վիճակի վերածելը կառավարության և որևէ ուրիշ մեկի կարողության սահմաններից դուրս են: Ուստի նորոգության այս խնդիրը պետք է թողնել ժամանակին:

Գալով անիրավությունների, բռնարարքների և զուլումի հարցին, եթե որևէ մեկը, որևէ պաշտոնյա այս իմաստով հանցագործ նկատվի և եթե մենք նրա մասին արդեն դատաքննական թղթածրար ունենք, ես

ձեզ վստահեցնում եմ, որ նմաններին մենք դատելու ենք և արդեն դատում ենք...» (էջ 15):

Այնուհետև, նա ավելացրեց. «Պարոննե՛ր, այս ժամանակավոր օրենքը մեր ներկա ժամանակին անհարիր է, և ես բարձր ժողովից խնդրում եմ, որ որպես հրատապ խնդիր այս օրենքը ժամ առաջ չեղյալ համարենք»: Իսկ երեսփոխան Ֆուադ Բեյը նշեց, որ «դրանից ավելի հոռի և մեր դարի ոգուն հակոտնյա ուրիշ շատ օրենքներ կան», որոնք բոլորն էլ պետք է չեղյալ հայտարարվեն:

Արթին Բոշքեզենյանի կարծիքով բավարար չէ տարագրության մասին օրենքի լոկ չեղյալ հայտարարելը: Սուլթանի հեղինակությունը պահպանելու համար իթթիհատական հեղաշրջումից հետո Սահմանադրության մեջ կետ մտցվեց, որով նա իրավունք ուներ պետության համար վտանգավոր անձանց աքսորել: «Բայց ինչի՞ հանգեցրեց 1915-ի ժամանակավոր օրենքը: Ոչ թե առանձին անձանց երկրից արտաքսելու, այլ հարկ եղած դեպքում գյուղերը, ավանները, քաղաքները տեղահանանելու մի տեղից մի այլ տեղ քշելու իրավասություն էր տրված: Եվ ո՞ւմ: Հրամանատարի՞ն, որ երբեմն հարյուրապետ, թե հազարապետ էր... Սա մի դանակ է, կացին, որը շատ չարիքների պատճառ է եղել: Մենք այս դանակը, այս կացինը բթացնելով բռնարարքների հասցրած վնասներն ամոքել չենք կարող. սա մի սոսկալի դանակ է, որի վրա տակավին անմեղների արյունն է, սա սոսկալի մի կացին է, որի քանդած, ավիրած շեներին հաշիվ չկա: Այդ երեք տողանոց հոդվածն ահավոր բան է»: Խոսքը, մասնավորապես, տարագրության օրենքի 2-րդ հոդվածի մասին էր, որով զինվորական հրամանատարներին իրավունք էր վերապահվում հատկապես գործողությունների դիտավորության կասկածի դեպքում իսկ աքսորել կամ տեղահանել անհատներին, նաև համայնքներն ու գյուղերը: Այսինքն լոկ ահազանգ ստանալու հիման վրա, առանց քննության ու պարզաբանման, կարող էր տրվել տեղահանության հրաման:

Ա. Բոշքեզենյանը գտնում էր. «Հարկ է պատժել բոլոր նրանց, ովքեր, ապավինելով օրենքին, երկիրն ավերեցին... Նաև պետք է պատժել այն մարդկանց, ովքեր այդ օրենքը ոճրային գիտակցությամբ հղացան ու գործադրեցին...» (էջ 16-17):

Մեհմեդ էմին (Տրապիզոնի երեսփոխան).- Այո՛, այս օրենքի կիրառման ընթացքում երկրում մի շարք ոճիրներ գործվեցին... Ես արդեն հայտարարել եմ, որ մինչև կառավարությունը չխոստանա, որ կապահովի երկրում կատարված բոլոր ոճիրների հետաքննությունը և կձեռնարկի պատասխանատուներին պատժելու գործը, ես այդ կառավարությանը վստահության քվե տալ չեմ կարող: Այո՛, իրոք երկրում գործված ոճիրների հետաքննությունը և պատասխանատուներին պատժելը օրինականության և արդարության պահանջն է, և թե՛ այս ժողովը և թե՛ ազգը լրիվ համաձայն են այդ պահանջին... Այո, պարոննե՛ր, ես էլ եմ ասում, որ մեր կառավարական մարդիկ շատ ընտանիքներ, կանանցով ու երեխաներով, ջարդեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին... Որքա՞ն հայեր են այսօր պակասում: Եթե նկատի ունենաք նրանց նախապատերազմական ժամանակի 1.200.000 թիվը, որից պետք է հանել վերապրողների թիվը, մնացածները բոլորը ոչնչացվեցին և սպանվեցին, նրանց ունեցվածքն էլ ավարի տրվեց: Այս հարցում ոչ մի կասկած լինել չի կարող: Ես էլ եմ ցանկանում և պահանջում, որ հանցավորները պատժվեն:

Այս այսպես է, սակայն դրանով հանդերձ չեմ կարող ընդունել էմանուելիիդի էֆենդու հայտարարությունը, թե կոտորվեցին լոկ այն բանի համար, որ հայ էին և կարծում եմ, որ հայ պաշտոնակիցներս ևս այդ չեն ընդունի:

Արթին Բոշքեզենյան.- Ապա ինչո՞ւ կոտորվեցին:

Մեհմեդ էմին.- Իմ բուն նպատակը էմանուելիդի էֆենդու կողմից հարցը չափազանցված ներկայացնելու մասին նշելն էր: Նա նաև չհիշեց արաբների դեմ արձակված մահապատիժները, ինչպես նաև թուրքերի դեմ եղած անիրավությունները» (էջ 17-18):

Խորհրդարանը անվավեր ճանաչեց տարագրության մասին օրենքը:

Խորհրդարանի նոյեմբերի 18-ի առավոտյան նիստում նորից հանդես եկավ Արթին Բոշքեզենյանը: Այդ ելույթն այնքան ազդեցիկ էր ու փաստարկներով ցնցող, որ արտաքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆն առաջարկեց նիստը դռնփակ անցկացնել:

Հայ երեսփոխանն իր ելույթում ասաց. «Պարոննե՛ր, դուք գիտեք, որ թուրք ազգն այսօր քաղաքական առումով քաղաքակիրթ աշխարհի առջև ամբաստանյալի վիճակում է (ձայներ. «Աստված մի արասցե»)... Այսօր մենք կանգնած ենք մի մեծ ոճրի առջև, որն օսմանյան պատմության ամենատխուր և ամենաարյունալի էջն է: Երկինք ու երկիր դղրդացնող այդ վիթխարի ոճիրը, ինչպես գիտեք, հայկական կոտորածը, հայկական ողբերգությունն է: Սրա համար է թուրք ազգն ամբաստանվում, սակայն իրական ամբաստանյալը թուրք ազգը չէ, այլ թուրք

կառավարությունը, նախկին վարչակազմը (ձայներ. «Բրավո»): Բայց, հարց է առաջանում, թե ազգն ի՞նչ է, կառավարությունն ի՞նչ. միթե երկուսը նույն բանը չեն: Այս ժողովում քանիցս ասվեց, որ ազգ և կառավարություն նույն են: Ոչ միայն այս ժողովում, այլև Եվրոպայի ամենաականավոր մարդկանց բերանից էլ նույն խոսքը ելավ: ...Ես պնդում եմ, որ թուրք ազգին ամբաստանելու տեղիք տվող այդ հսկա ոճիրը նախկին վարչակազմի, ավելի ճիշտ՝ չեթեական վարչության կողմից է կատարվել...

Ես ճանաչում եմ շատ ազնիվ ու բարեմիտ, ինչպես նաև մարդասեր, աստվածավախ և բարեգործ թուրքերի, որոնք այդ ողբերգության ընթացքում ինձ հետ արյուն-արտասուք են թափել և անիծել են այդ չարագործներին (ձայներ. «Բրավո»):

... Սակայն կարելի՞ է ասել, որ ժողովրդից ոչ մեկը չմասնակցեց այս չարագործությանը. մի շարք տեղերում խուժանը և ստորին դասակարգի մարդիկ մասնկցեցին կառավարության կողմից ուղարկված չեթեների ոճրագործություններին: Սրանք իրենց արարքների հետևանքները ընկալելու ու գնահատելու անկարող հասարակ մահկանացու էին: Երբ ոչխարի հոտը ճահիճ է ընկնում, դրա հանցավորը ոչխարնե՞ր են, թե՞ դրանց առաջնորդող հովիվը: Ես պնդում եմ, որ եթե մի շարք տեղերում սրանք ոճիրներին մասնակցել են, հանցավորը կառավարական պաշտոնյաներն են:

Պարոննե՛ր, ամբողջ աշխարհում, նույնիսկ ամենաքաղաքակիրթ երկրներում, ստորին դասակարգի մարդկանց սրտի խորքերում նիրհում են հրեշամիտ մոլուցքներ: Այդ մոլուցքները թմբիրի մեջ են: Եթե ազդեցիկ մեկը չգա ու չգրգռի, այդ կատաղությունը թմբիրի մեջ կմնա, բայց երբ անպատիվ մարդիկ գան և հրահրեն, ու վայրագ բնազդներն արթնանան, այն ժամանակ խառնակությունները և սադրանքները թափ կառնեն, և կպայթի փոթորիկը... Այդ մարդիկ ինչո՞ւ են նման բաներ հրահրում: Քանի որ բնականոն ու խաղաղ պայմանները նրանց գործին ի նպաստ չեն... Անպատիվ մարդիկ խառնակություններ են փնտրում, նրանք ջուրը պղտորում են, որպեսզի ձուկ որսան...

Աշխարհում դավանանքի տեսակներ կան, կրոնների ու լեզուների տարբերություններ կան... Քանի խուժանը չհասկանա, որ այդ այլազանությունները չպետք է արգելակեն մարդկանց մեջ եղբայրության զգացմունքների ծլարձակումը... մարդկությունը դատապարտված է թիրախ լինելու այդ հրեշավոր մոլուցքներին» (էջ 21-23):

Հռետորն այնուհետև նշում է այն պաշտոնատար անձանց անունները, ովքեր, արհամարհելով կենտրոնից ստացած ջարդարար հրամանները, գործել են խղճի մտոք, իրենց ձեռքերը չեն թաթախել անմեղ մարդկանց արյան մեջ: «Սակայն,- ավելացնում է նա,- նմանների թիվը սահմանափակ է, մյուս կողմից մեծ է թիվն այն կուսակալների ու փոխկուսակալների, որոնք դաժանաբար վարվեցին:

Մեհմեդ Էմին.- Դրանց թիվն էլ սահմանափակ է:

Բոշքեզենյան.- Դրանց թիվը սահմանափակ չէ և ձեր իմացածից շատ ավելի է: Եթե նրանց անունները կարդամ, թերևս օրը երեկոյանա:

... Ես միայն այսքանը գիտեմ, որ իսկական հայ բնօրրան և հայրենիք՝ հայի բույն հանդիսացող մի քանի նահանգներ կան, որտեղ ներկայումս ոչ միայն հայ, այլև որևէ քրիստոնյա ասորու կամ քաղդեացու չի կարելի գտնել: 70-80 հազար հայ ունեցող թշվառ նահանգում անհնար է գտնել 70-80 հայ»...

«Մենք չպետք է հաշտության բանակցություններին անպատրաստ գնանք, այլ հավատ ներշնչենք, որ մեզ օտար չէ արդարության գաղափարը և արդարադատության գործընթացը: Հարկ է որոշ քայլեր կատարել, օրինակ՝ բռնել այդ մարդկանց և ... պատժել»:

Հանցագործների նկատմամբ արդարադատության գործադրումը, ինչպես նշում է Բոշքեզենյանը, նաև խնդիր ունի փաստել մի շարք թուրքերի կողմից ոճիրներին մասնակից չլինելը:

«Միայն այս հրեշներին պատժելով՝ գործն ավարտել չի կարելի: Պետք է պատժել նաև նրանց թիկունքին կանգնած մի շարք ստոր և սրիկա անձանց և վնասը պետք է հատուցել: Իրոք՝ ապրանքի նման այստեղ-այնտեղ բաժանված անարատ և գեղեցիկ կույսեր կան, նրանցից ոմանք նույնիսկ այստեղ՝ Պոլսում մի շարք անձանց մոտ են գտնվում (աղմուկ, իրարանցում)» (էջ 26-27):

Ա. Բոշքեզենյանի ելույթը մի քանի անգամ ընդհատում է Մուշից պատգամավոր Իլյաս Սամին՝ ճգնելով հավաստել, թե հանցագործությունների կատարելուց զերծ չեն նաև հայերը: Ահա նրա արձակած ռեպլիկներից մեկը.

«Իրականությունը մի՛ ծածկիր: Այսօր իմ հայրենիքն արյան ու թշվառության մեջ խեղդել տվողը ահա՝ քո այդ ընկեր ասած Վանի երեսփոխանն է (ակնարկում է Վահան Փափազյանին)»:

Ի հակադրության այդ և նման մի քանի այլ բացականչությունների Ա. Բոշքեզենյանը առաջ է քաշում իր միանգամայն հստակ ու գործնա-

կան առաջարկությունները.

1) Հանցապարտ պաշտոնատարներին և անհատներին պատժելու եղանակների հաստատում, 2) անհատ անձանց մոտ գտնվող հափշտակված կանանց ու որբերի հավաքում, 3) կառավարության կողմից նրանց սննդի կազմակերպում, 4) նրանց ունեցվածքի ու կայքի վերադարձ, 5) նրանց կրած վնասների հատուցում:

«Ինչպես մարդկանց և անհատների գլխին են աղետներ ու դժբախտություններ գալիս,- շարունակեց նա,- նմանապես ազգերը ևս կարող են ենթարկվել աղետների: Արդարև կա մի մեծ ազգ, որի գլխին շատ աղետներ պայթեցին: Թեև նա աղետների մագիլների մեջ ընկավ, բայց չպարտվեց՝ ապավինելով աղետների հետևանքներից ձերբազատվելու հույսին»:

Ապա հանդես եկավ Էմանուել Էմանուելիդին, որը բացորոշ հայտարարեց, թե ինքը Թեֆիկ փաշայի նորակազմ կառավարությանը վստահության քվե չի տա, քանի որ չի վստահում հպատակ ազգերի հանդեպ ոչ խտրական քաղաքականություն վարելու նրա հայտարարությանը: Նման հայտարարությունները հարյուրավոր տարիների պատմություն ունեն: Դրա փոխարեն կառավարական ծրագրերում խոսք չկա ազգերի իրավունքների, նրանց իրավական դրության մասին: Կառավարությունը լոկ խոսում է վնասների հատուցման մասին: Դեռևս որևէ հատուցում ոչ միայն չի եղել, այլ, ընդհակառակը, կողոպտված գույքը կառավարության աչքի առջև բռնագրվված են մնում:

Կրթության նախարար Ռիզա Թեֆիկը, ընդունելով ազգային հարցում նախորդ հռետորի արտահայտած կարծիքը, գտավ, որ այդ հարցի լուծումը հրատապ խնդիր է:

Դրան պետական խորհրդի նախագահ Շերիֆ փաշան պատասխանեց, թե նախ պետք է պատվով (այսինքն՝ շահեկան) դուրս գալ խաղաղության բանակցություններից և ապա ապահովել «երկրին պատկանող տարրերի և տարբեր ազգությունների իրավունքները»:

Այս առաջարկը մասամբ պաշտպանեց Մեհմեդ Էմինը: Նա գտավ, որ իրոք նախկին կառավարությունները, մասնավորապես Թալեաթի կառավարությունը վատ գործեր շատ է կատարել, և իրենք այդ առնչությամբ չորս տարի լռել են և լռել են ճշմարիտ տեղեկատվության բացակայության հետևանքով: Իսկ այժմ այդ խնդրում շտապելը վտանգավոր է:

«Նկատում եմ, որ մեր գործընկերները, հույն հայրենակիցները և հայ

խորհրդարանականները մեծ տարողությամբ արդարություն են պահանջում և իրավունք ունեն... Եկեք նրանց պահանջները քննենք և հետամնացություն չդրսևորենք... Սա ազգային երանգ ունեցող խնդիր է:

Հասան Ֆեհմի (Սինոպի պատգամավորը).- Խոսքերդ հետ առ:

Մեհմեդ Էմին.- Ես խոսքերս հետ չեմ առնի, դա իմ անձնական կարծիքն է» (էջ 30-31):

Խորհրդարանում թուրք պատգամավորների միջև նման սուր երկխոսություններ ու դիմակայություններ հաճախակի էին տեղի ունենում: Դրանք արտահայտում էին խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի հակոտնյա շահերը:

Օրինակ, Հասան Ֆեհմին հանրահայտ իթթիհատական ջարդարար էր, այդ կուսակցության Կաստամոնույի նախկին պատասխանատու քարտուղարը: Նրա ջանքերով պաշտոնազրկվեց տեղի կուսակալ Ռեշիդ փաշան, որին նա երիտթուրք լիդերներին ներկայացրեց որպես «հայերի պաշտպան գյավուր վալի»: Եվ այդ միայն նրա համար, որ Ռեշիդ փաշան հրաժարվեց կոտորել հայերին, հայտարարելով. «ձեռքերս արյունով չեմ ներկի»: Նոր նշանակված վալու՝ Աբֆի աջակցությամբ, որը միաժամանակ Անկարայի կուսակալն էր, Հ. Ֆեհմին ոչ միայն տարագրեց Կաստամոնույի հայությանը, այլև յուրացրեց նրանց ունեցվածքը: Ռազմական դատարանի 1920 թ. հունվարի 8-ի վճռում, որով նա դատապարտվում էր 10 տարվա բանտարկության, գրված է, որ նա օր ու գիշեր մտնում էր «լքյալ գույքերով լեցուն խանութները, առարկաները լցնում էր պարկերն ու կողովները և տանում»: Նա գործում էր համարձակ, քանի որ «կուսակալից ավելի ազդեցիկ էր» (էջ 26):

Սեբաստացի երեսփոխան, իթթիհատ կուսակցության նախկին անդամ Տիգրան Պարսամյանը նշելով եղեռնից, պատերազմից փրկված ողջ մնացածների ողբալի վիճակի մասին ասաց.

«Պարոննե՛ր, դրանց մեծ մասը կանայք ու երեխաներ են, նրանց վիճակը սոսկ թշվառությունն է, նրանք, ասեք, տակավին հավերժ դատապարտված են... Զինադադար հայտարարվեց, սակայն... տակավին նրանք շղթայված են մնում, սրա կամ նրա տանը, այս կամ այն անկյունում, սրա կամ նրա սպասավորի վիճակում քարշ են տալիս իրենց գոյությունը... Հարցը ընթացիկ հրամաններով չի լուծվի, կլուծվի այն ժամանակ, երբ մեծ հատկացումները լինեն, խիստ հրամանները տրվեն, ... Արդարև, ինչպես որ հայ ազգի պատիվը, այնպես էլ նրա հարստությունը սպառվեց (Ձայներ. «Պատիվը չի սպառվել)» (էջ 32):

3581

ՊՐՈՍԱՐԱՆ БИБЛИОТЕКА

Ապա նա անդրադարձավ Վանի երեսփոխան Վռամյանի սպանության խնդրին:

Վանի վիլայեթն ուներ մի շարք առանձնահատկություններ, որոնք էլ ձևավորում էին տեղի հայկական կազմակերպությունների գործունեության բովանդակությունը: Այն սահմանամերձ էր, գտնվում էր Պարսկաստանի ու Ռուսաստանի հետ կապերի հանգույցում, վիլայեթի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին: Վանում գործում էին շատ ակտիվ իթթիհատական ակումբ, ինչպես նաև քրդական աշիրեթություններ ու ավազակախմբեր:

Վանի իրադարձությունների վրա վճռորոշ ազդեցություն ունեցան «պատերազմական հարկատվությունը», որն առանձնակի դաժանությամբ կիրառվում էր հայերի նկատմամբ ու նաև զորահավաքի գազանային եղանակներն ու հայ զինվորների հանդեպ խտրականությունը, բարոյականության ոչ մի չափանիշ չճանաչող գործողությունները, որոնց ուղղակի հետևանքն էր դասալքությունը, ինչը, իր հերթին, զուգակցվում էր հայ բնակչության հանդեպ բռնությունների, սանձարձակ վերաբերմունքի, սպանությունների ու թալանի բազմաթիվ փաստերով: Բնականաբար նման վիճակն առիթ տվեց հայերի ակտիվ կամ պասիվ ընդդիմության, նրանց կողմից պարտիզանական կռվի ծավալման: Սակայն հայերի այդ գործողությունները չէին, որ թուրքական իշխանություններին մղեցին ջարդարարության, քանի որ «իթթիհատական ցեղասպան ծրագրերն իրենց սաղմնային վիճակում գոյություն ունեին արդեն 1914-ի ամռանն ու աշնանը և ավելի բյուրեղացան նոյեմբերից հետո, երբ Թուրքիան Գերմանիայի հրահրումներով... պատերազմի մեջ մտավ» (էջ 51):

Էրզրումում գերմանական փոխհյուպատոս Շեոյբներ Ռիխտերը 1915-ի մայիսի 15-ի Պոլիս ուղարկած տեղեկագրի մեջ նշում էր, որ Վանի «խռովությունների արտաքին դրդապատճառը... մի շարք ականավոր հայերի, հատկապես Իշխանի և երեսփոխան Վռամյանի, որոնք հայերի շրջանում մեծ հարգանք են վայելում, ձերբակալությունն ու հետագա սպանությունն է...»:[1] Իրականում այն հայերի հանդեպ թուրքերի սխալ քաղաքականության հետևանք էր:

Այդ «սխալի» մասին Վանի թուրք պատգամավորներից մեկը գրեց.

[1] Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվ, Բոնն, A. A. Botschaft Konstantinopel K. 168, թիվ 9 (3224):

«Իթթիհատը գաղտագողի գրգռում էր ժողովրդին, որպեսզի հարձակվեն հայերի վրա»:[2]

Վ.Տատրյանը բացարձակապես իրավացի է նշելով, թե հայերի ոչ մի գործողություն և բոլոր գործողությունները միասին վերցրած հիմք չէին կարող լինել կոտորածների համար: Նա բերում է սիոնիստների օրինակը, որոնք հազարներով թուրքերի դեմ կռվեցին Դարդանելում և ապա կազմեցին հրեական զորագունդ, որը կարևոր դեր խաղաց Պաղեստինի ազատագրության գործում: Հրեաները, հօգուտ Անգլիայի, լրտեսական լայն ցանց էին ստեղծել կայսրությունում, խափանարար (դիվերսիոն) գործունեություն ծավալել: «Թալեաթի կուսակցությունն ու կառավարությունն այս ամենին իրազեկ էր, բայց Թուրքիայի հրեաների դեմ ո՛չ զանգվածային հալածանք և ո՛չ էլ ջարդ չգործադրեցին: Նույնը կարելի է ասել քրդերի առնչությամբ: Ուրեմն անհնար է չհանգել այն եզրակացությանը, որ հայկական ցեղասպանությունն այնքան էլ կապ չուներ պատերազմի ժամանակ տեղի ունեցած պատահարների հետ, պարագայական բնույթի չէր և պատերազմին չառնչվող անկախ, խոր արմատ ունեցող այլ շարժառիթներին ենթակա գործընթաց էր» (էջ 53):

Ահա այս տագնապի մղումով Վռամյանը դիմեց Վանի երիտասարդությանը. «Մենք չպետք է սկսենք, մենք չպետք է ազդանշան տանք, որովհետև մենք ապստամբներ չենք, և մի ապստամբություն ինքնին բավական է ամբողջ հայկական բարձրավանդակը հսկայական գերեզմանոցի վերածելու:

...Մենք համոզված ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր զիջումների, մի օր ահարկու փոթորիկ է պայթելու մեր գլխին: Այդ օրերը մոտեցել են... մեր ամբողջ նպատակն է քիչ զոհերով ազատվել այս վիթխարի հարվածից»:[3]

Արտակ Դարբինյանը նկատում է, որ Վանում հասունացող իրադարձությունների պայմաններում թե՛ Արամ Մանուկյանը և թե՛ Վռամյանը «...շատ ջանք էին թափում, որ ինչ-որ չափով գոհացում տային կառավարության պահանջին»:[4]

Սակայն այդ չխանգարեց, որ թե՛ Արամը և թե՛ Իշխանն ու Վռամյանը դառնային Ձեյթի թիրախը: Ավստրիայի ռազմական գործակալ Պո-

[2] Jbrahim Rsrasin Hofiralari. Jeni Jstiklal, 21 ապրիլի 1965, թիվ 193:

[3] «Հայրենիք» Բ տարի, թիվ 8, հունիս, 1924, էջ 92:

[4] Արամ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 260: Avras, "Tarihi Hakikatler..."

միանկովսկին Թահիր Ջևդեթին անվանում է «Մարդու կերպարանքով իսկական ճիվաղ»:[5]

Ամերիկյան ներկայացուցիչ Լևիս Հեսկը 1919 թ. հունվարի 21-ին Վաշինգտոն ուղարկած գրությունում վկայում է, որ Վռամյանը նետված էր Բիթլիսի «սարսափելի զնդաններից մեկը. լրիվ մերկ, մարմնին բազմաթիվ վերքեր, աչքերը վտիտ ու հիվանդագին... Ոչ միայն զրկված էր սննդից, այլև գավառի ոստիկանության զորանոցի բակում ստացել էր ծանր գավազանի 50 հարված: Քթից ու բերանից արյուն էր հոսում: Երկու շաբաթ անց 50 ժանդարմների ուղեկցությամբ, ձեռները կապած, Վռամյանին քշեցին դեպի Արաբական կամրջի կիրճը, ճանապարհին անընդհատ ծեծի ենթարկելով»:[6] Նա սպանվեց Մուֆարկինի մոտ դարանակալած ջարդարար-ավազակների կողմից, Բաթման Սու կամրջի մոտ, Բիթլիսից Դիարբեքիր տանելու ընթացքում:[7]

Այս առումով բնութագրական է նաև օսմանյան խորհրդարանի մյուս երկու հայ պատգամավորների՝ Գ.Ջոհրապի և Վարդգեսի գազանային սպանությունը, ինչն իրականացրեց իթթիհատի ղեկավարությունը, ավազակապետ Ահմեդի ձեռքերով:

Ահմեդը սպանությունների համար մի քանի անգամ դատապարտվել էր, սակայն 1913-ին դարձավ իթթիհատական ֆիդայի: Վանի կոտորածների գլխավոր հեղինակներից էր:[8] Գործակցելով Դիարբեքիրի կուսակալ Ռեշիդի հետ՝ ոչնչացրեց տեղի հայությանը: Գ. Ջոհրապի և Վարդգեսի սպանության մասին նա գրել է. «Ոչ միայն Վանը և շրջակայքը քարուքանդ արեցի, այնպես որ այնտեղ նույնիսկ մի հայ գտնել չես կարող, այլև սպանեցի հայ երեսփոխաններ Ջոհրապին ու Վարդգեսին: Ջոհրապին բռնեցի, գետին տապալեցի, ոտքերիս տակ առա և մի մեծ քարով գլուխը ջախջախեցի, մինչև որ մեռավ»:[9]

Ահմեդն անմիջական մասնակից էր նաև Ուրֆայի հայության կոտորածին[10], որտեղից անցավ Հալեպ ու կուսակալին առաջարկեց կոտորել նաև հալեպահայությանը: Սակայն ընդդիմության հանդիպեց և Ջեմալ փաշայի հրամանով ձերբակալվեց, չնայած վերջինս գիտեր, որ Ահմեդը Թալեաթի գործակալն էր:

Սակայն վերադառնանք օսմանյան խորհրդարան, որտեղ հայ պատգամավորների փոքրաթիվ խմբի ու իթթիհատական մեծամասնության միջև մերթ փոխադարձ սիրալիությամբ, մերթ էլ անզուսպ պոռթկումներով շարունակվում էր բանավեճ, հայերի տեղահանության ու կոտորածների շուրջ: Փոխվում էին օրակարգի հարցերը, սակայն խորհրդարանային բոլոր քննարկումների բովանդակությունը, միտումն ու շեշտադրումը Մեծ եղեռնն էր: Հայերի հարցադրումների դեմ բացարձակ հանդես եկողների թվում առանձնապես աչքի էր ընկնում Մշո պատգամավոր Իլյաս Սամին: Եվ դա պատահական չէր, քանի որ նա վճռական դեր էր խաղացել Մշո դաշտի 70-80 հազ. հայ բնակչության կոտորածի գործում: Լինելով օսմանյան խորհրդարանի անդամ և իթթիհատի շրջանային քննիչ՝ Հոջա Իլյասը բուռն գործունեություն էր ծավալել քրդերի միջոցով հայերին բնաջնջելու համար: Հազարավոր հայ կանայք, ծերեր ու երեխաներ ողջակիզվեցին: Նախճիրն ավարտելուց հետո նա իր հետ Պոլիս տարավ մի խումբ դեռատի հայ աղջիկներ՝ իբրև նվեր իթթիհատի մեծամեծերին:

Բուլանըխի նախկին կառավարիչ Շեֆիկի վկայությամբ «հոջա Իլյասը քրիստոնյա աղջիկ բռնաբարելու բուռն մարմաջ ուներ»: Նա զինադադարի շրջանում մի քանի անգամ ձերբակալվեց, ապա տեղափոխվեց Մալթա, սակայն այստեղից ևս ազատվեց՝ խելագար ձևանալով:[11]

«Տարոնի քուրդ տարրը,- վկայում է Վ. Փափազյանը,- իր «քաղաքական» հրագանգները ստանում էր Մշո քուրդ բնակչության տարրերից և, մանավանդ, Մուշի իթթիհատի ակումբից...

Քաղաքի մահմեդական և հայ բնակչության հարաբերություններն ընդհանուր առմամբ եղել են մտերմական և խաղաղ: Սակայն կար մի ընտանիք, որը մոլեռանդ ավատական էր և ձգտում էր հայերին իրավազուրկ դարձնել ու օգտագործել որպես ստրուկ: Այդ տնից էր հռչակավոր Հաջի Իլյասը՝ Մուշի երեսփոխանը, որի մայրը հափշտակված հայուհի էր, ինքն էլ հայերեն գիտեր... Երիտասարդ, նենգ, խիստ հայա-

[5] Josepn Pomiankovski, Der Zusammenbruch des Osmanishen Reiches, Վիեննա, 1928, վերատպված 1969-ին, էջ 160:

[6] U. S. National Archives. Record Groop 256, 867, 4016/3:

[7] Գերմանական արտ. գործ. նախարարության արխիվ, A. A. Botschafe Konstantinopel K 168, թիվ 9(3224):

[8] Rafael de Nogales, Four years Beneah the Crescent, Նյու Յորք, 1926, pp. 73 և 85:

[9] Ahmet Refik (Altinay). Jki Komrte Jki Kital, Jstanbui, 1919, էջ 38-39:

[10] Bruno Esckart, Meine Erlebnisse in Urfa, Պոդդամ, Բեռլին, 1922.

[11] Sina Aksin, Jstanbul Hukumetleri ve Milli Mucadele, h. Բ., son Mesrutiyet (1919-1920), Jstanbul, 1992, էջ 354:

տյաց, քսու, գարշելի դևերից մեկն էր»:[12]

«Ժողովրդի արձագանք» թերթի 1918 թ. մարտի 22-ի համարում տպագրված է Դիարբեքիրի երեսփոխան Ֆեյզիի և Իլյասի խոսակցությունից մի հատված: Ֆեյզիի այն հոխորտանքին, թե ինքը քաղաքի 600 հայի վանքում սպանել է տվել, Իլյասը պատասխանում է. «600-ը ինչ է որ, ես Մշո համայն ժողովուրդն արմատախիլ արեցի»:

Ս.Ակունին գրում է. «Ականատեսների բացարձակ վկայությամբ, Մուշի ռմբակոծման պահին թնդանոթների գլուխը կեցած է շանսատակ հոճա Իլյանը, որն ի վերջո, ի վարձատրություն իր բարվոք ծառայության, իրավունք է ստանում սպիտակ փաթթոցի վրա կրելու դեղին երիզ՝ ամենամեծ պատիվը իսլամության մեջ կրոնական առումով: ... Մասնակցել է նաև Բաղեշի նահանգի ջարդին»:[13]

Գ.Տեր-Կարապետյանը գրում է, որ Իլյաս Սամին «Թալեաթ պեյի մտերիմ բարեկամն էր», և որ նա ու իր գործակիցներն «արդեն էրզրումում Բեհադդին Շաքիրից ընդունելու են հայաջինջ չեթեների հրահանգները»:[14]

Իլյաս Սամին խորհրդարանի նոյեմբերի 18-ի նիստում ասաց. «Պարոննե՛ր, այս խնդիրը մարդասպանությա՞ն, թե՞ արյունալի բախումների խնդիր է: Այս հարցը ես ձեր ներկայությամբ պիտի պարզաբանեմ: Թուրքերը հանցավոր հայտարարվեցին, ամբողջ ազգը հանցագործ որակվեց... (մինչդեռ) իր սկզբնապատճառով այս խնդիրն արյունալի կռիվ էր...

Կառավարությունը... կրոնակից և ոչկրոնակից հպատակներին զորահավաքի հրավիրեց և ...զենքերը հայերին և հույներին տալով՝ ուղարկեց սահման..., իսկ ամենավատ, մաշված զենքերը տվեց արևելյան նահանգների քրդերին, որոնք իմ հայրենակիցներն են, և որոնց ներկայացուցիչն եմ ես... Այս չարաշուք խնդիրն ինչպե՞ս ծագեց... Մի ճշմարտություն եմ ասելու, որը հանրահայտ է: Գարեգին էֆենդին (Գ. Փաստրմաճյանը), որ տակավին զինված՝ Ռուսաստանում է գտնվում, պատերազմի հայտարարության ժամանակ օսմանյան կառավարության դեմ կռվող չեթեներով Վանի վրա հարձակվեց... Սակայն տակավին ոչինչ չէր կատարվել, օսմանյան կառավարությանը վերջնագրի ձևով մի բողոքագիր հանձնվեց..., որն ամփոփված ձևով հետևյալ բովանդակությունն ուներ. Այսօր այլևս խոստումներով օրորվելու ժամանակը չէ: Հիսուն տարիներից ի վեր հայերի փայփայած ազգային նկրտումների քաղաքական ծրագիրը օսմանյան կառավարության կողմից անվերապահ ընդունել ենք պահանջում: Չընդունելու դեպքում... մենք զինված ուժերով Ռուսաստանին ռազմական օժանդակություն ենք ցույց տալու: Մեր ոչ բանակային ուժերով էլ ներքին խնդիրները պիտի խառնենք, կառավարության գործը պիտի դժվարացնենք...

Պարոննե՛ր, և ոչ միայն այդ գրությամբ. նա, իր շուրջը 20 հազար զինյալներ հավաքելով և առանց առիթի, դժբախտաբար Վանը գրավեց...

... Ընդանուր բնակչության 70%-ը ոչնչացավ և անհետացավ, կանայք ու երեխաները մեռան ու անհետացան: Արյունոտ բախումները այսպես սկսվեցին...

Քանի որ խոսքի ու հայացքների ազատություն ու սահմանադրություն գոյություն ունեին, և բոլոր իրավունքներն ապահովված էին, պետք չէր, որ զենքի ուժով իրավունքի պահանջատիրությանը դիմեին, հատկապես նկատի ունենալով, որ մենք բոլոր կողմերից շրջապատված էինք թշնամիներով...

Ես ասում եմ, որ այս ամենը զրպարտություն է: Այս բոլորը սխալ զենքեր են, որոնք ներկայիս խաղաղ վիճակից օգտվելով գործածվում են անմեղ օսմանցիներին, մահմեդականներին, պարզապես նվաստացնելու համար: Դրանով ո՛չ մարդկությունը և ո՛չ էլ որևէ մեկը չի խաբվի:

Դրանց (բախումների) պատճառ հանդիսացող նախահարձակ անձինք, դրանք լինեն մահմեդական կամ հայ, ով ուզում է լինի, վիշապի նման գլխատվելու, ճզմվելու արժանի մարդիկ են... Կառավարությունն այսպես թող կշռադատի, և ամբողջ քաղաքակիրթ աշխարհն ու մարդկությունը թող իմանան, որ այսօր համայն մարդկության ճակատագիրը որոշող Անգլիան, եթե իր ներքին սահմանների մեջ դեմ հանդիման դուրս գար մի տարրի, որը հակառակ իր բարօրության, ապրուստի ու կրթական առավելությունների և վայելած այլևայլ իրավունքների, ապերախտություն արած լիներ, այդ Անգլիան քարե և երկաթե գնդակներ տեղալով այդ տարրին կպատժեր և կբնաջնջեր (ձայներ. «Իռլանդիայում կատարվածի նման»)...

Տիգրան Պարսամյան.- Ահա տեսեք սրա ոգին: Ջարդ անողն այսպի-

[12] Վահան Փափազեան, Իմ Յուշերը, Բ հատոր, Պերյութ, 1952, էջ 322:

[13] Ս. Ակունի, Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Պոլիս, 1920, էջ 164:

[14] «Տարոնի դեպքերը Գեղամի ակնոցով». Կ. Սասունի, Պատմութիւն Տարոնի աշխարհի, 1957, Պեյրութ, էջ 842:

սի ոգով է տոգորված լինում (աղմուկ):

Հալեդ բեյ (Երգնկա).- Իլյաս Սամի էֆենդին ողջամիտ հանդես եկավ, մենք այլևս ասելիք չունենք:

Մաքնոս Նալբանդյան,-... Մեր երկրում սրընթաց սփռվող վշտերից մեկը, նույնիսկ գլխավորը... Հայկական հարցն է: Այս հարցը Եվրոպային շատ զբաղեցրեց և այսօր իսկական հայրենակից եղող բոլոր օսմանցիների համար մտահոգող հարց է: Հակառակ այդ իրողության... ամեն անգամ, երբ այս հարցը խնդրո առարկա է դառնում, ընկերներս անմիջապես առարկում են՝ ասելով, թե չարժեր զբաղվել նման աննշան հարցերով... Անհնար է նիզակը պարկի մեջ թաքցնել: Այդ ամենևին էլ մանր-մունր և ներքին խնդիր չէ: Իսկապես, սա հույժ մահացու խնդիր է, ավելին ես կասեի, որ այսօր այն, իր ահավորությամբ և աղետալիությամբ, աշխարհն ահաբեկած խնդիր է... Դրա մասին չխոսելը նշանակում է չընդունել օսմանյան պետության վարչական խնդիրները, որը անհարիր է այդ պետության այսօրվա ու վաղվա քաղաքականության շահերին:

... Ես Իլյաս Սամի էֆենդիին հարց եմ տալիս՝ երբ այստեղ չեթեական մի խումբ հանդես գա ու մասնակցի դեպքերին և ապօրինի մի շարք արարքներ ձեռնարկի, մի՞թե նման իրողությունը կարդարացնի, որ երկրի բոլոր ծագերում գտնվող հայերը... բոլորը տեղահանվեն, նրանց ունեցվածքը բռնագրավվի ու թալանվի:

... Այսօր այստեղ համառորեն պնդում են, թե այս աղետի պատասխանատուները չնչին փոքրամասնություն կազմող մարդիկ են և ոչ թե օսմանցիներն ընդհանրապես ...Փոքրաթիվ նման խմբակի ցասումով մի ամբողջ ազգի բնաջնջում չէր լինի ... Ես Իլյաս Սամի էֆենդիից սպասում եմ, որ իր պատմած դեպքերն ավարտելուց հետո գոնե դրանց պատճառով առաջ եկած մի ազգի բնաջնջման դեմ բողոքի և պարսավանքի խոսքեր ասի:

... Որքանո՞վ է ճիշտ, որ տեսնելով նման կացությունը, բոլոր հայերին հանցագործ համարելով, կառավարությունը նրանց մասին նման որոշում կայացրեց:

Իլյաս Սամի.- Ես չասացի, թե նման բաները ճիշտ են (ձայներ. «Այո՛, դրանք ճիշտ չեն»):

Նալբանդյան.- Այո՛, ճիշտ չէ, սակայն ասացիք, որ դա ոճիր է, ու դրա պատասխանատուն հայերն են ...Մենք՝ հայերս, մեր նախնիներից սկսած՝ օսմանցիներին ընծայած ծառայությունները Իլյաս Սամի էֆենդիին լիապես կարող ենք ցույց տալ, և այս երկրի հանդեպ մեր հավատարմությունը ոչ թե խոսքով, այլ գործով կարող ենք ապացուցել:

...Հարկ է, որ ազգի և խորհրդարանի շահերը նկատի ունենալով՝ խիզախորեն խոստովանենք անցյալի այս աղետը: Խոստովանենք ու քննարկենք: Բացարձակապես անհրաժեշտ է, որ բողոքի ձայն բարձրացնենք ու այդ ձայնը հնարավորին չափ սաստկացնենք, հանուն իրավունքների բոլոր նրանց, ովքեր, ինչպես այստեղ շեշտվեց, առանց արդարացնող պատճառների, անիրավորեն բնաջնջվեցին, չնայած այս երկրում բարվոք ապրելու իրավունք ունեին: Այսօրվա քաղաքական կացությունն էլ է այդ պահանջում. (ձայներ. «Անշուշտ»)» (էջ 35-41):

Դեկտեմբերի 9-ի նիստում կարդացվեց Մշո պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանի նամակը խորհրդարանին:

Ներկայացնում ենք նամակի բնագիրը որոշ կրճատումներով:

«... Խորհրդարանական ժողովների ժամանակ մեր մեծարգո ընկերներից ոմանք... կոտորված հայերի թիվը նշեցին մեկ միլիոն... Ուրիշ մեծարգո մահմեդական ընկերները սակայն պնդեցին, որ նահատակվածների թիվը հազիվ 100.000-ի հասնի... Ես կարծում եմ, որ... բուն հարցը... նահատակների թվից առավել, անմեղների կյանքի դեմ գործված ոճիրն է... այլապես վստահաբար կարելի է ասել, որ միայն Ջանիկում (Սամսոն), արևելյան Կարահիսարում, Տրապիզոնում և Կիրասինոյում կոտորված հայերի թիվն է հասնում 100.000-ի:

... Ինչո՞ւ անմեղ և որևէ ձևով պատասխանատվություն չկրող մարդիկ ջարդվեցին: Ըստ օրենքի՝ բանակում ծառայողների ընտանիքները չպետք է աքսորվեին: Բայց արի ու տես, որ հայկական նահանգներում չաքսորված ընտանիք չմնաց: Ինչպե՞ս եղավ, որ արևելյան նահանգներում, այսինքն՝ Կարին, Սեբաստիա, Խարբերդ, Վան, Տիգրանակերտ նահանգներում և Ուրֆայի գավառակում, բոլոր հայերին տեղահան անելով, բնաջնջելուն զուգահեռ ջիհադ հայտարարվեց, և 1.5 միլիոնից ավելի հայ ցիրուցան եղան, ջարդվեցին ու ոչնչացան: Իմ ընտրական շրջանին պատկանող Մուշի, Բիթլիսի (Բաղեշի) և դրանց հետ կապված գավառակներում պատմության կողմից մինչև օրս չարձանագրված վայրագություններ ու բռնություններ գործադրվեցին: Մուշ գյուղաքաղաքում թե՛ տեղացի և թե՛ դրսից ու շրջակայքից բերված անմեղ հայերին թնդանոթային ռմբակոծության ենթարկեցին, այրեցին ու բնաջնջեցին, մնացածին էլ այդ կողմերում ոչնչացրել են և հարձակման ենթարկվելով՝ դրանց բնակչությունը ցիրուցան է եղել:

Այս ընդհանուր ջարդի հետևանքով շրջանի բոլոր հայերի շարժական ու անշարժ ունեցվածքը, ինչպես նաև ազգային ու կրոնական առումով նվիրական վանքերն ու նման կառույցներում և եկեղեցիներում պահված շատ հին առարկաներ ջարդվել ու ոչնչացվել են, բոլոր արժեքավոր իրերը կողոպտվել, դրանցում բնակված վանականները սպանվել ու բնաջնջվել են: Այս ահավոր բռնարարքներից հետո մնացած... զգալի թվով երեխաներին բռնությամբ կրոնափոխելով ցրիվ են տվել: Թե նրանք ինչպիսի թշվառության մեջ են, բոլորիս է հայտնի:

... Իրենց հարազատ հայրենիքում կոտորված, ընդհանուր ջարդից ծողոպրած և զանազան թշվառությունների մեջ իրենց գոյությունը քարշ տվող հայ ազգի մնացորդներին և հայ անհատներին պատկանող կալվածքներն ու հողերն իրենց հին տերերից խլելուն և կողոպտելուն հետամուտ ձեռնարկումների դեմ բողոքում եմ ամբողջ ուժով և հարցնում եմ կառավարությանը, թե ո՞րն է իր կարծիքն այս հարցի կապակցությամբ» (էջ 56-57):

Գ. Տեր-Կարապետյանի այս նամակը մեղադրական լուրջ փաստաթուղթ է և չնայած իր հակիրճությանը, ներկայացնում է ցեղասպանության բոլոր բաղադրիչները և համոզիչ փաստարկումներով հերքում է իրականությունը խեղաթյուրելու փորձերը:

Վ. Տատրյանը Տեր-Կարապետյանի նամակի դիպուկ ու հստակ հարցադրումները, դրա զայրալից երանգը բացատրում է Տարոնի հայության բնաջնջման եղանակների ու միջոցների առանձնահատուկ վայրագությամբ, ինչը հետևանք էր այն բանի, որ շրջանում կոտորածներն իրականացվել էին առանձնահատուկ միջոցներով, մասնավորապես.

ա) Ջարդերը կազմակերպվեցին օսմանյան կառավարության, քուրդ ավազակախմբերի ու թուրքական բանակի համագործակցված գործողություններով:

բ) Բանակային ուժերը, որոնք բերվել էին Խարբերդից, ունեին թնդանոթային հզոր կարողություններ և նախադեպը չունեցող ռմբակոծության ենթարկեցին Մուշի հայկական թաղերը, հիմնահատակ կործանեցին դրանք՝ փլատակների տակ ոչնչացնելով մեծ թվով բնակիչների:

գ) Դաշտի բնակչության ստվար մեծամասնությանը, հիմնականում՝ ծերեր, կանայք ու երեխաներ, հավաքելով գոմերում, մարգերում ու մեծ տներում, ողջ-ողջ այրեցին:

Թուրքական 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան 1918-ի

փետրվարին անձամբ տեսել էր, թե ինչ էր կատարվել 800բնակիչ ունեցող Զրիկ գյուղում և վկայել էր: Այս և Սողգոմ գյուղերում էին հավաքել շատ գյուղերի իգական բնակչությանը՝ երեխաների հետ: Մազհարի գլխավորած հանձնաժողովին տրված ցուցմունքում նա գրում է. «Զրիկ գյուղի հայ տղամարդկանց, կանանց ու երեխաներին ձերբակալելով, գյուղը հրկիզեցին և նրանց բնաջնջեցին, ինչը իսլամի պատմության մեջ նմանը չունեցող բռնարարքների և բարբարոսության օրինակ հանդիսացավ»:[15]

Տարոն-Տուրուբերանի 500 հոգևորականներից ողջ մնաց միայն Տ.Եղիշե Քհն. Տեր-Պարսամյանը:[16]

Գ.Տեր-Կարապետյանի խոսքերով նշենք. «Տարոնի հայությունը չարչարանքի երկունք էր անցնում արդեն 1914-ի աշնանը: Տուն, գյուղ, քաղաք, գավառ, լեռ ու ձոր գրեթե կրակների մեջ էին, ոչ մի հայի տանը հանգիստ չկար, ոչ մի հայի հոգի հանգիստ չէր, մինչդեռ, մյուս կողմից, հազարավոր ջահել տղաներ զինվոր էին տարվում՝ զոհ դառնալու թուրքերի սվիններին...

Ժողովուրդն ամեն ինչ տվել էր հօգուտ պատերազմի կամ ամեն ինչ նրանից խլվել էր, և նորից պրծում չկար:

Հենց աշնանից գաղտնի բանակցություններ էին ընթանում Սասունն ու դաշտը տեղահանելու և կոտորելու...»:[17]

Խորհրդարանի դեկտեմբերի 11-ի նիստում հիմնականում քննարկվեցին հույների բռնագաղթին և կայսրության արևմտյան շրջաններում տեղ գտած խժդժություններին առնչվող հարցեր: Այդ կապակցությամբ անդրադարձներ եղան նաև հայերին վերաբերող խնդիրներին, նրանց ունեցվածքի բռնագրավմանը, նրանց վերաբերյալ խմբակային մահավճիռներին, աքսորներին: Այս նիստում հանդես եկավ թուրք հայտնի բանաստեղծ Մեհմեդ Էմինը, որն իր «Նշանավոր ճառում արծարծեց ու փորձ արեց վերլուծել Մեծ պատերազմի ընթացքում Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները՝ ամբողջությամբ ոգեկոչելով թուրք ազգայնականությանը, թուրք ազգի կրած տառապանքները և դրանք համեմատելով հայերի կրած դժբախտությունների հետ որպես զուգակշիռ եղելություններ, անուղղակի պնդելով, որ հայերի դեմ գոր-

[15] Արխիվ Երուսաղեմի (թիվ 31 ծանոթ.), ծրար7, Հ.թիվ173, յիշատակագիր-վկայություն, էջ :
[16] Թեոդիկ, Ամէնուն Տարեցոյցը (թիվ 47 ծանոթ.), էջ 124:
[17] Կ. Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, 1857, Բեյրութ, էջ 842-844:

ծադրված ոճիրները բուն թուրքերի կողմից չեն կատարված» (էջ 62), այլ ընդհակառակը, թուրքն իրեն հատուկ բարեմասնություններով բարիքների ամբողջ համակարգ է ստեղծել հպատակ ժողովուրդների համար: Եվ եթե հարաբերությունները թուրքերի ու հպատակ ժողովուրդների միջև սրվեցին, ապա դրա պատճառը վերջինների ազգայնական տրամադրություններն էին: Այսպես, «Մեր հայ հայրենակիցներն իրենց խրիմյաններով, ներսեսներով (Վարժապետյան), գամառ-քաթիպաներով ազգայնականության կրակ են բորբոքել, երազային հայացքներով Հայկի որդիներին Արարատ լեռն են ցույց տվել»: Նույն ազգայնամոլությունն էր տիրապետում, ըստ Մահմեդ էմինի, արաբական ու հունական շրջաններում, ինչն առաջացրեց թուրքերի հակադարձ արձագանքը՝ թուրքական ազգայնամոլությունը: «Իրականություն է, որ թուրք ազգն անտեր է մնացել, նրա իրավունքները պաշտպանող ո՛չ համայնքային ժողովներ և ո՛չ էլ պատրիարքարաններ կան, նրան օգնության ձեռք մեկնող ո՛չ նույնադավան կառավարություններ և ո՛չ էլ քրիստոնյա քաղաքակրթության միավորներ կան, նրա դեմ կիրառված հալածանքները հին են, ցավերը՝ մեծ, նրա կյանքը աղետ է:

Սրանցից բացի... թուրքը ենթարկվեց մի այլ աղետի, որն ամբողջացնում է այդ աղետների շարքը: Օհ, այդ չեթեները թուրք գյուղերում, ավաններում մնացած բնակչության՝ հղի կանանց ու աղջիկների պատիվը ոտնակոխեցին, սպիտակահեր տատիկներին, կռացած մեջքերով հայրերին սպանեցին: Սրանք էլ իրենց մութ պատմությունն ունեն՝ ողջակիզումներ, տներում դրված դիակներ: Սրանց այդ Կարինը, Եփրատ գետի կարմրած ջրերը, Դերջանի լեռներում, Բասենի դաշտում արձագանքող մարդկային աղիողորմ ճիչերը: Սրանք էլ իրենց ավերակներն, իրենց գերեզմաններն ունեն» (էջ 68):

Մեհմեդ էմին (Տրապիզոն).- Սա՝ անձնամբ... եմ ստուգել «Օրդու Կազայի (Սև ծովի ափին) կայմակամը հայերին նավակները լցնելով, Սամսոն ուղարկելու պատրվակով նրանց ծովը թափեց: Լսեցի, որ (Տրապիզոնի) կուսակալ Ջեմալ Ազմին նույն բանն է արել: Չնայած երեք տարի զբաղվեցի, սակայն կուսակալի դեմ որևէ բան անել չկարողացա: Ասացին՝ պատերազմական գոտի է» (էջ 70):

Խորհրդարանի դեկտեմբերի 12-ի նիստում նախագահում էր Հալիլը, որը պատերազմի ժամանակ եղել էր արտաքին գործերի և արդարադատության նախարար: Խորհրդարանի այդ նիստից մի քանի ամիս անց նա իր գործակիցների հետ ձերբակալվեց որպես հայկական եղեռնագործության կազմակերպման մասնակից:

Նիստում շարունակվեց հույների տարագրության ու նրանց ունեցվածքի թալանի քննարկումը: Այդ կապակցությամբ Ռոդոսթոյի պատգամավոր էֆքալիդիսը նկատեց, «Հին ժամանակներում ևս տեղահանության քաղաքականություն տարվել է, սակայն Աբդուլ Համիդի այդ քաղաքականության հետ համեմատած՝ դրանք շատ թեթև էին ...Վարդգեսը մեզ ասում էր. «Եղբայր, բնաջնջելը սրանք համարում են առաջնակարգ պարտականություն, եթե հանկարծ ձեզ հանգիստ թողնեն, պատժելու հերթը մերը կլինի» (էջ 75):

Հույն պատգամավորը նաև ասաց. «Թուրքական պատժամիջոցներն արդարացնելու համար երբեմն Իռանդիայի խնդիրն են առաջ քաշում, և դրանով պատմությունը սխալ է բացատրվում»: Հույների և հայերի կողքին դրվում են նաև թուրք զոհերը: Սակայն նման համեմատությունը, ըստ հույն պատգամավորի, սխալ է: «Թուրքերը զոհվեցին պատերազմի կապակցությամբ ստեղծված այլազան պատճառներից», իսկ հայերին ու հույներին ոչնչացրեց կառավարությունը:

Այնուհետև ելույթ ունեցավ Սիս-Գոգանի պատգամավոր Մաթևոս Նալբանդյանը: «Այն պահից,- ասաց նա,- երբ այս օրենքը՝ տեղահանությա՞ն, թե՞ ջարդի օրենքը, հնարվեց, այդ նույն պահից ցավագին գործողություններ ձեռնարկվեցին: Այստեղ հավաքելով հայ ազգի բոլոր մտավորականներին քշեցին Անատոլիայի խորքերը և ոչնչացրեցին: Համառոտ բացատրեմ: Անատոլիայի նահանգներում բնակվող հայերին դեպի հարավ ուղարկելու պատրվակով Անատոլիայի բոլոր ճանապարհների վրա, զեփյուռաշատ հովիտներում... կոտորվեցին: Այդ վայրերը գերեզմանոց դարձավ: Այո, պարոններ, հայերին, եղբայրներին ոչնչացրին, քույրերը, մայրերը առևանգվեցին, կաթնակեր երեխաներին... Սև ծովի ջրերի, Եփրատ և Տիգրիս գետերի հոսանքների մեջ թափելով գործվել են վայրագություններ, որոնք ստվերի մեջ են թողնում ներոնների չարագործությունները: ...Երբ կատարվում էին այս գործողությունները ես Ադանայում էի... գիտե՞ք թե այդ ճամփաների վրա ինչի ականատես եղա... ամեն մացառի տակ մահվան ճիրաններում գալարվող երեխայի, ծերունու հանդիպեցի: Մահերի այլազան տեսակներ ես այնտեղ տեսա: Տեսա, թե ինչպես ժանդարմների խարազանները մայրերին իրենց զավակներից, կանանց՝ երեխաներից էին բաժանում» (էջ 77-78):

Եվ ապա. «Այս երկրում իշխանությունը թուրքական իշխանություն է:

Թեև որոշ թուրքեր, հնարավոր է, դեմ եղած լինեն ինչ-որ որոշումով իրականացված այս զուլումներին, սակայն ակնհայտ է՝ դրանք կատարվել են թուրքության անունով»:

Մեհմեդ էմին. «Քավ լիցի, քավ լիցի, հանուն զուլումի է եղել, անիծում ենք զուլում անողներին»:

Մ.Նալբանդյան. «...Ասում են՝ այդ չարագործները 3-5 հոգի են: Խելքս չի կտրում: 3-5 հոգին այս գործն անել չէին կարող... Վերջապես՝ հասարակական կարծիքը և զոհված ազգերն այս ամենի հաշիվը պիտի պահանջեն թուրքերից, և թուրքերը այդ հաշիվը պիտի տան...: Ասում են՝ թուրքերը ևս զոհեր են ունեցել, սակայն թուրքերի զոհված լինելու իրողությունը տիրապետող ազգի զոհաբերության իրողություն է... Հայերն անասունների հոտերի նման քշվեցին և սպանվեցին... թուրքերն իրենց սահմաններին հերոսաբար մեռան, իսկ հայերը ստորացուցիչ ձևով սպանվեցին... Պետք է ոճիրների հեղինակները... պատժվեն, եթե նրանց թիվը թեկուզ 100 հազ. լինի» (էջ 79):

Նորից հանդես է գալիս Իլյաս Սամին, որը կատարված չարագործություններն ու եղեռնագործությունները համարելով ոչ թե լոկ օսմանյան, այլ համաշխարհային պատերազմի ծնած համընդհանուր երևույթ, հպատակ ժողովուրդներին, այդ թվում հայերին մեղադրեց, թե նրանք «փոխանակ թույլ տալու, որ սգանք մեր հայրենիքի մեծ թախիծը, հազարավոր, հարյուր հազարավոր միլիոնավոր մեր նահատակներին..., փոխանակ հայրենիքի ապաքինությամբ զբաղվելու, դժբախտաբար ավերիչ քայլերի են դիմում»:

Ի պատասխան Մ. Նալբանդյանի. «Ոչ մի արարք չի կարող արդարացնել այդ ոճիրները» բացականչության՝ Իլյաս Սամին բերում է, իբր՝ համոզիչ հետևյալ փաստարկը. «... Հին վարչության, ողորմած հոգի Աբդուլ Համիդի շրջանի խռովությունների մասին գիտեք. այդ 1895 կամ 1896 թվերին էր... Նույն ժամանակ Ստամբուլում էլ ռումբ էր նետվել, ինչը դարձել էր դեպքերի պատճառ... Աչքովս եմ տեսել, որ հայ հայրենակիցներին ջարդելու և ոչնչացնելու քաղաքական հրամանի գործադրման համար վարչական միջոցներ ձեռնարկելու հատուկ հրահանգներ ստացող Մութեսարիֆը..., ձեռքին խարազանը ժողովրդին (կոտորել) արգելում էր: Աչքովս տեսա: Մյուս կողմից, սակայն նշաններ էր տալիս՝ «Արեք, արեք»: Միակ անձիք, որոնք արգելք հանդիսացան այդ նախճիրին, իսլամ կրոնավորներն ու իմաստուններն էին» (էջ 81):

Իլյաս Սամին ինքը մահմեդական հոգևորական էր և իր դասին արդարացնելու համար փաստորեն հաստատում էր այն իրողությունը, որ հայկական կոտորածների, այդ թվում 1895-97 թվերի ջարդերի կազմակերպիչը օսմանյան իշխանություններն էին: Չնայած ստում էր, երբ ասում էր, թե շնորհիվ մահմեդական հոգևորականության միջամտության «Մուշում հայի քիթը չարյունոտվեց»:

Լեփսիուսը երկու ամիս շրջել է աղետի վայրերով ու հեռագրել Բեռլին, թե Մուշը կոտորածների վայրերից մեկն էր, որ տարոնցիների, մասնավորապես՝ քաղաքի հայ բնակչության կոտորածի օրը նշանակված էր 1896-ի նոյեմբերի 16-ին:[18] Իսկ անգլիական դեսպանության գործակալ Մայքլ Հերբերը նույն՝ 1896 թ. նոյեմբերի 16-ին Լոնդոն ուղարկված տեղեկագրում նկարագրում է, թե սոֆտան (մահմեդական կրոնական դպրոցի ուսանող) ինչպես էր խմում մահվան ճիրաններում գալարվող մշեցի հայի արյունը:[19]

Շարունակելով իր ճառը՝ Իլյաս Սամին ասաց. «Ես ձեռքս կրծքիս դնելով և լրիվ համոզված ասում եմ, որ մեր ոչնչացված, տեղահանության և արտաքսման ենթարկված հայրենակիցների 80%-ն անմեղ մարդիկ էին, որոնք տգիտությամբ ընդունված որոշման զոհերը դարձան» (էջ 82):

Այնուհետև նա խոսում է այն մասին, որ առաջին աշխարհամարտի հենց սկզբին, երբ «որևէ դեպք դեռևս տեղի չէր ունեցել» դաշնակցության Տարոնի ներկայացուցիչ Վ. Փափազյանը հայերին ասում էր. «Թուրքիայի ներսում մենք չեզոք պիտի մնանք: Սահմանամերձ շրջաններում Ռուսաստանին զինված աջակցություն ցույց տալու հնարավորություն կա: Սակայն ռուսական հարձակումից և տարածքներ գրավելուց հետո, չնայած հարկադիր զինվորական ծառայության, թշնամու (ռուսների) նպատակների իրականացման համար պետք է աշխատենք»: Եվ այս ասվում էր այնքան բացեիբաց, որ Դաշնակցության մտադրություններն ու փաստաթղթերն իսկույն ընկնում էին կառավարության ձեռքը:

Իլյասի այս խոսքերում ճշմարտության բաժին կա: Ինքը՝ Փափազյանն է գրում, որ պատերազմի սկզբին Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունում ձևավորվեցին տակտիկական երկու ուղղություններ: Մի

[18] Lepsius, Armenian und Europa-Eine Anklageschrift, Բեռլին, 1897, էջ 65.

[19] Անգլ. արտ. գործ. նախարարության արխիվ, FO 195/1870, հեռագրի արձանագրություն թիվ 694:

մասը պնդում էր «հայ կամավորական գնդերի կազմակերպման վրա, որպես ռուսների առաջխաղացման առաջապահ ուժերի», Թուրքահայաստանի ազատագրմանը գործնական մասնակցություն ունենալու համար: Մյուս կողմից «Հայաստանի բյուրոն պետք է հրահանգեր գավառների իր կազմակերպություններին գաղտնի նախապատրաստվել ինքնապաշտպանության, իսկ վտանգի դեպքում միանալու արշավանքին մասնակցող հայկական գնդերին»: Այս տեսակետն էին պաշտպանում Խաժակն ու Արմեն Գարոն: Մյուս տեսակետի կողմնակիցները գտնում էին, քանի որ «թրքահայ ժողովրդի համար վտանգն անխուսափելի է, և թեև ինքնապաշտպանության հրահանգներ պետք է տալ, սակայն նաև անհրաժեշտ է Կովկասում, սահմանի մերձակայքում մի քանի կետերում կենտրոնացնել հայ մարտական խմբերի խոշոր միավորումներ, որոնք մարտական գործողությունների չպետք է դիմեին և միայն ծայրահեղ հանգամանքներում (ջարդ կամ թուրքերի պարտություն) սահմանը անցնեին...»: Այս տեսակետին էին հարում Ռ. Մինասյանը, Հրաչը, Վարդգեսը, Շահրիկյանը և Փափազյանը, իսկ ավելի ուշ՝ նաև Զոհրապը:[20]

Համաձայն թուրքական աղբյուրների՝ դաշնակցության Էրզրումի ընդհանուր ժողովի (8-րդ համագումար՝ 1914 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 14-ը) ընթացքում ու նրա ավարտից հետո դաշնակ ղեկավարները «գաղտնի հավաքույթներ էին ունենում և նույնիսկ կենսգիշերից հետո գաղտագողի ռուսական հյուպատոսարան գնալով տեսակցում էին ռուս հյուպատոսների հետ»: Մինչդեռ այդ ընթացքում Էրզրումում գտնվող Բ.Շաքիրը լրտեսում էր նրանց և որոշ ժամանակ անց հեռագրեց Էրզրումի ջարդերի կազմակերպիչ Հիլմիին՝ դաշնակցության համագումարի մասնակիցներին ոչնչացնելու համար: Սակայն վերջիններին, բացի Ալոյանից, հաջողվեց խույս տալ հաշվեհարդարից:[21]

Շաքիրի տվյալներով, դաշնակցության լիդերները, իբր, բացեիբաց ասում էին, թե ռուսներն իրենց խոստացել էին լայնածավալ Հայաստան, որն ընդգրկելու էր Նախիջևանից Խարբերդ ու հյուսիսում՝ մինչև Տրապիզոն ընկած տարածքները:[22]

Այս ամենը, իհարկե ճիշտ է: Բայց նաև ճիշտ է այն, որ դրանք լոկ

[20] Վ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 279-280:

[21] Humumi Harpte Tesniliti Mahsusar, Varit 15-17-ը նոյեմբերի, 1933 թիվ:

[22] Եղիշե եպս. Չիլինկիրեան, նշվ. աշխ., էջ 56, 57:

կարծիքներ էին, ու նաև կար այլ կարծիք. օրինակ, Ռուբեն Տեր-Մինասյանը Էրզրումի ժողովին առաջարկեց. «պատերազմի դեպքում կամավորական գնդեր կազմել և միանալ թուրքական բանակին՝ ռուսների դեմ»:[23] Իրականում այս տեսակետներից ոչ մեկն էլ գերապատվություն չստացավ և, ինչպես գրում է Կ. Սասունին. «Թե՛ մեր հավաքականությունը և թե՛ մեր քաղաքական մեծ կուսակցությունը կատայալ երկվության մեջ էին... Թուրքահայաստանում և ամբողջ Թուրքիայում հայությունը կծկված էր հնազանդության և ինքնապաշտպանության վարագույրի հետևը, սպասողական ու անզեն»:[24]

Իլյաս Սամիի մի խոստովանություն ևս: «Հայերի տեղահանությամբ իմ ընկերային դիրքս զրոյի իջավ ...Պարոննե՛ր, այս դեպքերն ինչո՞ւ տեղի ունեցան... կատարվածը բռունցքի վրեժխնդիր ու չափազանց հուժկու հարված էր... անմեղ ժողովրդի դեմ գործադրված զուլումների կապակցությամբ նողկանքս արտահայտելով, պահանջում եմ, որ (դրանց հեղինակները) խստորեն պատժվեն» (էջ 83): Այնուհետև. «Մուշը... թնդանոթային ռմբակոծությամբ պատժվեց: Այո՛, թնդանոթով պատժվեց: Ահա նման ռմբակոծություններով է, որ, հանուն ամբողջ մահմեդական և ոչ մահմեդական հավաքականությունների, երկիրն ավերակների վերածվեց»: Սակայն ջարդարարի խոստովանությունը դրանով վերջանում է, և նա նորից ընկնում է կեղծիքների գիրկը. «Իրենց՝ հայերին քաղաքից հանելու ծրագրին համաձայն լինելով հանդերձ, Մուշի մերձակայքում, լեռան հետևում զինված ու զենքով փոխադարձող ուժեր կային, որոնք առանց չափազանցության, կարող եմ ասել, 20 հազարի էին հասնում և որոնք պատրաստ էին միանալու Ռուսաստանին: Ահա այս էր, որ թե՛ կառավարությունը և թե՛ բանակը կենսական վտանգ համարեցին... Տասը վաշտ զինվոր, զինված 10 թնդանոթներով, ճակատամարտ տվին զենք օգտագործող հայ չեթեների դեմ և քաղաքն ամբողջությամբ և խելահեղ ռմբակոծելով ավերակի վերածեցին... Այո, Արևելյան նահանգները գերեզմանոցի վերածվեցին» (էջ 85): Սակայն դրա մեղավորը, ըստ ջարդարար երեսփոխանի, չեթեների ռուսամետ գործողություններն էին: Մանավանդ որ, ըստ նրա, այդ նահանգներում ոչնչացված հայերի կողքին զոհվեց 2 միլիոն մահմեդա-

[23] Վ. Մինախորեան, 1915 թվականը: Արհավիրքի օրեր

[24] Կ. Սասունի, Թուրքահայաստանը Ա Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Բեյրութ, 1996, էջ 27, 30:

կան, որոնց զգալի մասը ոչնչացվեց չեթեների կողմից:

Այնուամենայնիվ թուրք շատ գործիչներ այս կամ այն առիթով հարկադրված էին խոստովանել հայկական ցեղասպանության հրեշավոր բնույթը: Երբ սուլթանի հրովարտակով իթթիհատական կազմ ունեցող խորհրդարանը 1918 թ. դեկտեմբերի 21-ին ցրվեց, այդ հրովարտակն ընթերցող Մուստաֆա Արիֆը հայտարարեց. «Հայերի դեմ գործադրված ոճիրների պատճառով մեր երկիրը վերածվեց վիթխարի սպանդանոցի»:[25] Իսկ ասողը կայսրության ներքին գործերի նախարարն էր: Նույն անձնավորությունը դեկտեմբերի 30-ին մի այլ հայտարարություն արեց. «Անշուշտ մի շարք հայեր օգնեցին ու հզորացրին մեր թշնամուն, և մի քանի հայ խորհրդարանականներ թուրք ժողովրդի դեմ ոճիրներ գործեցին, սակայն թուրք կառավարության պարտականությունն էր նրանց ձերբակալել ու պատժել... Կառավարությունը պարտավոր էր միայն հանցավորներին հետապնդել ու պատժել: Չեթեական ոգով սնված մեր ղեկավարարները դժբախտաբար տեղահանության վերաբերյալ օրենքն այնպես գործադրեցին, որը տալիս անցնում էր ամենաարյունարբու չեթեների ընդունակությունները: Նրանք որոշեցին բնաջնջել հայերին և իրոք բնաջնջեցին նրանց: Այս որոշումը կայացրել էր երիտասարդ թուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեն, և կառավարությունն այն գործադրեց»:[26]

Վ.Տատրյանը օսմանյան խորհրդարանի յուրաքանչյուր նիստում արծարծված տեսակետներն արժեքավորելու համար դրանք ուղեկցում է այս կամ այն նիստի նշանակության մասին վերլուծություններով: Այդ վերլուծությունների ընթացքում ներկայացված են նաև անհայտ կամ սակավ հայտնի բազմաթիվ փաստեր, որոնք մինչև այդ դրված չեն եղել գիտական շրջանառության մեջ: Համենայնդեպս ավելի քան ստույգ են ներկայացված այնպիսի ջարդարարների իրական դեմքերը, ինչպիսիք են՝ հարյուրավոր հայ մանուկների՝ Եփրատում խեղդամահ արած Հալեթը (Երզնկայի պատգամավոր) և Մշո պատգամավոր Հաջի Իլյաս Սամին:

Գրքում ամբողջական է ներկայացված Տրապիզոնի պատգամավոր Հաֆըզ Մեհմեդի կերպարը, որ փաստերի օբյեկտիվ շարադրումը զուգակցում էր խորհրդարանում տիրապետող իթթիհատամետ մթնոլորտի հետ:

[25] Renaissance, 22 դեկտեմբերի 1918 թ.:
[26] Vakit, 13 դեկտեմբերի, 1918 թ.:

Բերվում է իթթիհատական լիդերներից մեկի՝ Թալեաթի գլխավորած կառավարության արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշի հուշերից մի նախադասություն. «Այս տեղահանությունով չշահագրգռված շատ քիչ թուրք կար Անտոլիայում»:[27]

Անդրադառնալով Իլյաս Սամիի կողմից հայ հեղափոխականներին ներկայացրած մեղադրանքներին, թե նրանք կառավարությանը «վերջնագիր» էին ներկայացրել, Վ.Տատրյանը, վկայակոչելով պատրիարքարանի կողմից զինադադարի ընթացքում հավաքած նյութերը, նշում է, որ Թալեաթին ուղղված նամակները ոչ թե վերջնագրեր, այլ աղերսագրեր էին: Դեռ 1915-ի հունվար-փետրվար ամիսներին Վռամյանն ու Փափազյանը դիմել էին և նրա օգնությունը հայցել, քանի որ Վանի ու Բիթլիսի հայության վիճակն իրոք հուսահատական էր: Հատուկ կազմակերպության նորակազմ ջոկատները, ոստիկանական համազգեստներ հագած սկսել էին ամեն տեսակի բռնություններ գործադրել հայկական գյուղերում: Վռամյանն, օրինակ, 1915 թ. հունվարի 6/15-ի իր տեղեկագրում գրում է. «Վանի մերձակայքի Մղկներ գյուղում 20 կանանց ու աղջիկների վրա Բշարի Չաթոյի ազգական էռմեր աղայի՝ միլիցիայի կողմից գործադրված անլուր ու վայրագ բռնաբարություններին» մասին, որ իշխանությունները «քուրդ ոճրագործներին և ավազակներին ներում և զինում են», որ «հակառակ պաշտոնական հերքումների, Բաշքալեի և շրջակա հայ գյուղերի, ինչպես նաև Սարայի՝ Ախոռիկ, Հասան-Թամրան և Հազարենի ջարդերն իրողություն են»: Վռամյանը միջամտություն է խնդրում, որպեսզի «երաշխավորվի հայ ժողովրդի կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգությունը»:[28]

Իսկ Վ.Փափազյանի կողմից 1915-ի փետրվարի 24-ին Թալեաթին ուղարկված հեռագրում գրված է. «Տեղիս ժողովրդի ցավերը Ձեզ հաղորդելու հնարավորության համար երախտապարտ եմ: Ընդհանուր զորաշարժից մինչև օրս այս երկրի ժողովուրդը և, մասնավորապես, հայերը գերմարդկային ուժ գործադրելով և ծայրահեղ զոհողություններով ծառայեցին ու շարունակում են ծառայել իրենց հայրենիքին: Մեր բանակի կարիքները հոգալու և դրանք մեջքով և, մասամբ, եզներով մինչև ռազմաճակատային գիծը հասցնելու ծանրության ամենամեծ մասը

[27] Halil Mentesenin Hatiralari 4. Maltaya Surgun, Hayaf, Tarih Mesmuasi 9:2, թիվ 8 (1973թ. սեպտեմբեր), էջ 22:
[28] Արխիվ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի, ծրար 19, 2, թ.թ. 417-418:

նրանց է վիճակվել: Խիստ ծանր այդ պարտականությունները կատարելով հանդերձ, շարունակ բազմաթիվ ապօրինությունների և ավելորդ բռնությունների դեմ անընդհատ օրինավոր եղանակներով բողոքել են...»: Մի այլ անգամ նա գրում է. «Թվում է, թե թաքուն գործող մի շարք մարդիկ ձգտում են օգտվել ներկա իրավիճակից և հրապարակ են եղել այդ անել ազգամիջյան կռիվներ առաջացնելու դիտավորությամբ... Չեմ ուզում թաքցնել, որ իթթիհատի տեղական ակումբին պատկանող մի քանի անձիք... ձեռնարկում են այնպիսի քայլեր, որոնք լոկ ցավալի հետևանքներ են ունենալու (քուրդ աշիրեթներին նրանք են հրավիրել ու նաև մտքեր են գրգռում)»:[29]

1915 թ. փետրվարի 25-ին Կարինի, Մուշի, Վանի և Սեբաստիայի վիլայեթներում տիրող կացության մասին մի տեղեկագրում Մշո մութեսարիֆ Սերվեթի մասին գրված է. «Եթե մնա, խռովություններն անխուսափելի են: Ջղագար, մեծամիտ, դավադիր է, արդարություն ու գութ բնավ չունի: Շրջանը սարսափի մեջ է: Ասպարեզը... քուրդ հրոսակներինն է... այս մուֆեսարիֆը եթե չփոխվի, հնարավոր է այստեղ մի նոր Ադամա առաջանա»:[30]

1915-ի մարտի 13-ին Վռամյանը Վանի վալի Ջևդեթին գրեց. «Որպեսզի այստեղ կառավարության դեմ որևէ անպատեհություն առաջ չգա, վստահեցնում եմ, որ շրջագայության եմ դուրս գալու, ինչպես որ ամիսներ ի վեր մեր անհատական ջանքերով այդ ապացուցեցինք»: Դրան դահիճը պատասխանեց. «Կառավարության արդար և ուղղամիտ կեցվաքի խնդրում լրիվ հանգիստ եղեք: Այդպես էլ հայտնեք ժողովրդին... փոխադարձաբար արտահայտում եմ սերս»: Այս կապակցությամբ Ա-Դօ-ն գրում է. «Ջևդեթը վարպետ էր, վարպետ չարագործությունների, դավադիր ծրագրերի և միաժամանակ կեղծելու, խաբելու արհեստում: Նա կատարյալ ասիացի էր, իր բացասական հատկություններով: Այն պահին, երբ նա բարեկամական այցելություններ էր կատարում հայ ղեկավար անձանց, այդ նույն միջոցին քաղաք էր բերում ռազմական ուժեր, դավադրություն էր նյութում այն մարդկանց դեմ, որոնց այցելութան էր գնում և ծրագրում, կազմակերպում էր ջարդեր...»:[31]

Վ.Տատրյանը, բաղդատելով Ջեյթունն ու Վանը, իրավացիորեն արձանագրում է, որ չնայած առաջինում դեռ մարտ ամսին եղան թուրքերի հետ հայերի արյունալից բախումներ, որոնց ետևանքով բռնագաղթվեց տեղի հայ բնակչությունը, սակայն Ջեյթունում ռուսական բանակի վտանգ չկար և ոչ էլ հայ քաղաքական կազմակերպության կառույց: Հենց այդ վերջիններն էլ պայմանավորեցին իշխանությունների առավել սևեռուն ուշադրությունն ու դաժան քաղաքականությունը Վանում և, ամբողջությամբ վերցրած, Վասպուրականում, որն իր արտահայտությունն ունեցավ թե զորահավաքի, թե պատերազմական հարկերի գանձման, թե հայ զինվորների հանդեպ վերաբերմունքի (որի հետևանքը՝ դասալիքությունը, ևս օգտագործվեց հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու համար) ժամանակ:

Ոմանք փորձում են հայերի այս վարքագիծը ջարդերի կազմակերպման պատճառ համարել, ինչը լուրջ չէ: Էրզրումում Գերմանիայի փոխհյուպատոս Շ.Ռիխտերը 1915 թ. մայիսի 15-ին գրել է. «Առանձին պատահարները, ինչպես նաև հեռավոր գյուղերում բռնի հափշտակությունների դեմ զինված դիմադրությունը, սպանությունն այն թուրքերի, որոնք պահանջում էին իրենց հանձնել հայ կանանց ու աղջիկներին, հեռագրալարերի և հեռախոսային կապի կտրելն ու խանգարելը և լրտեսությունը, սրանք երևույթներ են, որոնք իրենց մեջ ոչինչ չունեն, եթե նաև նկատի առնվի, որ դրանք տեղի էին ունենում պատերազմական պայմաններում և այն էլ՝ խառը բնակչությամբ սահմանամերձ վայրերում»:[32]

Թուրքական մյուս վարկածը, թե հայերը ռուսական կողմնորոշում ունեին և ձգտում էին Ռուսաստանի օգնությամբ թոթափել օսմանյան լուծը, ընդհանուր առմամբ համապատասխանում էր իրականությանը:

Իթթիհատական լիդերներից մեկը՝ Էոմեր Նաջին, 1914 թ. դեկտեմբերի 4/17-ին Վռամյանին հասցեագրած սպառնալից նամակում գրում է. «Դաշնակցականները ռուսների հետ ընկերացել են... Ձեր և Ձեր ընկերների հավատարիմ չլինելը հասկանալի է... Կառլ Մարքսի, Կրոպոտկինի տեսություններով հպարտացող ձեր կուսակցության գործիք լինելը ռուսական ցարերին՝ XX դարի ամենածիծաղելի արդյունքներից մեկն է»:[33]

Ցիծաղելի, թե ոչ, բայց մի բան իրողություն է, որ Հ. Յ. Դաշնակցու-

[29] Արխիվ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի, ծրար 19, Ղ, թթ 421,423:
[30] Նույն տեղը, թթ. 419, 420:
[31] Ա-Դօ, Մեծ դեպքեր Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 150:

[32] Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվ, k 168, թիվ 9 (3224):
[33] Ա-դօ, նշվ. աշխ., էջ 97:

թյունը ու, ընդհանուր առմամբ, արևմտահայությունը, անկախ իրենց ռուսամետությունից, Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում, այսինքն՝ մինչև Հայոց ցեղասպանությունը, կատարեցին երգրումում ստանձնած պարտականությունը՝ ռուս-թուրքական ընդհարումներում հիմնականում չեզոք դիրք որդեգրեցին: Սա իրողություն է, որն ապացուցվում է նաև թուրքական աղբյուրների տվյալներով:

***

Վ.Տատրյանի գրքի երկրորդ մասը բաղկացած է հինգ ինքնուրույն ուսումնասիրություններից, որոնք սակայն նվիրված են մեկ ընդհանուր հարցի՝ Հայոց ցեղասպանության իրականացման երիտթուրքական քաղաքականության գործադրման սկզբնավորման ու դրանց իրականացման մեխանիզմների մշակման հարցի քննությանը:

«Իթթիհատական կուսակցության սկզբնական խարխափումները» գլխում խոսվում է այդ կուսակցության մեծապետական-այլամերժ դիրքորոշման մասին: Հեղինակն իրավացիորեն նկատում է. «Իթթիհատական հեղափոխությունը զուրկ էր մշակված գաղափարախոսության կռվանից: Այդ շարժման ղեկավար տարրերը, որոնք կազմված էին մի շարք զինվորականներից, ուսուցիչ-մտավորականներից և պետական ծառայողներից, պարզապես ցանկանում էին ձերբազատվել համիդյան վարչակարգի բռնակալակալ լծից» (էջ 109): Իթթիհատականները երկար ժամանակ գործում էին որպես ընկերական սերտ կապերով զոդված ընկերակցություն (ջեմիեթ)՝ գաղտնի ու դավադիր եղանակներով: Թալեաթի կենսագիր թուրք հեղինակներից մեկը գրում է, որ իթթիհատը երկդեմ կազմակերպություն էր, որը բացի լեգալ կառույցներից, ուներ նաև գաղտնի օղակներ, ինչը Թալեաթին հնարավորություն տվեց «ապահովել ջեմիեթի ապօրինի գործողությունը»:[34]

Հեղափոխությունից հետո ակնհայտ դարձավ, որ իթթիհատն անճարակ կուսակցություն էր, ինչը հետևանք էր՝ հինը ոչնչացնելու մոլուցքի տևական գերիշխանության և պետություն կառավարելու փորձի բացակայության: Դրության տերեր էին դարձել արյունախում բախտախնդիրները, որոնք բացի բռնաբարություններից ուրիշ բանի ընդունակ չէին:

Երկրորդ գլխում քննարկվում է Ադանայի կոտորածը: Հեղինակի միանշանակ եզրակացությունն է՝ իթթիհատականները, մասնավորապես Նազիմը, Ադանայի նախճիրի կազմակերպման գործում վճռական դեր են խաղացել: Ադանայի կոտորածը հնարավոր դարձրին մի շարք պարագաներ: Նախ՝ հայերով ու խիտ բնակեցված Ադանան զերծ էր մնացել 1894 թ. կոտորածներից ու ադանացի հայերը բարեկեցիկ վիճակում էին, և թուրքերն այդ քաջ գիտեին: Ավարառության հեռանկարը արդեն իսկ ազդակներից մեկն էր. բացի այդ՝ Ադանայում կար հակաիթթիհատական սուլթանամետ հզոր ուժ, որի հետ համագործակցում էին մոլեռանդ մահմեդական տարրերը, իսկ իթթիհատական հեղաշրջումը սպառնում էր վերացնել այդ խավերի արտոնյալ գոյությունը:

Պատահական չէ, որ Ադանայի իրադարձությունները համընկան Կ.Պոլսի մարտի 31-ի հակաիթթիհատական իրադարձությունների հետ:

Մինչդեռ Ադանայի հայերն, իրոք, հրապուրված էին իթթիհատական հեղափոխությամբ, ինչն օգտագործեցին իթթիհատի պարագլուխները՝ իրենց դեմ բարձրացող դժգոհությունների ուղղությունը փոխելու, այն հայերի դեմ ուղղելու համար:

Ադանայի իրադարձություններն ուսումնասիրող կառավարական հանձնաժողովի կողմից և դրա հիման վրա տեղական իշխանություններին ուղարկված շրջաբերականում գրված էր. «Հայերը, որոնք քանիցս օսմանյան հայրենիքին իրենց նվիրվածության ապացույցներ են տվել, զոհ գնացին անհիմն կասկածներին և գրգռություններին»:[35]

Նույն հանձնաժողովի (որ գլխավորում էր Հակոբ Պապիկյանը) կազմած տեղեկագրում կարդում ենք, որ տեղի իթթիհատական «Jtidal» օմած տեղեկագրում կարդում ենք, որ տեղի իթթիհատական «Jtidal» օմած տեղեկագրում կարդում ենք, որ տեղի իթթիհատական «Jtidal» օ-

մած տեղեկագրում կարդում ենք, որ տեղի իթթիհատական «Jtidal» օ-

[34] Tevfik Cavdar, Talat Pasa. ... Անկարա, 1984, էջ 190, 210:

[35] Հակոբ Յ. Թերզեան, Կիլիկիոյ աղետը, հ. 5, Պոլիս, 1912, էջ 765:

[36] Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի: Հայացուց Յակոբ Սարգիսեան, Պոլիս, 1919, էջ 25, 42:

ռարեց նրան թեթև աքսոր ուղարկելով:[37] Անգլիայի դեսպան Լոուիթերի կարծիքով Հիլմի փաշային երիտթուրքերը զբաղեցրած պաշտոնում թողեցին, քանի որ նա «շատ գաղտնիքների տեղյակ լինելով», ավելի անվնաս էր կառավարության մեջ, քան ընդդիմության շարքերում: Եվ վերջապես՝ Թալեաթն ու նրա գործակիցները, չկարողանալով խափանել հանձնաժողովի նյութերի քննությունը խորհրդարանում, Հ.Պապիկյանին «հանկարծամահ» արեցին:

Վ.Տատրյանը Ադանայի կոտորածն «իթթիհատականների համար փորձաքար» է անվանում, որով նրանք համոզվեցին, որ տերությունները շարունակում են հայկական ջարդերի նկատմամբ իրենց ավանդական անտարբեր վերաբերմունքը: Տերությունները Մերսինի շրջանում կուտակված տեղից չշարժվեցին, մինչև որ չավարտվեց Ադանայի արյունալի բաղնիքը: Երկրորդ՝ երիտթուրքերը հասկացան, որ եթե հայերին հաջողվի թեկուզ նվազագույն չափով զինվել, նրանց կոտորելը դժվար խնդիր է դառնալու: Հետևաբար հայերի կոտորածի գլխավոր նախապայմանը նրանց նախապես զինաթափելն էր: Եվ պատահական չէ, որ այդ իրադարձություններից անմիջապես հետո օսմանյան խորհրդարանը օրենքներ ընդունեց, որոնցով փոքրամասնություններին արգելվում էր քաղաքականապես կազմակերպվել և ազգային նպատակներ հետապնդել: Խորհրդարանն ապօրինի հռչակեց և խիստ պատիժներ սահմանեց արևելյան նահանգներում գործող ֆիդայական խմբերի ու դրանց մասնակիցների նկատմամբ: Ավելի ուժեղացվեց ճնշումը մամուլի վրա:[38]

1910 թ. օգոստոսի 6-ին տեղի ունեցավ երիտթուրքերի Սալոնիկի հանրահայտ ժողովը, որտեղ որոշվեց ձուլել հպատակ ազգերին, նրանց օսմանացնել: Ու ինչպես նկատում է թուրք պատմաբան Հիքմեթ Յուսուֆ Բայուրը, իթթիհատն ի վերջո հարցը «բանակի միջոցով լուծելու մասին պիտի խորհի»:[39] Ուստի միանգամայն իրավացի է Ռենե Պինոն, երբ գրում է, որ Ադանայի սպանդը կայսրությունը միատարր ազգի վերածելու դոկտ. Նազիմի ծրագրի փորձաքարն էր:[40]

[37] Յ. Թերզեան, նշվ. աշխ., 5-րդ հատոր, էջ 809:
[38] Feroz Ahmad, The young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914, Օքսֆորդ, 1969, էջ 61-62:
[39] Yusuf Hikmet Bayur. Turk Ynkilabi Tarihi, h. II, 4-րդ մաս, Անկարա, 1952, էջ 13:
[40] Rene Pinon "La liguidation de l'Empire ottoman", Revue des Deux Mondes, h. 53, 1919թ., էջ 131:

Ադանայի ջարդերի իրականացնողը իթթիհատի տեղական կոմիտեն էր: Եվ երիտթուրք լիդերները չհապաղեցին դրանից համապատասխան եզրակացություններ անել: Սալոնիկի նույն ժողովում Թալեաթը հանձնարարեց. «Պետական պաշտոնյաների կողքին մեր կենտրոնական կազմակերպության ճյուղերի գոյությունը հիմնական հարց է»:

Վ.Տատրյանը գրում է. «Քանի որ թուրքահայության մասնակի կամ ամբողջական բնաջնջումն ընդհանրապես գավառային հարց էր, իթթիհատի գավառային ենթակառույցն այդ բնաջնջման իրագործման մեջ անգնահատելի և վճռական դեր կատարելուն էր կոչված» (էջ 116):

Հետաքրքիր է Վ.Տատրյանի նաև հետևյալ միտքը, որ Բալկանյան «պատերազմի արդյունքը մեծ դեր խաղաց հայկական ցեղասպանության գաղափարի սաղմնավորման մեջ» (էջ 118): Եվ ապա «առաջին անգամը լինելով՝ երկու մոլեռանդորեն հայատյաց իթթիհատականներ, բժիշկներ Նազիմն ու Շաքիրը տիրական դիրք գրավեցին կենտրոնական կոմիտեում: Այդ դիրքն ավելի հզորացավ և ամրացավ՝ շնորհիվ թուրք ազգայնապաշտ և իթթիհատական նույն գաղափարախոսության ռահվիրա Զիա Գեոքալփի աջակցությանը: Նա էր, որ զորավիգ եղավ Թուրքիան ոճրագործ միջոցներով «մաքրազերծելու» գաղափարին, ինչը 1912-13-ին իթթիհատի կողմից որդեգրած կուսակցական ծրագրի հիմնական կետերից մեկը եղավ» (էջ 119):

«Արևելյան հարցը, որ առհասարակ Բալկանների հարցն էր, հատկապես Մակեդոնիայի հարցը, Բալկանյան պատերազմից հետո գրեթե հարտարալուծվելով նույնացավ Հայկական հարցի հետ: Այլ խոսքով՝ Հայկական հարցը Արևելյան հարցի շարունակությունն ու խտացումը եղավ: Հետևյալ կարևոր ազդակներն իրենց ազդեցությունն ունեցան այս գործընթացի մեջ: Առաջին անգամը լինելով՝ թուրքերը դառնությամբ նկատեցին, որ եթե պայմանները թույլ տան, այսպես կոչված անհավատ և նախկին ստրուկ, հպատակ ազգերն ի վիճակի են ոչ միայն զենքով իրենց պաշտպանելու», այլև հաղթելու օսմանյան բանակային ուժերին (էջ 120-121): Իսկ կայսրության դռները համառորեն թակում էին Մակեդոնական հարցը և Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման խնդիրը: Հատկապես վերջինը թուրք լիդերներին հանգիստ չէր տալիս: Իթթիհատական գաղափարախոս Աբդուլլա Ջևդեթը գրեց. «Որոտալից գոռում-գոչյունները, որոնք մեր եվրոպական սահմաններից են լսվում, արդյոք ի վիճակի՞ են մեզ արթնացնել: Ինքներդ ձեզ մի խաբեք՝ մտածելով, թե քանի որ մեր մտահոգությունն-

ներն առնչվում են եվրոպական Թուրքիային, հարկ չկա մտահոգվելու Անատոլիայի համար: Անատոլիան մեր կյանքի ամեն մի մանրաթելի ակունքն է, մեր սիրտը, գլուխը և մեր շնչած օդն է»:[41]

Խմբագրական հոդվածով հանդես եկավ «Թանին» կիսապաշտոնական թերթը. «Ո՞վ կարող է հավաստիացնել, թե այսօր իրեն կենդանացնել ձգտող 23-րդ հոդվածին [Բեռլինի տրակտատում Մակենդոնիային վերաբերող հոդվածն է] վաղը չի հաջորդի 61-րդ հոդվածը... Հետևաբար, երբ խոսում ենք Եվրոպայի միջամտության և Եվրոպայի կողմից մեր ներքին գործերը հակակշռի ենթարկելու մասին, պետք է մտածենք ոչ միայն Ռումելիի, այլև Արևելյան Անատոլիայի մասին, քանի որ Ռումելիին սպասող վախճանից հնարավոր չի լինելու փրկել նաև Անատոլիան»:[42]

Եվ իսկապես, նույն 1913 թվին, երբ թուրքերը հուսալքված ու շփոթված էին, նորից առաջ քաշվեց հայկական բարենորոգումների հարցը, իսկ 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) ստորագրվեց Ա.Մանդելշտամի կազմած և որոշ փոփոխությունների ենթարկված բարենորոգումների ծրագիրը: Թալեաթն ու նրա համախոհները կատաղած էին. օտար տերությունների օգնությամբ բարենորոգումների հասնելուց հայերի ձեռք քաշելուն ուղղված նրանց ջանքերն ապարդյուն էին անցել: Ջեմալ փաշան նույնիսկ հավաստիացնում էր, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու «միակ» պատճառն այս համաձայնագրից ձերբազատվելն էր:[43] Դեռ 1913-ին նույն Ջեմալն իր մոտ հրավիրեց Վարդգեսին ու ասաց. «Եթե դուք պնդեք եվրոպական վերահսկողության վրա, մենք ստիպված ենք լինելու ընդունել: Բայց դրա հետևանքն այն է լինելու, որ այդ վեց վիլայեթներում իսլամ բնակչությունը ոտի կելնի, և 300-400 հազար հայ կոտորվելու է: Հավանական է, որ ռուսներն առիթից օգտվելով գան ու գրավեն այդ նահանգները»:[44]

Խալիլը Գ. Զոհրապին ասել է. «Թուրքերը կգերադասեն մեռնել, քան հայկական հարցում որևէ օտար պետական միջամտություն ընդունել»: Զոհրապը գրում է, որ Խալիլի այդ այցը «գերագույն ու վերջին ձեռնարկն էր թուրքերի և հայերի միջև խզումը պատերազմի վերածվելուց առաջ»:[45]

Թալեաթը բազմիցս զգուշացրել է Վարդգեսին ու Գ.Զոհրապին, թե հայերը պետք է խուսափեն դիմել «մանավանդ իրենց մահացու թշնամի ռուսներին, որովհետև այդ կնշանակի օսմանյան տարածքների անդամահատում», հարկ է ձեռք քաշել «դրսից» և առանց աղմուկի լուծել «մեր ներքին ընտանեկան վեճերը»: «Իսկ եթե այս անգամ էլ չլսեք մեզ և շարունակեք ճնշում գործադրել օտար ուժերով, միևնույն է, որևէ իրական արդյունքի չեք հասնի»:[46]

Մի այլ անգամ իթթիհատականները նորից սպառնացել էին. «Հայերը մի նոր Բուլղարի են ուզում ստեղծել... Դեռևս չեն խրատվել, չգիտեն, որ մեր կամքին հակառակ որևէ ձեռնարկ ջախջախվելու է: Թող սպասեն, հավանաբար մեզ ևս պատեհությունը չի պակասի»:[47]

Երբ դեռ ընթացքի մեջ էին բարենորոգումների շուրջ բանակցությունները, 1914 թ. ձմռանը սուլթանական պալատում իթթիհատականները ժողով են գումարում, որտեղ Թալեաթը, Էնվերը և այլոք «ամենախիստ ձևով են արտահայտվում հայերի դեմ, նրանց ներկայացնելով անջատողականներ և Ռուսաստանի ու Անգլիայի ձեռքին գործիք, խռովարարներ և հայ ազգի դեմ ծանր որոշումներ են ընդունում»:

Հարցն ավելի սուր բնույթ ստացավ այն օրից, երբ ցարական կառավարությունը դեն նետեց հայերի հանդեպ լոբանովյան քաղաքականությունը և հանդես եկավ Հայկական հարցի հովանավորի դերում:

Իր հուշերում Սազոնովը պատմում է 1914 թ. մայիսի 14-ին, Ղրիմում գերմանական զինվորական առաքելության Թուրքիա գալու հետ կապված բանակցություններում իր և Թալեաթի հանդիպման մասին. «Ես ունեի մի այլ ավելի ազդեցիկ միջոց, որը միշտ հարկ եղած ազդեցությունը գործում էր թուրքական կառավարության վրա... Ռուսական կառավարության կողմից հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու ձեռնարկը, որին ես մեծ կարևորություն էի տալիս, իթթիհատական կառավարության համար հատկապես անախորժ էր, քանի որ այն համարում էր հարված իր անկախությանը... Թալեաթի հետ ունեցած հանդիպումներում իմ միակ նպատակն էր համոզել նրան, որ մենք

[41] Tarik Zafer Tunaya. Turkiye de Siyasal partiler, Գ հատոր, Ստամբուլ, 1989, s. 463.
[42] Անտոնեան Ա., Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն Պալկանեան պատերազմին, Գ հատոր, Կ. Պոլիս, 1912, էջ 459:
[43] Cemal Pasa, Hatiralar, Ստամբուլ, 1977, s. 438.
[44] Արմեն Գարո, Ապրած օրեր, Պոսթոն, 1948, էջ 191:

[45] Նայիրի, 22-րդ հատոր, թիվ 46-50, մայիս 1975, էջ 3, 4:
[46] Վ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 236:
[47] Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 838:

Հայկական հարցին չափազանց մեծ նշանակություն ենք տալիս և մտադիր ենք աներեր հետևել այդ խնդրին, մինչև որ իրականացվեն բարենորոգումները»:[48]

«Ռուսական գործոնը,- գրում է Վ.Տատրյանը,- հակառակ իր հայանպաստ նպատակադրման, հայերի համար դարձավ աղետալի», հատկապես թուրք-գերմանական ռազմաքաղաքական դաշնակցության 1914 թ. օգոստոսի 2-ի պայմանագրից հետո: Մանավանդ որ՝ թուրքերը կարողացան ապահովել Գերմանիայի ռազմական և քաղաքական իշխանությունների լռելյան գործակցությունը հայկական նախճիրին:

Թուրքիայի ընդհանուր անվտանգության գերատեսչությունում ստեղծվեց հայերին հետապնդելու, լրտեսելու և հսկողության տակ առնելու մասնաճյուղ, որը ղեկավարում էր ոստիկանական բաժնի տնօրեն, տխրահռչակ Բեդրին: Եվ ահա «վտանգավոր» հայերի համար «անձնական թղթապանակներ» ստեղծվեցին, և նրանց բոլոր կասկածելի քայլերն արձանագրվում էին: Պատերազմի հենց սկզբից ստեղծվեց մի գերգաղտնի մարմին, որի պարտականությունն էր հայերին ահաբեկել և վախի մեջ պահել: Այս մարմինը գործում էր Բեդրիի՝ Անվտանգության ընդհանուր տնօրենի, Թալեաթի մտերիմ Մուսաֆա Ռեշադի, Ազիզ և Էսադ բեյերի ղեկավարության ներքո: Բեդրին ու Ռեշադն իրականացրին պոլսահայ մտավորականության ձերբակալությունն ու աքսորը: Այս մարմիններում առանձնահատուկ էր Ջանփոլադի դերը: Նրան էին ենթարկվում տեղահանության և տարագրության գործերը վերահսկող գավառական ոստիկանական ուժերը» (էջ 126):

Այս գիշատիչներից Էսադը անգլիացիներին հանձնեց իթթիհատի գաղտնի փաստաթղթերը, որոնցում «կար հայկական ցեղասպանության ծրագրի նախնական մի ուրվագիծ, որ ինքն անձամբ էր գրի առել իբրև իթթիհատական գաղտնի ժողովների արձանագրությունների համար պատասխանատու: Այդ ժողովին ներկա են եղել Թալեաթը, Նազիմը, Բ.Շաքիրը, Ջանփոլադը և գնդապետ Սեյֆին» (էջ 126):

Գերմանացիների խորհրդով ստեղծվեց Հատուկ կազմակերպություն, որի առաջ խնդիր էր դրված գործել ռուսական բանակի դեմ ու նրա թիկունքում: Սակայն նրանք այս խնդիրը լուծել չկարողացան, և Բ.Շաքիրի պնդմամբ նրանց նոր առաջադրանք տրվեց՝ իրականացնել

[48] Souvenirs de M. S. Sazonov, Les Annees fotales, Փարիզ, 1927, էջ 143, 144-145.

հայերի բնաջնջումը, ինչը գործնական քաղաքականություն դարձավ Սարիղամիշի ճակատամարտում թուրքերի խոշոր պարտությունից հետո: Նույնիսկ սուլթանական «իրադե» հրապարակվեց այս կազմակերպության գործունեության վերաբերյալ, որը նրա գործողությունների շուրջն օրինականության պատրանք ստեղծեց ու այդ ջարդարար կազմակերպության առջև դռները լայնորեն բացեց ամեն տեսակ չարագործությունների համար: Հիմնականում ոճրագործներից կազմված այս կազմակերպությունը գործում էր իշխանության մարմիններից անկախ, այն պետություն էր պետության մեջ: Իթթիհատականները, սկսած 1913 թվից, իրենց ձեռքը վերցրին կենտրոնական և տեղական իշխանությունների բոլոր մարմինները:

Մասնավորապես՝ ոստիկանական ծառայությունն անցավ մոլեռանդ հայահալած իթթիհատականների ձեռքը: Հատուկ կազմակերպության ղեկավարներից մեկի վկայությամբ ոստիկանության տնօրինությունը, մասնավորապես՝ հայության պատուհաս Բեդրին, ամբողջությամբ իթթիհատի կենտկոմի տնօրինության տակ էր:

Եվ եթե նաև նկատի առնվի, որ իթթիհատի ղեկավարության կազմում վճռորոշ խոսքը պատկանում էր պանթուրքիստական հակահայ ուժերին,[49] որ բալկանյան պատերազմից ու բարենորոգումների ծրագիրն ընդունելուց հետո թուրքական ազգայնամոլական շրջաններում հակահայ տրամադրություններն իրենց բարձրակետին էին հասել, ու նաև այն, որ «Թուրքիան թուրքերին» նշանաբանը դարձել էր գործունեության նպատակ, գործնական քաղաքականություն, ապա միանգամայն հասկանալի պետք է համարել գերմանական դիվանագետ Ռ.Կալմանի հետևյալ կարծիքը (1917 թ. փետրվարի 16). «Հայերի բնաջնջումը, որն արդեն լայն տարողությամբ իրագործված է և բխում է բնաջնջելու քաղաքականությունից, հետևանք է հայերի սանձազերծած բարենորոգումների հատուկ շարժման, հատկապես 1912-ի բալկանյան պատերազմից հետո նրանց ջանքերի»:[50] Հասկանալ կարելի է, բայց ոչ ճշմարտության տեղ ընդունել: Ոչ թե հայերի ջանադրությունն, այլ, ինչպես վկայում է հանրահայտ հրեա գործիչ Ուրիել Հեյետը, Ջիա Գեոքալփը մշակեց փոքրամասնություններ և, մասնավորապես, հայերի հան-

[49] Gavdar, Talaf Pasa, s. 73.

[50] Գերմանական արտ. գործ. նախ. արխիվ, A. A. Turkia. 183/46, A. 5919:

դեպ քաղաքականության ծրագիր, որն ընդունվեց կուսակցության և, հիմնականում, իրագործվեց կառավարության կողմից:[51]

Ցեղասպանության գործում իթթիհատականները մեծ տեղ էին հատկացնում նաև զինված ուժերին, մասնավորապես, 3-րդ բանակին, որը հիմնականում տեղակայված էր Արևմտյան Հայաստանում, որի սպայական անձնակազմը ճնշող մեծամասնությամբ իթթիհատական էր: 1914-ի հունվարին ամբողջ բանակը «իթթիհատականացվեց», նրանից դուրս մղվեցին բոլոր ոչ ազգայնական հրամանատարները: Դրանով բանակը քաղաքականացվեց և ներգրավվեց հայասպանության գործընթացի մեջ:

«Հատուկ կազմկերպությունը,- գրում է Վ.Տատրյանը,- իթթիհատի այն մահասփյուռ դժոխային մեքենան էր, որի միջոցով այդ կուսակցությանը հաջողվեց ներթափանցել թուրքական պետական հաստատության մեջ, այլափոխել այդ պետության կառուցվածքային... բնույթը»: Եվ որպես այս խոսքերի ապացույց բերված է նախկին մեծ եպարքոս (վարչապետ) Սայիդ Հալիմի տված ցուցմունքը, որ Հատուկ կազմակերպությունն առանց կառավարության գիտության կազմված «շատ վատ» մարմին էր: Ամեն անգամ, երբ Ռազմական նախարարությանն այս մարմնի գործունեության մասին պաշտոնական հարցապնդում էր լինում, «կամ ուրանում էին նման կազմակերպության գոյությունը և կամ պատասխան չէին տալիս», Թալեաթը սանձարձակ գործող մեկն էր և «ցանկացածն անում էր»:[52] Սրան թուրք պատմաբան Ջեմալ Քութայն ավելացնում է «հսկայական կայսրությունը ենթարկված էր կուսակցական բռնակալությանը»:[53]

Թվում է, թե Վ.Տատրյանը չափազանցեցնում է Հատուկ կազմակերպության դերը, նրա ազդեցությունը պետական համակարգի վրա. հազիվ թե անկեղծ է Ս.Հալիմի ցուցմունքը: Հավանաբար այս խնդրում ևս միտումնավոր առաջ են մղվում առանձին անձիք ու կազմակերպություններ՝ թուրքական պետական-կառավարական համակարգին ու, առավել ևս, թուրք իթթիհատական կուսակցության հետ, իբր թե հայկական ցեղասպանությունը միայն նրանց ձեռքի գործն է: Սակայն պարզից էլ պարզ է, որ այդ քաղաքականության ակունքները հրապարակում իթթիհատականության երևան գալուց շատ ավելի վաղ եղած իրողությունների համակարգում էին: Հայերի բնաջնջումը թուրքերի ազգային-պետական քաղաքականությունն էր, և թե՛ Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանը, թե՛ Միություն և առաջադիմություն կուսակցությունը և թե՛ քեմալականությունն այլ բան չէին, եթե ոչ այդ քաղաքականությունը գործադրելու միջոց, զենք: Ճիշտ է, պատմական պայմանների տարբերությունների հետևանքով այդ միջոցները տարբեր ծավալի ու բնույթի ներդրում ունեին հայության բնաջնջման գործում, սակայն դա բացարձակապես չի փոխում դրանց այլամերժ հայասպան դեմքը: Այո՛, հայերի բնաջնջման «գլխավոր ծանրությունը» դրվեց իթթիհատի ուսերին, այս վերջինս նախատատրաստական-կազմակերպական ու քարոզչական մեծ աշխատանք կատարեց՝ այդ խնդիրն իրականացնելու համար, սակայն հավանաբար ճիշտ չէ ասել, թե «իթթիհատը փորձեց պետության դեմքով հրապարակ իջնել... Հայկական ցեղասպանությունը ցայտուն արտահայտությունն է միահեծան և բռնակալ կուսակցության այն հանցագործ նպատակադրության, որով մի ամբողջ ազգ կործանվեց շնորհիվ իթթիհատի կուսակցության դավադրական միաձուլման օսմանյան պետության հետ» (էջ 133): Եթե ցեղասպանությունը չբխեր օսմանյան պետական քաղաքականության շահերից, հազիվ թե հնարավոր լիներ այդ միաձուլումը: Ցեղասպանությունը միջոց էր Արևմտյան Հայաստանը թուրքերի հայրենիք դարձնելու օսմանյան իդեաների իրականացման համար:

Գրախոսող՝ Ստեփան Պողոսյան

[51] Uriel Heyd, Foundations of Turkish Nationalism The Life and Teachings of Ziya Gokalp, Լոնդոն, 1990, 36:

[52] Harb Kabinelerinin Isticvabi, Ստամբուլ, 1933, էջ 287.

[53] Kutay, Birinci (թիվ 33 ծանոթ.), էջ 36:

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ
(կենսագրական տվյալներ)

Բարձրագույն կրթությունը ստացել է Եվրոպայում: Ուսանել է Բեռլինի համալսարանի մաթեմատիկայի, Վիեննայի համալսարանի պատմության և Ցյուրիխի համալսարանի միջազգային օրենսգիտության բաժիններում:

Ուսումնառության տարիներին Բեռլինի համալսարանում արժանացել է Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտի, Ցյուրիխի համալսարանում՝ Ֆեզեի կրթաթոշակներին: Տեղափոխվելով Ամերիկայի միացյալ նահանգներ՝ Չիկագոյի համալսարանում շարունակել է ուսումնառությունը սոցիոլոգիայի գծով ու ստացել փիլիսոփայության և սոցիոլոգիայի դոկտորի աստիճան:

Շուրջ քսան տարի դասավանդել է ամերիկյան մի շարք համալսարաններում, միաժամանակ որպես ավագ գիտաշխատող պաշտոնավարել Հարվարդի համալսարանի Միջին արևելքի ուսումնագիտական և Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտի Միջազգային ուսումնասիրությունների կենտրոններում: Առանձին դասախոսություններով հանդես է եկել Բեռլինի, Մյունխենի, Ցյուրիխի, Իտալիայի Պարմա և Տորինո, Շվեդիայի Ուբսալա քաղաքների համալսարաններում:

1991 թ. դասախոսություններով հանդես է եկել Ֆրանկֆուրտի, Քյոլնի, Բոխումի և Մյունստերի, 1993-94 թթ.՝ Հոլանդիայի մի շարք համալսարաններում: 1996 թվականին հրավիրվել է Բրիտանական խորհրդարանի համայնքների պալատ, որտեղ հանդես է եկել Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված դասախոսությամբ: Նա այդ պատվին արժանացած առաջին հայ գիտնականն է:

Պրոֆեսոր Վահագն Տատրյանի գիտական հետազոտություններն ընդգրկում են ցեղասպանության հիմնախնդիրները և նվիրված են Հայոց ցեղասպանության

պատմագիտական ուսումնասիրությանը: Դրանք երկու տասնյակից ավելի արժեքավոր մենագրություններ և հարյուրից ավելի հոդվածներ են, որոնք ընթերցողների լայն շրջաններին են ներկայացվել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն և հայերեն լեզուներով:

1970-1991 թթ. զբաղեցնելով Նյու-Յորքի համալսարանում սոցիոլոգիայի գծով պրոֆեսորի պաշտոնը՝ Վահագն Տատրյանը մանկավարժական աշխատանքին զուգընթաց շարունակեց իր ուսումնասիրությունները հայոց ցեղասպանության բնագավառում՝ հանդես գալով նոր հարցադրումներով և նորահայտ փաստաթղթերի վերլուծությամբ: Վ.Տատրյանի վերջին շարքի հրատարակությունները արժանավոր արձագանք են գտել աշխարհի շատ երկրների մամուլի էջերում:

1995 թվականին, Հայոց ցեղասպանության 80-ամյակի առթիվ, Ստամբուլում թուրքերեն, Փարիզում ֆրանսերեն լեզուներով լույս տեսան Վ. Տատրյանի՝ Հայոց ցեղասպանության իրավաբանական վերլուծությանը նվիրված մենագրությունները: Թուրքիայում լույս տեսած աշխատությունը սկզբնական շրջանում դատական հատուկ վճռով արգելվեց, որը սակայն բեկանվեց թուրքական վճռաբեկ դատարանի կողմից:

1995 թվականին ԱՄՆ-ում և Անգլիայում լույս տեսավ Վահագն Տատրյանի «Հայոց ցեղասպանության պատմությունը (էթնիկական ընդհարումները Բալկաններից մինչև Անատոլիա և Կովկաս)» մեծածավալ աշխատությունը, անգլերեն լեզվով: Այն հեղինակի քսան տարվա քրտնաջան գիտական աշխատանքի արդյունքն է, որտեղ նա հիմնականում երկու նպատակ է հետապնդել, նախ՝ Թուրքիայի և Գերմանիայի պաշտոնական ու արխիվային նյութերի հիման վրա ուսումնասիրել ու բացահայտել է Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության փաստերը, ապա՝ պատմագիտական քննական վերլուծության ենթարկել դրանք:

Նույն՝ 1995 թվականին, հայերեն լեզվով, մեկ գրքով լույս տեսան նաև նրա երկու արժեքավոր աշխատությունները՝ «Հայկական ցեղասպանությունը հետպատերազմյան օսմանյան խորհրդարանի մեջ» և «Մի պետության և պետական մի կուսակցության միաձույլ դերը հայ-

կական ցեղասպանության մեջ» խորագրերով:

Բացառիկ արժեք են ներկայացնում վերոհիշյալ աշխատության մեջ հայ, հույն և թուրք երեսփոխանների ու նախարարների ելույթների սղագրությունները, որտեղ ուղղակի հիշատակվում են հայերի տեղահանության և ջարդերի հետ առնչվող ոճրագործության մեղադրանքները, թուրքերի խոստովանություններն ու զղջումի հավաստիքները:

1996 թ. ապրիլին Քեմբրիջում լույս տեսավ Վ. Տատրյանի «Գերմանիայի պատասխանատվությունը հայերի ցեղասպանության համար» ծավալուն աշխատությունը: Աշխատությունն ամբողջովին հիմնված է գերմանական և թուրքական արխիվներից տվյալների վրա:

Վ. Տատրյանի վերջին աշխատությունները ևս մի ահազանգ են աշխարհի խոշոր տերություններին՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, անհամեմատ ավելի նոր հարցադրումներ առաջադրելով քաղաքական ու գիտական շրջանակներին: Վ. Տատրյանի փաստագրությունը մի ավելորդ անգամ հաստատում է այն տեսակետը, որ Գերմանիան դարասկզբին «գլխավոր փորձ» էր կատարել, նախքան կկատարելագործեր իր մեթոդները երկրորդ համաշխարհայինի ժամանակ:

Ներկայումս պրոֆեսոր Վ.Տատրյանն իր աշխատությունների շնորհիվ արտասահմանում ունի մեծ ճանաչում, որպես Հայոց ցեղասպանության բնագավառի ամենանշանավոր հետազոտող: Վ.Տատրյանի հրապարակումների միջոցով Հայոց ցեղասպանությունն այսօր, ավելի քան երբևէ, լայն ճանաչման է արժանացել միջազգային հանրության կողմից:

1998 թ. լույս տեսավ Վ.Տատրյանի «Ցեղասպանության ճանաչումը թուրք-հայկական հակասության ելակետային հիմքն է» նոր աշխատությունը:

1995 թվականին, հաշվի առնելով պրոֆեսոր Վ. Տատրյանի խոշոր ներդրումը պատմագիտության մեջ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհեց Պատվավոր դոկտորի աստիճան:

Ներկայումս Վ.Տատրյանը ԱՄՆ-ում ցեղասպանությունը ուսումնասիրող մի նախագծի տնօրենն է, որը հովանավորում է Հ.Ֆ.Հուգենհայմ հիմնադրամը:

АКЧАМ ТАНЕР, Турецкое национальное "я" и Армянский вопрос

Москва, Издатель АО "Арио-никс", 1995, 199 стр.

(ԱՔՉԱՄ ԹԱՆԵՐ, Թուրքական ազգային «ես»ը և Հայկական հարցը

Մոսկվա, Հրատարակիչ՝ «Արիո-Նիքս» ԱԸ, 1995, 199 էջ)

Գիրքը ռուսերեն է թարգմանել Մ. Տ. Բոջոյանը:

Թ.Աքչամն իր գրքում խորտակում է այն թաբուն, որ Թուրքիայում դրված է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ճշմարտության վրա: Հեղինակը, օգտագործելով պատմական հարուստ նյութը, քննում է բռնության դերը թուրքական ազգային գիտակցության ձևավորման և թուրքական պետականության կայացման գործընթացում: Բռնությունը չդատապարտելը և այն պետական քաղաքականության մակարդակի բարձրացնելն իր կնիքն է դրել նաև Թուրքիայի հանրապետության ժամանակակից կեցության վրա, որտեղ մինչև օրս էլ շարունակվում է ազգային փոքրամասնությունների ոչնչացման և ուծացման քաղաքականությունը: Հեղինակի ազնիվ, անկիրք դիրքորոշումը կանխորոշել են նրա մոտեցումը՝ հայկական ողբերգության և դրա՝ հենց իր՝ Թուրքիայի համար հետևանքների վերլուծության պարագայում: Թ.Աքչամի գիրքը թուրքական զղջման առաջին քայլերից է:

Այդ գիրքը օրինաչափ երևույթ է: Վաղ թե ուշ թուրքերը փորձելու էին դուրս գալ ողբերգության շուրջը տասնամյակներ շարունակ հյուսված ստի ու խաբեության մոգավանջից և ազնիվ հայացքով նայել սեփական պատմությանը:

Գիրքը սկսվում է փիլիսոփա Վ. Նադեին-Ռաևսկու՝ «Թ. Աքչամի գրքի մասին» համառոտ խոսքով: «Ուսումնասիրողների համար, ովքեր ծանոթ են այս հիմնախնդրին,- գրում է նա,- սովորական է դարձել թուրք հեղինակների՝ հայ ժողովրդի պլանավորված ոչնչացման փաստը չընդունելը, ինչպես նաև արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի և գենոցիդի՝ թուրքական պատմագրության մշակած կեղծարար

տեսությունը: Ահա թե ինչու թուրք հետազոտող Թ. Աքչամի աշխատությունը... առաջ է բերում ընթերցողների ոչ միայն հետաքրքրությունը: Գիրքը զարմացնում է հարցին հիմնավոր մոտեցմամբ, հին տեսակետներից ձերբազատված հասուն մտածողի խոհականությամբ... Թ. Աքչամի հիմնական ծառայությունը սակայն ոչ թե նրա գիտական խիզախությունը, հավասարակշիռ... մոտեցումն է ուսումնասիրվող թեմային, այլ այն, որ հեղինակը բացահայտում է... այդ հանցագործության արմատները, ապացուցում, որ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայերի ցեղասպանությունը հնարավոր դարձավ ոչ թե առանձին չինովնիկների քմահաճույքի պատճառով. այն Օսմանյան կայսրության զարգացման ու անկման առանձնահատկությունների միանգամայն օրինաչափ հետևանքն էր, որոնք ազդեցություն գործեցին թուրքերի ազգային ինքնագիտակցության վրա և այն ձևախեղեցին ու վերածեցին մարտնչող ազգայնամոլության» (էջ 6):

Սակայն դժվար է համաձայնվել հեղինակի այն կարծիքի հետ, թե ցեղասպանության թուրքական քաղաքականությունը ամբողջությամբ ծնունդ էր բուրժուական ազգայնամոլության: Գրքում խոսքն այն մասին չէ, թե եղել կամ չի եղել Հայոց ցեղասպանությունը, այստեղ պատասխան է տրվում այն հարցին, թե թուրքերը ինչո՞ւ են հրաժարվում ընդունելու ցեղասպանության իրողությունը և խուսափում այդ հարցի շուրջ քննարկումներից: Հայերի ոչնչանալը բացատրել «եղանակային աննպաստ պայմաններով», «զոհերի տարիքով», «սովով» և այլն, ինչպես նշում է հեղինակը՝ «խայտառակություն է մարդկության առաջ»:

Զոհերի աննախադեպ մեծ թվից (օրը՝ միջին հաշվով 1000 մարդ) սարսափելու, այդ երևույթները ապագայում կանխելու մասին մտածելու փոխարեն նման գրքերի հեղինակները գտնում են. «Թող այդ նրանց համար դաս հանդիսանա, թե չէ՝ կկրկնենք նույնը»:

Պնդումները, թե հայերը ևս սպանել են թուրքերին, իրականություն են միայն պայմանականորեն: Այո, 1917 թ. հետո հայերը վրեժխնդիր են եղել և ոչնչացրել 40 հազ. թուրք: «Մինչդեռ այն, ինչ կատարվեց 1915-ին, նպատակ ուներ ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի: Այդ գործողությունը պլանավորված էր պետության, մասնավորապես, իշխանության ղեկի մոտ գտնվող կուսակցության կողմից և իրագործվեց բյուրոկրատական կառույցների միջոցով: Իսկ կոտորածները (հայերի կողմից) ավելի տեղային վարչական այս կամ այն տարածք ընդգրկող բնույթ ունեն»,- նշում է հեղինակը: Այնուհետև. «... մենք պետք է քննադատենք

ինքներս մեզ, որպես մի ազգի ներկայացուցիչների, որն իրականացրել է կոտորածի և գենոցիդի գործողություն այլ ազգերի ու ժողովուրդների հանդեպ» (էջ 11):

Հեղինակը Հայոց ցեղասպանության հանդեպ թուրքական դիրքորոշումների արմատական վերանայումը համարում է նախապայման Քրդական հարցի լուծման պարագայում: Այդ վերանայումը հնարավորություն կտա հրաժարվելու պետության և ազգի նույնացումից, այսինքն՝ հրաժարվելու ազգային պետության իրողությունից և ստեղծելու վերազգային պետություն, ուր հնարավոր լինի քրդերի ու թուրքերի խաղաղ համակեցությունը: «... Ազգային պետության ստեղծման գործընթացը ուղեկցվել է բռնության խոշոր գործողություններով: Ազգային «եսը» ազգային պետություն ստեղծելու նպատակին հասել է ոչնչացնելով նրանց, ովքեր տվյալ ազգին՝ թուրքերին չէին պատկանում»:

Աշխատության նախաբանը սկսվում է հետևյալ տողերով «Գրքի ուշադրության կենտրոնում է թուրքական ազգային «եսը» և փորձ է կատարվում վերլուծելու նրա բաղադրիչները», քանի որ հայկական ցեղասպանությունը ծնող պատճառների հիմնական բաժինը կապված է այդ երևույթի հետ: «Ազգային այդ առանձնահատկությունը որոշիչ էր նաև հանրապետության հռչակվելու շրջանում և դարձավ պատճառ «Հայկական հարցի վրա թաբու դնելու համար» (էջ 15):

Բանն այն է, որ կատարածը համարելով լոկ մի բուռ մարդկանց սատանայական չարագործության հետևանք, ինչպես նշում է հեղինակը՝ «մենք փաստորեն խույս ենք տալիս քննադատությունից»: Մինչդեռ անհրաժեշտ է այդ չարագործությունների պատճառը և դրանց հեղինակներին «սատանաների ու ոգիների աշխարհից հանել ու բերել մարդու արարքների բնագավառը»: Ընդ որում այդ պետք է արվի առանց փնտրելու պատճառներ, որոնք «մեղմացնում են կատարված հանցագործության բնույթը»:

Հայոց ցեղասպանության մասին նույնիսկ հիշատակությունը Թուրքիայում եղել ու մնում է խստագույն արգելքի տակ: Թուրքիայում Հայկական հարցի մասին որպես կանոն գրել են միայն կամ «պաշտոնական պետական ծառայությունները և կամ ազգայնամոլական ու իսլամամետ ուղղությանը պատկանող հեղինակները: Հարձակման հիմնական օբյեկտը հայերն են, որոնք մեղադրվում են «սև երախտամոռության և շառլատանության մեջ»:

Շրջանառության մեջ է այն մտայնությունը, թե իրականում զոհերը

ոչ թե հայերը, այլ թուրքերն են, խոսվում է «հայերի գազանություններ-ի», «հայերի կողմից սպանված միլիոնավոր մահմեդականների» մասին: «Հայատյացների ստեղծագործությունների մեծամասում արտահայտվում են բացահայտ ռասիստական կարգախոսներ»:

Ահա մի քանի քաղվածք՝ Թուրքական պատմության ընկերության հրատարակություններից «Սր. Մարկ Սայքսը բերում է հետաքրքիր տվյալներ հայերի իսկական կերպարի, նրանց հավակնությունների մասին: Համաձայն նրա կարծիքի հայերը ստոր մարդիկ են, որոնք զզվանք են առաջացնում: Նույնիսկ հրեաները դրական գծեր ունեն, իսկ հայերը՝ ոչ...» *Enver Ziya Karal, Osmanli Tarihi, Cilf VIII, s. 145, T. T. Kurumu. Yayini, Ankara, 1986.*

Մի այլ գրքում կարդում ենք. «Իրականում հայ պարագլուխները, ինչպես այդ մասին վկայում է Լորդ Քերզոնը, անարժան մարդիկ էին: Երևանում ամերիկյան օգնության պատասխանատու գնդապետ Հասկելը հայերին անվանել է գողեր, խաբեբաներ, ցածր մարդիկ»: (Salahi R. Sonyel, Turk Kurtulus savasi ve dis Politika, CilfII, s. 36, T. T. Kurumu Yayini, Ankara, 1986):

Թաներ Աքչամի գիրքը կազմված է երեք մասից.

1. Թուրքական ազգային «եսը» և նրա մի քանի առանձնահատկությունները:

2. Հայերի ցեղասպանության մի քանի ասպեկտները և թուրքերի լռությունը:

3. Եզրակացություն. գենոցիդի ընկալման հարցի շուրջ:

Գիրքն ունի հավելված, օգտագործված աղբյուրների ցանկ ու ծանոթագրություններ:

Առաջին մասում տրված է ազգային «եսի» բնորոշումը որպես պատմականորեն ձեռք բերված բնավորության գծեր, որը ոչ թե «բնածին է», այլ ձեռքբերովի և հետևաբար նաև ոչ մշտական, այլ ժամանակավոր: Հեղինակը ազգ հասկացողության մեջ դնում է քաղաքական իմաստ և ուղղակի կապ տեսնում ազգային «եսի» ու ազգային պետության մեջ: Ընդ որում նա թուրքական ազգային «եսի» ձևավորվելը համարում է ուշացած և դրանով է բացատրում թուրքերի ագրեսիվությունը, որը ծնվել է բաց թողածը լրացնելու ձգտումից: Իր միտքը հաստատելու համար հեղինակը բերում է մի երկխոսություն, որը կայացել է Փարիզում, XIX դարի վերջին.

«-Դուք ի՞նչ ազգի եք պատկանում:

- Մենք մահմեդական ենք:

- Բայց դա չէ՞ որ կրոնական պատկանելություն է:

- Այդ դեպքում մենք օսմաններ ենք:

- Բայց չէ՞ որ այդ էլ ազգություն չէ»:

Նույնիսկ երիտթուրքերը իրենց թուրք չէին անվանում: Նրանց հեղափոխության հաղթանակի շքահանդեսին Սալոնիկում երգում էին ոչ թե թուրքական, այլ ֆրանսիայի հիմնը:

Հունգարացի արևելագետ Ա. Վամբերին 1898 թվին գրում է, որ ինքը Ստամբուլում չհանդիպեց գոնե մի թուրքի, որը լրջորեն հետաքրքրվեր թուրքական նացիոնալիզմի ու թուրք լեզվի խնդիրներով: Թուրքիզմի հիմնադիր և գաղափարախոս Զիա Գեոքալփը թուրքական պատմությունով սկսեց հետաքրքրվել միայն այն բանից հետո, երբ 1896 թ. կարդաց Լեոն Կաժի գիրքը՝ թուրքերի մասին: Նույնիսկ XX դարասկզբին օսմանյան դպրոցներում թուրքերի պատմություն չէր դասավանդվում, 1911 թ. թուրքական դպրոցների 2/3-ում թուրքերի պատմության փոխարեն դասավանդվում էր Ֆրանսիայի պատմությունը, իսկ մնացած 1/3-ում՝ եվրոպական այլ պետությունների պատմությունը: Մինչև 1908 թ. հեղափոխությունը թուրքերեն լեզուն մուտք չուներ մեդրեսներ: Դասավանդվում էր միայն օսմանա-իսլամական պատմությունը: Ահա այս վիճակը կարճ ժամանակահատվածում փոխելու ձգտումն էր հենց, որ ծնեց թուրքերի՝ մյուս էթնիկական խմբերի հանդեպ այդքան արտահայտված ագրեսիվ մոտեցումը:

Իսկ այդ վիճակի գլխավոր պատճառն իսլամն էր: «Օսմանցիների շրջանում մուսուլմանական գիտակցությունը, ի տարբերություն մահմեդական այլ երկրների, զարգանում էր ի վնաս թուրքիզմի: Այն թուրքերի շրջանում այնքան մեծ ազդեցություն ուներ, որ թուրքական ոչ մի պետությունում թուրքերենը չդարձավ պաշտոնական լեզու: Վամբերին նկատում է, որ «ապազգայնականացման միտումներում իսլամը ոչ մի տեղ չհասավ այնպիսի խոշոր հաջողության, ինչպես օսմանյան թուրքերի շրջանում»: Սկսած VIII դարից արաբ-պարսկական մշակույթը վերացրեց թուրքական մշակույթը, միտքը և պատմությունը: (Հավանաբար այդ վիճակի գլխավոր պատճառը ոչ այնքան իսլամն էր, որքան թուրքականի հետ համեմատած պարսկա-արաբական մշակույթի բարձր մակարդակը և այն, որ հարյուրամյակներ շարունակ արաբները տիրապետող տարր էին):

Կայա փոքրիկ ցեղը, հասնելով աշխարհակալ տիրակալության, անուշադրության մատնեց իր էթնիկական ինքնությունը: Նա օսմանի ժառանգն ու հետնորդն էր և նրան խորթ էին «հայրենիք» և «ազգ» հասկացությունները: Սակայն դժվար է հեղինակի հետ համաձայնվել, որ հեղափոխությունների, այդ թվում նաև ֆրանսիական հեղափոխության հանդեպ թուրքերի բացասական վերաբերմունքը նույնպես հետևանք էր իսլամի ազդեցության: Չժխտելով, որ իսլամն այդ գործում և, ընդհանրապես, հասարակական տեղաշարժերի ու փոփոխությունների հանդեպ, մերժողական վերաբերմունք էր դրսևորում, այնուամենայնիվ տվյալ դեպքում առաջնայինը ոչ թե կրոնական դոգմաներն էին, այլ դասակարգային, հատվածային շահերը: Եվ այն, որ թուրքերը «հայրենիք» հասկացողությունը չէին ընկալում («Հայրենիքը, - ասել է Աբդուլ Համիդը, - վայր է, որտեղ մարդը ոտք է դնում: Ինձ հասկանալի չէ, թե ինչպես՞ կարելի է հանուն դրա մեռնել»), ոչ թե թուրքերին հատուկ և նրանց ինտերնացիոնալիզմը շեշտող այլ այնպիսի երևույթ է, որը եղել է շատ ժողովուրդների մոտ և հետևանք է զարգացման որոշակի մակարդակի: Օրինակ՝ ռուս գյուղացին մինչև XIX դարն իրեն անվանում էր ոչ թե ռուս, այլ մուժիկ: Համազգային մտածողության ծնունդը կապված է կապիտալիստական հարաբերությունների զարգացման և ազգերի ձևավորման հետ: Այն չպետք է շփոթել հայրենասիրության հետ, որը շատ ավելի մեծ անցյալ ունի, քան ազգի, հայրենիքի ժամանակակից հասկացությունները:

Թ.Աքչամը բացարձակապես իրավացի է, երբ գրում է. «Օսմանյան պարագլուխները քաջ գիտակցում էին, որ նացիոնալիզմի գաղափարների տարածումը կարող է հանգեցնել կայսրության անկման» (էջ 23):

Դրանով է բացատրվում այն, որ այդ լիդերները հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, որպես այդպիսին, չէին գնահատում, այլ անվանում էին ինչ-որ ուժերի, պետությունների «գրգռությունների» հետևանք:

Միանգամայն իրավացի է նաև հեղինակի հետևյալ միտքը. «Քանի որ գլխավոր նպատակն էր պահպանել բազմազգ պետության կառուցվածքը... «պաշտոնապես» հռչակվեց այն գաղափարախոսությունը, որ հնարավորություն էր տալիս միավորելու կայսրության բոլոր ժողովուրդներին մի միասնական ընդհանրության մեջ: Դրա համար էլ մինչև 1914 թ. նրանք իրենց պանթյուրքիստական էությունը թաքցնում էին պանիսլամիզմի դոկտրինայի հետևում»: Բալկանյան պատերազմից

հետո էր, որ «իթթիհատականների պանթյուրքիստական էությունը... ազատվեց հարկադիր թմրից, և թուրքերը, վերջապես, բարձրաձայն հայտարարեցին իրենց գոյության մասին» (էջ 24): Եվ «թուրքացման քաղաքականությունը» լայնածավալ արշավի ելավ: Մեկը մյուսի հետևից ծնունդ առան պանթուրքիստական ընկերություններ, օջախներ ու միություններ: Թուրք հեղինակներից մեկն այսպես է ներկայացնում այդ գործընթացը. «Մեծ Թուրանին կարոտած թուրքական նոր, արթնացած աշխարհը դրեց միապետության շենքի հիմքերը, որի գահին պետք է փայլեր Թուրանի ոսկյա ջահը: Այդ շենքի հենասյուներ դարձան «Թուրքական գիտական ընկերությունը», «Թուրքերի հայրենիք», «Թուրքական օջախ» և «Թուրքական հզորություն» ընկերությունները: Դրանք իրենց առաջ խնդիր էին դրել արագացնել թուրքացման գործընթացը, հանուն այն բանի, որպեսզի «թուրքի երկաթյա բռունցքը նորից իջնի երկրագնդի վրա և ամբողջ աշխարհը դողա նրա առաջ» (էջ 25):

Եվ թուրքերը ձեռք մեկնեցին ամենածայրահեղական ռասիստական տեսություններին ու, իհարկե, առաջին հերթին, գերմանածին ուսմունքներին: Գեոքալփն ուղղակի գրեց, որ թուրքերը պետք է օրինակ վերցնեն գերմանական «իթթիհատիստներից»: Նա միաժամանակ հռչակեց պանթյուրքիզմի բանաձևը. «Թուրքերի հայրենիքի քաղաքական սահմանները ներառում են բոլոր այն տարածքները, որտեղ լսվում է թուրքերեն խոսք և որտեղ կա թուրքական մշակույթ» (էջ 27):

Թ.Աքչամի համար ելակետային է հետևյալ միտքը. «Երբ թուրքերը ունեին մնացած աշխարհի համեմատությամբ առավելության զգացում (մինչև XIX դարի կեսերը), նրանք չգիտեին, որ իրենք թուրքեր են... Այդ գիտակցությունը նրանց մոտ եկավ միայն այն ժամանակ, երբ ոչ լիարժեքության հոգեբանությունը ամբողջությամբ տիրապետել էր նրանց: Փաստորեն պանթուրքիզմը թուրքերի համար անելանելիության և ոչ լիարժեքության հոգեբանությունից անխուսափելի փախուստի արտահայտություն էր» (էջ 27):

«Թուրք» տերմինը կայսրությունում դարեր շարունակ օգտագործվել է որպես վիրավորական արտահայտություն՝ «կարճատես թուրք», «այլանդակ մռութով թուրք», «թուրք սրիկա», «շան մռութով թուրք» և այլն: Որպես կանոն թուրք էին անվանում ցածր խավերի ներկայացուցիչներին, մասնավորապես գյուղացիությանը: Թուրք հասկացության հանդեպ այդ արհամարհական վերաբերմունքը հեղինակը բացատրում

է հետևյալ գործոններով՝ օսմանյան պետական բարձրաստիճան պաշտոնյաները ծագումով թուրք չէին, 1402 թ. թուրքերը դավաճանեցին «օսմաններին» ու անցան Լենկ Թեմուրի կողմը:

Հատկանշական է Արաբա-իսլամական գրականության հակաթուրքական բնույթը: Կորանում թուրքերն անվանվում են «մարդկության թշնամիներ ու գազաններ», «ռասա, որը մարդկությանը թշվառություն բերեց»: Հակաթուրքական մտքերով է լեցուն վաղ շրջանի իսլամական ամբողջ գրականությունը:

Թուրքերը ոչ միայն Կ. Պոլսում, այլև կայսրության սահմաններից դուրս բացասական համբավ ունեին, ինչը նրանց մեջ առաջացնում էր հակազդեցություն և սեփական նշանակությունն ապացուցելու անզուսպ ձգտում: Դեռ ավելին, թուրքը հանդես եկավ վերամբարձ ինքնագովությամբ՝ թուրքը վեր է բոլոր ազգերից ու ցեղերից և կոչված է նրանց կառավարելու: Ինչ վերաբերում էր ներքին քաղաքականությանը, ապա այդ պարագայում անվիճելի էր համարվում թուրքերի իշխող դերը: Եվ ոչ միայն այդ: Ինչպես նշում է պատմաբան Ահմեդ Ռասիմը, սկսած 1860-ական թվականներից «օսմանական ազգություն ասելով հասկանում էին թուրքերին: Օսմանիզմի հիմնադիրներից մեկը՝ Ալի փաշան, նշում է, որ «կայսրության միավորող օղակ կարող են լինել միայն թուրքերը» (էջ 36): Մի այլ ռեֆորմատոր՝ Ալի Սուավին գտնում էր, որ թուրքերը պետք է լինեն կառավարող ազգ, քանի որ ռազմական, մշակույթային և քաղաքական առումով նրանք գերազանցում են բոլոր ժողովուրդներին և հնագույն ռասա են» (էջ 37): Երիտթուրք լիդեր Ահմեդ Ռիզան իր գլխավոր նպատակը համարում էր կայսրության մյուս էթնիկական խմբերի նկատմամբ թուրքերի գերիշխանության ապահովումը:

Թուրքական ազգային «եսի» ձևավորման վրա էական ազդեցություն է գործել այսպես կոչված «անհետանալու վախը»: Ամբողջ XIX դարի ընթացքում օսմանյան կայսրության վրա կախված էր կործանման վտանգը, և թուրքերը ելք էին որոնում դրա առաջն առնելու համար: Ակնհայտ էր, որ կայսրության գոյության հարցը լուծվում էր նրա սահմաններից դուրս և, եթե այն շարունակում էր գոյություն ունենալ, ապա միայն գլխին կախված այդ տևական վտանգը թուրք գործիչներին հարկադրում էր մեղավորներ փնտրել և այդպիսիք համարեցին ազգային փոքրամասնություններին, մասնավորապես՝ քրիստոնյա հպատակներին, մանավանդ որ այդ փոքրամասնությունները մեկը

մյուսի ետևից թոթափում էին օսմանյան լուծը: Ներքաղաքական պայքարում աստիճանաբար առաջին պլան մղվեցին կրոնական հողի վրա տեղի ունեցող բախումները: Հպատակ քրիստոնյաների պայքարը ուժեղացրեց տերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին: «Այն փաստը,- գրում է Թ. Աքչամը,- որ ազգային փոքրամասնությունները մեծ տերությունների աջակցությամբ... ձեռք բերեցին մի շարք արտոնություններ, որոնցից զուրկ էին մահմեդականները... մահմեդականներին ներարկեց խորը ատելություն քրիստոնյաների նկատմամբ» (էջ 42): Հեղինակի այս միտքը բացահայտորեն կեղծ է. չի եղել որևէ հպատակ ժողովուրդ, այն էլ քրիստոնյա, այդ թվում հայ, որն ունեցել թուրքերից ավելի կամ նրանց չափ արտոնություններ: Աքչամը դա լավ հասկանում է և պատճառաբանելու համար իր միտքը նշում է, որ Թանզիմաթը իրավահավասար դարձրեց մահմեդականին և քրիստոնյաներին, ինչը «խորապես վիրավորեց մահմեդականի կրոնական զգացմունքները» (էջ 42): Բայց այս դեպքում հեղինակը շփոթում է օտարահպատակ քրիստոնյաներին (որոնք իսկապես «էքստերիտորյան» իրավունքից էին օգտվում) թուրքահպատակ քրիստոնյաների հետ, որոնք թանզիմաթից հետո էլ մահմեդականին հավասար իրավունքներ չունեին և չէին կարող ունենալ, քանի որ հասարակությունը գործնականում շարունակում էր ղեկավարվել շարիաթի օրենքներով: Փոխարենը՝ նա միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե թուրքերը դարեր շարունակ զբաղվել են միայն զինվորական գործով և պետության կառավարմամբ: Նրանք միշտ էլ արհամարհել են տնտեսական գործունեությունը և դրանով չեն զբաղվել, ինչը հայերին, հույներին և հրեաներին հնարավորություն տվեց իրենց ձեռքը վերցնել կայսրության տնտեսական կյանքը:

Այո, քրիստոնյաներին բանակ չէին զորակոչում, փոխարենը նրանց հարկադրում էին զինվորական հարկ վճարել: Հազիվ թե ճիշտ է, երբ հեղինակը քրիստոնյաների հանդեպ խտրականության այդ իրողությունը համարում է նրանց տված արտոնություն: Քրիստոնյաներին չզինվորագրելը նրանց հասցրած ամենախոշոր հարվածներից մեկն էր: Եթե զինվորագրությունը թուրքերից մեծ թվով աշխատուժ էր խլում, ապա փոխհատուցվում էր մի շարք արտոնություններով (հարկային քաղաքականություն, բերրի հողեր, ավելի քիչ հարստահարություններ և այլն), որոնք ավելի քան փոխհատուցում էին զինակոչների պատճառած վնասները:

Թ. Աքչամը թուրք միակ հեղինակն է, որը փորձում է քննական հայացքով նայել թուրքերի և հպատակ քրիստոնյաների վիճակին ու փոխհարաբերություններին և այդ նրան, հիմնականում, հաջողվում է: Սակայն բնական է, որ թուրքական միջավայրը, հարյուրամյակներով կարծրացած դոգմաները նրա վրա ազդեցություն ունեն և չէին կարող չունենալ: Դրա հետևանքով տեղ-տեղ նա ուղղակի կրկնում է թուրքական պաշտոնական պատմագրության մաշված տեսակետները: Աքչամը գրում է. «Երբ մահմեդականների վրա ճնշում էին գործադրում, նրանք չէին կարող պաշտպանություն գտնել ո՛չ հյուպատոսների և ո՛չ էլ որևէ պետության կողմից» (էջ 45):

Հեղինակը աչքաթող է անում այն իրողությունը, որ, նախ, թուրքը իշխող ժողովուրդ էր, և պետական օրենքներն ու կառույցներն առաջին հերթին նրա շահերն էին պաշտպանում և որ օրենքի առաջ նույնիսկ թանզիմաթից հետո էլ քրիստոնյան ու մահմեդականն իրավահավասար չէին:

Նոր օսմաններն ու երիտթուրքերը ճարպկությամբ օգտագործեցին այդ հնարովի թեզը ռասիստական կրքեր բորբոքելու և կայսրությունում հակաքրիստոնեական մթնոլորտ ստեղծելու համար: Նույնիսկ թուրք ժողովրդավարների, այդ թվում նաև սահմանադրության հայր Միդհատ փաշայի համար ժողովրդավարությունը տարածելի էր միայն մահմեդականների վրա: Իզուր չէ, որ նրան Բուլղարիայում կնքեցին «բուլղարների դահիճ» մականունով: Այդ նույն փաշան էր, որ դաժան խոսքեր էր շպրտում Ալի և Ֆուադ փաշաների հասցեին «քրիստոնյաների հանդեպ զիջողականության» և «շարիաթի դոգմաները ոտնահարելու» համար: Նույն ուղղությամբ գնացին նաև երիտթուրքերը: «Ինքնավարությունը նշանակում է հայրենիքի դավաճանություն,- հայտարարեց Ահմեդ Ռիզան,- մեր քրիստոնյա հպատակները դառնալու են օսմանցիներ»:

Երիտթուրքերը թունոտ ատելություն էին դրսևորում հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումների նկատմամբ, այդ ժողովուրդներին մեղադրում էին, որ նրանք իրենց գործողություններով նպաստում են օտար տերությունների միջամտությանը կայսրության ներքին գործերին և վերածվել են մանր դրամի այդ տերությունների ձեռքին (էջ 47): Թուրք սահմանադրականները գործի դրեցին քարոզչական միջոցները՝ քրիստոնյաներին մահմեդական լայն հանրության աչքերում վարկաբեկելու համար:

Այս ճշմարիտ եզրահանգումներով հանդերձ՝ անհնար է լուրջ ընդունել հեղինակի այն պնդումը, թե Վանի մահմեդականները «ոչ մի կերպ չէին կարողանում համակերպվել այն հեռանկարի հետ, որ հայերը կարող են կառավարել կամ իրենց հրամայել»(էջ 51): Անհնար է, քանի որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե հայերի գերիշխող դերի, ոչ թե մահմեդականների հետ նրանց իրավահավասարության, այլ հայի գոյության իրավունքի մասին է:

«XIX և XX դարերը թուրքերի համար ոչ միայն պարտությունների, այլ նաև նրանց ազգային արժանապատվության մշտական նվաստացման ժամանակաշրջան է» (էջ 53): Եվ ապա. «Մի հասարակություն, որի պատիվն ու արժանապատվությունը մշտապես վիրավորվում էր ուժեղ հակառակորդի կողմից, բնականաբար պետք է վերջինիս հանդեպ ատելություն հանդես բերեր: Եվ քանի որ թուրքերն անզոր էին իրենց վիրավորողներից գլխավորի՝ արևմուտքի հանդեպ, փնտրեցին վրեժխնդրության համար ավելի թույլ ու անպաշտպան օբյեկտներ: Այդ օբյեկտները կայսրության քրիստոնյա փոքրամասնություններն էին» (էջ 53): Այո՛, Թուրքիան թուլացել էր. եթե նախկիններում նա էր արհամարհում եվրոպային, ապա սկսած XIX դարից հակառակն էր կատարվում: «Հիվանդ մարդը» վերածվել էր հզորների մշտական արհամարհանքի և նվաստացումների առարկայի: Սրանից էլ ծնվեց կարոտն անցյալի հանդեպ՝ առաջ եկավ երբեմնի հզորության վերաստեղծման ձգտումը:

«Ռազմական պարտություններն ու քաղաքական անհաջողությունները,- գրում է Բ.Լևինը,- սասանեցին թուրքերի ինքնավստահությունը, որոր իրենք անհաղթ են և անվիճելի առավելություն ունեն: Սակայն «բարբարոս գյավուրի» հանդեպ նախկին արհամարհանքը ծնեց ոչ թե նախանձի զգացում, այլ ատելություն» (էջ 57):

«Եվ պանթուրքիզմը,- եզրահանգում է Թ. Աքչամը,- դարձավ հաջողության խաղաքարտ՝ վերականգնելու մեր հպարտությունը «կաթ վաճառող բուլղարացիների», «հովիվ սերբերի» և «կրպակատեր հայերի» հանդեպ...» (էջ 58):

Ըստ հեղինակի՝ թուրքական նացիոնալիզմին սնող աղբյուր էր նաև ռևանշիզմը, որը ծնունդ էր առել պարտություններից, «մահմեդականների կոտորածներից ու տարածքային կորուստներից»: Այս միտքը հիմնավորելու համար հեղինակը բերում է անհիմն մի փաստարկ, թե հիբր քրիստոնյաների XIX դարի պայքարը ոչ միայն անկախության հա-

մար էր, այլև պարունակում էր «այդ տարածքներում բնակվող մահմեդական ազգաբնակչության գենոցիդ»: Խոսքը Բալկաններում բնակվող մահմեդականների մասին է, որոնք թերակղզու երկրների անկախանալուց հետո հեռացան ու բնակություն հաստատեցին Անատոլիայում: Նրանց մի մասին, իրոք սպասում էր ֆիզիկական հաշվեհարդար, սակայն բացարձակ մեծամասնության հեռանալու պատճառն այդ չէր, այլ այն, որ համաձայն «թուրքական հայրենիքի» աբդուլհամիդյան կոնցեպցիայի թուրքերի հայրենիքը Անատոլիան էր, և նրանք պետք է կենտրոնանային այդ աշխարհատարածքում, ինչը և Անատոլիան «թրքացնելու» հիմնական միջոցներից մեկն էր»: Հեղինակն այդ իրողությունը չի ժխտում. նա գրում է, որ մուջահեդներին «գիտակցաբար բնակեցնում էին քրիստոնեական բնակչություն ունեցող տարածքներում: Ստեղծում էին ընկերություններ, թերթեր ու հանդեսներ, որոնց միջոցով այդ փախստականներին մշտապես հիշեցնում էին իրենց կրածի մասին և վրեժխնդրության կոչում... Այս ողորմելի, հրաշքով կոտորածներից փրկված մարդիկ շուտով դառնալու էին Անատոլիայի ազգային փոքրամասնությունների և, առաջին հերթին, հայերի դահիճները»: Բավական է հիշել, որ «1878-1904 թթ. ժամանակաշրջանում հոծ հայ բնակչություն ունեցող վիլայեթներում միաժամանակ բնակեցվեցին 850 հազ. փախստականներ» (Տես. A. Ohandjanian, Armenien, Das..., Wien, 1989, s. 36):

Դժվար է հավատալ այս թվերի ճշտությանը: Բալկաններից գաղթած մահմեդականներին հիմնականում բնակեցնում էին Անատոլիայի կենտրոնական և, մասնավորապես, արևմտյան շրջաններում ու Կիլիկիայում, իսկ Արևմտյան Հայաստան բերվում էին կովկասյան մահմեդականները:

Այնուամենայնիվ՝ տարածքների կորուստը և նախկին բնակավայրերից հեռանալը թուրքական ազգայնամոլությունը սնող աղբյուրներից մեկն էր և, ինչպես գրում է Ք.Աքաթուրքը, «Գաղթականները՝ կորցրած հողերի մասին մեր ազգային հիշողությունն են» (Տես. Biral Simsir, Rumeliden Turk Gogleri. Belgeler. Cilt I, Karak sayfast. Ankara, 1970):

Սկսած Աբդուլ Համիդի օրերից՝ կորցրած հողերի համար վրեժխնդրության գաղափարը «դրվեց ռազմական ուսումնարանների ուսումնական ծրագրերի հիմքում... Հարկ է խոստովանել, որ ռազմամոլության և ագրեսիվության ոգին ներառել էր ոչ միայն ուսումնարանները, այլև ամբողջ հասարակությունը» (էջ 60):

Նշված տրամադրություններն իրենց բարձրակետին հասան 1912 թ. Բալկանյան պատերազմների նախօրյակին: Սակայն Բալկանյան պատերազմներում թուրքերի պարտությունները դարձան նոր հիասթափությունների աղբյուր: Այդ օգտագործեցին երիտթուրք լիդերները, և վերժխնդրության կոչեր հնչեցին, «Ձեզ վրեժխնդրության կոչ եմ անում»,- կոկորդ էր պատռում էնվեր փաշան: Բալկանյան պատերազմից հետո այդ տրամադրությունները տիրապետող դարձան: Եվ երիտթուրք պարագլուխներն այն ուղղեցին ազգային փոքրամասնությունների դեմ: Հույների և բուլղարացիների բոլոր «մեղքերի» համար պետք է պատասխան տային «անշնորհակալ հայերը, որոնք համագործակցում էին իմպերիալիստների հետ ու հարվածում էին թուրքերին՝ թիկունքից»: Եվ ոչ միայն հայերը: Պատերազմի ժամանակ, երբ օսմանյան բանակը հարկադրված էր թողնել Բաղդադը, փոխգնդապետ Բեկիր Սամին արաբներին հավաքում է քաղաքի հրապարակում ու նրանց վրա կրակ բացում: Երբ Ք. Կարաբեքիրը հարցնում է, թե ինչո՞ւ է այդպես վարվում, պատասխանում է. «Ես հաշիվ եմ մաքրում օսմանյան 400-ամյա պատմության համար» (էջ 63):

Ահա մի միտք. «Թուրքական ազգայնականության ձևավորման վրա փոքր ազդեցություն չունեցավ նաև այն, որ Եվրոպայում արձագանքում էին միայն քրիստոնյաների կոտորածների մասին լուրերին, իսկ կոտորածները, որոնց զոհ էին գնում թուրքերը և մնացած մահմեդականները, բացարձակ լռության էին մատնվում: Մինչդեռ քրիստոնյաներ գանքի ու միջամտի կայսրության ներքին գործերին: Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Պ. Քերրին գրում է. «Հայ հեղափոխականներն, օգտվելով անկարգություններից, ձգտում են առաջացնել թուրքերի պատասխան ռեակցիան և դրանով իսկ հասնել տերությունների միջամտությանը» (էջ 66): Նույն միտքն է արտահայտում նաև Աբդուլ Համիդը. «Հայերի նպատակը թուրքերին սադրանքի ենթարկելն է իրենց դեմ ուժ գործադրելու և դրանով Եվրոպայի և, մասնավորապես, Անգլիայի ուշադրությունը գրավելու համար» (էջ 67): Հետևաբար, ինչպես գրում է Ք. Աքաթուրքը, «Մեր երկրի քրիստոնյա տարրերի կրած բոլոր դժբախտությունների պատասխանատվությունը պետք է ընկնի հենց նրանց ուսերին... Այդ հետևանք է նրանց կողմից սեփական իրավունքների չարաշահման և այն անջատողական քաղաքականության, որ նրանք իրականացնում են ամենագազանային եղանակներով» (էջ 67-

68): Գտնվել էր հայերի ցեղասպանությունն արդարացնող ընդհանուր բացատրություն. Առաջին աշխարհամարտի տարիներին հայերը վայրագություններ են կատարել մահմեդական բնակչության դեմ:

«Թուրքական ներկայացուցիչ Իսմեթ փաշան,- գրում է Ա. Մանդելշտամը,- Լոզանում իր ելույթով ձգտում էր ապացուցել, որ փոքրամասնության շահերի պաշտպանությունը միշտ հիանալի պատրվակ է եղել արդարացնելու /արևմտյան/ տերությունների միջամտությունը թուրքերի ներքին գործերին: Իսկ ընդդիմախոսները, ընդհակառակը, աշխատում էին ապացուցել, թե Թուրքիայում տերությունների գործողությունները հարկ է գնահատել որպես միջամտություն հանուն մարդկայնության և հենց՝ մարդկության անունից»:

Ժողովրդավարությունը և մարդու իրավունքների համար մտահոգությունը չէր, որ առաջ էր մղում տերություններին: Ռուսաստանն, օրինակ, դեմ էր 1876 թ. սահմանադրությանը, իսկ Անգլիան մեծ վերապահումներով էր վերաբերվում 1908 թ. սահմանադրությանը, վախենալով, որ այն կարող է վարակիչ լինել նաև իր գաղութների մահմեդականների համար:

Այնուամենայնիվ թուրքերը ահաբեկված էին և սարսափով էին նայում կայսրության վաղվա օրվան: «Ինչպե՞ս փրկել կայսրությունը» հարցը դարձավ կյանքի խնդիր, մասնավորապես, մտավորականության համար: Միակ ելքը համարվեց ներքին հակասությունների հաղթահարումը և ներքին միասնության ապահովումը: Թալեաթը հայտարարեց. «Մենք շրջապատված ենք թշնամական օղակով, բոլորը մեր կործանումն են ցանկանում» (էջ 75): Այս պայմաններում ազգային-ազատագրական շարժումները կայսրության ու թուրքերի համար համարվեցին մահացու և ճնշվեցին արտակարգ դաժանությամբ: Վտանգի միտումնավոր գերագնահատումը թուրքերի լայն զանգվածների մեջ ծնեց վայրենի գործողությունների հակումներ: Նաև այդ հնարավոր դարձրեց հայերի ցեղասպանությունը:

Հայկական կոտորածներ

Հեղինակը գրում է. «Հայերին հաշիվ ներկայացվեց կայսրությունից անջատված բոլոր քրիստոնյա փոքրամասնությունների համար եվ նրանք վճարեցին ավելի քան թանկ գին, քանի որ չնայած ուշացումով, այնուամենայնիվ դիմեցին վերը նշված տակտիկային և ձգտեցին ստանալ որոշ իրավունքներ օտար տերությունների ուշադրությունը գրավելու միջոցով... [Այս անգամ արդեն] կառավարությունը չմնաց դիտողի դերում... և պատրաստվեց «խեղդել երեխային [հայկական շարժումները] հենց օրորոցում» (էջ 78):

Հայերի կոտորածներն Օսմանյան կայսրությունում ունեն հին պատմություն: Ըստ բնույթի և իրականացման ձևի դրանք հարկ է բաժանել երեք ժամանակաշրջանի: Առաջինը ընդգրկում է 1890-1909 թվերը, երկրորդ՝ 1915-17 թթ., երրորդը սկսվում է 1918 թվից: Առաջին շրջանում կոտորածները կրում էին տեղային բնույթ և իրականացվում էին ոչ թուրքական էթնոկրոնական խմբերի վրա պարբերաբար ճնշում գործադրելու քաղաքականության շրջանակներում: Այդ քաղաքականությունը կիրառվում էր ոչ միայն պետության կողմից: Կոտորածների իրականացման եղանակներն էին.

- քուրդ ու մահմեդական ցեղերի մշտական ասպատակություններ ու հարձակումներ հայկական գյուղերի վրա, թալան, աղջիկների առևանգում, զանգվածային սպանություններ.
- քաղաքացիական կռիվներ, մահմեդականների բախումներ հայերի հետ ու կոտորածներ, որոնք կատարվում էին այդ բախումների ընթացքում.
- կոտորածներ, որոնք իրականացվում էին պետության ուժերով հարկեր հավաքելու, ավազակային խմբերին հետապնդելու, հայերի «ապստամբությունները» և անկարգությունները ճնշելու պատրվակով:

Հայկական կոտորածները գնալով ավելի ու ավելի մշտական բնույթ էին կրում, հատկապես 1890 թ.՝ համիդիե գնդերի ստեղծումից հետո: Քրդական այս միավորումների բոլոր ծախսերը փակվում էին ասպատակությունների և թալանի միջոցով:

Խոշորագույն ջարդեր տեղի ունեցան 1894-96 թթ.:

Սկսած XIX դարի 90-ական թվականներից՝ հայկական կոտորածների բնույթը սկսեց կտրուկ տարբերվել մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող համանման գործողություններից: Մինչև հայկական կոտորածներն իշխանությունները գործն այնպես էին ներկայացնում, թե իբր իրենք ճնշում են անջատողական շարժումները և կամ կատարվածը մահմեդա-քրիստոնեական ընդհարումներ էին, որոնք ուղեկցվում էին փոխադարձ կոտորածներով: Իսկ հայկականի պարագայում առաջին պլան դուրս եկավ իսլամական գործոնը՝ պետության ամբողջականությունն ապահովելու համար կառավարությունը սկսվում է խաղարկել «պանիսլամիզմի» խաղաքարտը: Շար-

ժում է ծավալվում հայերին՝ «որպես էթնիկական և կրոնական խմբի, նվաստացնելու համար»: Դա յուրատիպ «իսլամական ռասիզմ» էր, որն ակնհայտորեն դրսևորվեց հայերի հանդեպ: Աբդուլ Համիդը հայերին անվանում էր «ապուշացող համայնք», «հավերժական ստրուկներ» և նշում, որ նրանք շատ հարուստ են, կազմում են օսմանյան չինովնիկների 1/3-ը, հարկ քիչ են վճարում և բանակում չեն ծառայում: Գերազանց գիտակցելով, որ հասարակությունում հայերի կայուն վիճակը պայմանավորված է նրանց տնտեսական հզորությամբ, սուլթանը ձգտում էր խորտակել այդ հզորությունը:Նա հրահանգներ էր ուղարկում վիլայեթները՝ պահանջելով վերահսկողության տակ առնել հայ առևտրականների, բանկիրների և այլոց գործունեությունը, դրանով իսկ հայ բուրժուազիային դատավճիռ արձակում: Նրա խոսքերով «կայսրությունը մշտապես բախվում է քրիստոնեական աշխարհի թշնամական գործողություններին» (էջ 80): «Մեզնից խլելով Հունաստանն ու Ռումինիան,- գրում է նա,- Եվրոպան թուրքական պետությանը թողեց առանց ոտքերի: Կորցնելով Սերբիան և Եգիպտոսը, մենք զրկվեցինք նաև ձեռքերից: Իսկ այժմ, օգտագործելով հայերին, ցանկանում են մոտենալ մեր կենսական կարևոր օրգաններին: Այդ կլինի սկիզբը մեր ամբողջական կործանման, և մենք հարկադրված ենք բոլոր ուժերով պաշտպանվել»:

Նկատի ունենալով 1894-96 թթ. կոտորածները, գերմանացի լիբերալ Նաումանը գրում է, թե «թուրքերի կողմից իրականացվող հայկական ջարդերը պարզապես քրիստոնյաների հետապնդում չէին, այլ հին մեծ կայսրության մահից առաջ վերջին արյունահեղ ճակատամարտի պահերից մեկը» (էջ 80):

«Նման մթնոլորտում դժվար չէր համոզել թուրքերին, որ հայերը չարագործ թշնամիներ են և ցանկանում են օսմանցիներից խլել վերջին կտոր հացը: Հայկական հարցը սկսեց դիտվել որպես կայսրության կյանքի ու մահվան խնդիր» (էջ 80):

«Այսպիսով, ի տարբերություն քրիստոնեական մյուս ժողովուրդների, հայ ժողովրդի կոտորածները կրում էին պաշտոնական՝ իշխանությունների կողմից համակարգված և կազմակերպված բնույթ... Հայերի վրա հարձակումներն ու նրանց կոտորածները օգտագործվում էին ուժեղացնելու պետության ազդեցությունը մահմեդական շրջանում»:

«Կառավարությունը նվազագույնի հասցրեց քրիստոնեական ծագում ունեցող պետական ծառայողների թիվը,- գրում է Ա. Համիդ 2-րդը,-

և ընդհակառակը, մեծացրեց մահմեդական տարբեր ժողովուրդներ ներկայացնող կադրերի թիվը: Ի պատասխան նրա, որ Եվրոպան զիներ էր քրիստոնեական համայնքներին, կառավարությունը զենք բաժանեց մահմեդական խմբերին՝ նրանց իրավունք վերապահելով պաշտպանվելու և ստեղծեց պատրանք, թե պետությունը կանգնած է նրանց թիկունքին» (էջ 81):

Աբդուլ Համիդը զինեց մահմեդական բնակչությանը և ստեղծեց արհեստական պատրվակներ՝ նրան մղելու հայերի դեմ: Կոտորածների մասնակիցները պատժվելու փոխարեն խրախուսվում էին: «Միաժամանակ առաջին անգամ սկսեցին հնչել կոչեր՝ մի ամբողջ ժողովրդի ոչնչացնել որպես միջոց՝ Հայկական հարցի լուծման» (81): Հայկական հարցով սուլթանի խորհրդական Իզզեթ փաշան, վկայում է Վամբերին, գտնում էր, որ Հայկական հարցի լուծման միակ եղանակը հայերի ֆիզիկական բնաջնջումն է: Այս մտածողության հետևանքը 1915-17 թթ. կոտորածներն էին, որոնք «իրենց բնույթով շեշտակիորեն տարբերվում էին նախորդներից: Որոշված էր վերջնականապես թաղել Հայկական հարցը»: Ի՞նչ գործոններ նպաստեցին դրան: Կարևոր գործոններից մեկն , իհարկե, Առաջին աշխարհամարտի ընձեռած հարմար պահն էր, ինչպես Երկրորդ աշխարհամարտը հարմար պահ հանդիսացավ հրեաների կոտորածի համար: Բայց, ըստ հեղինակի, այդ երկու բնագավառների բնույթն ու նպատակները նույնացնել չի կարելի: Եթե հրեաներին կոտորելը նացիստների ծրագրի հիմնական կետերից մեկն էր, ապա «չնայած օսմանցիների իսլամական աշխարհայացքում ռասիզմի տարրեր նշմարվում էին, սակայն դժվար է ասել, որ գոյություն է ունեցել հայերին որպես էթնոս արմատախիլ անելու ծրագիր: Նույնիսկ առաջին ամիսներին, երբ ակնհայտ էին հակասություններն ու լարվածությունը հայերի և թուրքերի միջև, ոչ մի նշան չկար, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը պատրաստվում է հայերին հաշվեհարդարի ենթարկել: Հարցն ուսումնասիրողների կարծիքները համընկնում են՝ նման որոշում ընդունվել է փետրվարի վերջին, մարտի սկզբին (1915 թ.)»:

Հեղինակը գիտակցաբար, թե միտումնավոր սխալվում է և, ցանկանում է այդ թե ոչ, կանգնում է խնդրին երիտթուրքական գնահատականի կողմնակիցների շարքում: Նա թուրքական ստերիոտիպերի ազդեցության տակ է նաև, երբ գրում է. «Անկասկած փոքր դեր չխաղացին թուրքական ազգային «եսի» առանձնահատկությունները: Երիտթուր-

քերը հանգեցին եզրակացության, որ իրենց չի հաջողվի Հայկական հարցը լուծել աստիճանաբար, և անհրաժեշտ է «արմատական լուծում»: Իսկ այդ ուղղակի կամ անուղղակի կապված էր մեծ կայսրություն վերստեղծելու երազանքի կործանման հետ» (էջ 82):

Հայոց ցեղասպանության մեղքը միայն երիտթուրքերի վրա բարդելը նորություն չէ: Թուրք քաղաքական ուժերն այդ կոնցեպցիան մշակելու ձեռնամուխ եղան դեռ մինչև Մուդրոսը: Սակայն այն չի կարողանում պատասխանել մի շատ պարզ հարցի՝ սուլթանական վարչակազմի ժամանակ հայերի բնաջնջման քաղաքականությունը գործողության մեջ էր. երիտթուրքերի վարչակարգն այդ քաղաքականությունն իր բարձրակետին հասցրեց, իսկ Մ. Քեմալի վարչակարգն ավարտեց երիտթուրքերի կիսատ թողածը: Ինչպե՞ս բացատրել, որ իրար հակոտնյա երեք վարչակարգեր Հայկական հարցի լուծման նույն ուղին՝ բնաջնջման ուղին ընտրեցին:

Ինչ վերաբերում է աշխարհակալ կայսրության վերստեղծման երազանքի ձախողման փաստին, ապա անհասկանալի է, թե այն ինչո՞ւ պետք է խրախուսեր հայերի ցեղասպանությունը: Պատերազմական անհաջողությունները գուցե և արագացրին հայերի բնաջնջումը, բայց դրանք թուրքերի զանգվածային վանդալիզմի գլխավոր պատճառը չէին: Իրականում կոտորածները սկսվել էին մինչև Սարիղամիշի ճակատամարտը: Պարզապես այն սկսվել էր ոչ թե Կ.Պոլսում, այլ Ալաշկերտում ու Բասենում, Բայազետում և Արճեշում, ինչը և պատճառ դարձավ, որպեսզի ցեղասպանության սկիզբը տարվի մինչև 1915 թ. ապրիլի 24-ը՝ պոլսահայ մտավորականության ձերբակալության օրը:

Հազիվ թե հնարավոր լինի լուրջ համարել հեղինակի տրամաբանական մարզանքները, թե թուրքերին «վայրագացնողը» նրանց նախկին փառքն ու XX դարասկզբին ողորմելի վիճակն էր: Աշխարհակալ կայսրություններ են ունեցել նաև հույները, իտալացիները, արաբները, ֆրանսիացիները և այլն, սակայն դրանցից ոչ մեկը կայսրություններ կորցնելիս ցեղասպանություն չգործեց:

«Կայսրության անկման գործընթացի արագացման հետ միասին աճեց «պանթուրանիզմի» և «թուրքական մեծ կայսրություն» ստեղծելու դոկտրինայի կողմնակիցների թիվը: Օսմանական կամ իսլամական հասարակություն ստեղծելու փորձերի ձախողվելը (հասարակություն, որն ի զորու լիներ ապահովել կայսրության ամբողջականությունը) թուրքերին հարկադրեց իրենց հայացքը հառել Արևելք, արևելյան թուրքական ժողովուրդներին, որոնց զբաղեցրած տարածքներում հնարավոր լիներ ստեղծել մեծ կայսրություն» (էջ 84): Թվում էր, թե դրա համար Առաջին աշխարհամարտը գերազանց հնարավորություններ էր ստեղծում:

«Թուրքերի այդ մեծ հայրենիքի» (որն անվանվեց Թուրան) քաղաքական սահմաններն անցնելու էին այն վայրերով, ուր օգտագործվում էր թուրք լեզուն և մշակույթը» (էջ 84):

Զիա Գեոքալփը գրեց. «Շտապիր, թող նորից կամիր դրոշը
ծածանվի Պլևնայի վրա,
Թող օր ու գիշեր արյուն հոսի Դանուբով...» (էջ 85):

Թուրքերին ազատագրելու՝ Էնվերի ռազմական գործողությունները վեց «ներքին թշնամին», այսինքն՝ հայերը: Այդ ընթացքում սկսվեց Դարդանելի օպերացիան, կայսրության կործանումն այլևս սարերի հետևում չէր: Նորից առաջ քաշվեց հայկական վիլայեթներում բարենոր-մարոգումներ մտցնելու խնդիրը: Խոսքն արդեն ոչ թե Ռումելիան կամ Մակեդոնիան, այլ Անատոլիան կորցնելու մասին էր: «Հայերի ֆիզիկական բնաջնջման մասին որոշումն ընդունվեց հենց նման հոգեբանական մթնոլորտում» (էջ 86):

Հայտնի է, որ 1914 թվի վերջերին և 1915-ի սկզբներին հայկական վիլայեթներում բարեփոխումներ մտցնելու պահանջ չի եղել, և այն, որ ռուսական բանակը գրավեց արևելյան վիլայեթների տարածքների զգալի մասը, ոչ թե Անատոլիայի կամ Արևելյան Անատոլիայի, այլ լոկ Արևմտյան Հայաստանի կորուստ էր:

Թ. Աքչամը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե 1915 թ. ապրիլի 24-ը ցեղասպանության սկիզբ համարելը լոկ խորհրդանշական է: «Հայերի բռնագաղթն ու զանգվածային սպանությունը շատ ավելի վաղ էին սկսվել» (էջ 86): Այն, որ «գոյություն չունի ոչ մի փաստաթուղթ, որը պարունակի հայերին ոչնչացնելու հրաման կամ որոշում», այդ դեռ չի նշանակում, թե այդպիսիք չեն եղել, քանի որ Թալեաթի, Բ.Շաքիրի և մյուս գործիչների հեռագրերից ու ծածկագրերից ակնհայտորեն հետևում է, որ նման որոշումներ կամ հրամաններ գոյություն ունեցել են: Եվ այն, որ ամենատարբեր հայացքների տեր ու քաղաքացիություն

ունեցող ականատեսների վկայությունները համընկնում են, հաստատում է, «որ գոյություն է ունեցել միասնական ծրագիր /հայերի բնաջնջման/... իրականում հայեի գենոցիդի առանձնահատկությունը նրա երևակայական քառսային բնույթն է: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, թե կարծես խոսքը ոչ թե կենտրոնի կողմից պլանավորված գործողությունների, այլ կոտորածների մի շարքի մասին է, որն իրականացվել է վերահսկողությունից դուրս եկած ամբոխի կողմից, տեղական իշխանությունների անպատասխանատու վերաբերմունքի հետևանքով»:

«Յուրաքանչյուր քարավանից կենդանի մնացած հայերի թիվը կախված էր ուղեկցողների թվից ու պարկեշտությունից: Չի եղել համապատասխան հրաման: Հայերին բնաջնջելու բուն պլանը բավականին անորոշ էր: Անհրաժեշտ էր սպանությունների, առևանգումների, սովի միջոցով բռնագաղթվածների թիվը հասցնել նվազագույնի, որպեսզի պահպանվի բռնագաղթի տպավորությունը»: (էջ 87-88):

«Մեզ համար,- գրում է Թ. Աքչամը,- կարևոր չէ՝ գենոցիդը կենտրոնի կոմից պլանավորված ակցիա էր, թե ոչ: Գոյություն ունեն բավարար քանակությամբ փաստաթղթեր,... որոնք ապացուցում են կառավարության մասնակցությունն այդ ակցիային: Բռնագաղթը տևեց երկու տարի, և այդ ժամանակաշրջանում հայերը կամ սովամահ եղան և կամ զոհ դարձան զանգվածային կոտորածի: Եվ այդ ամենը կատարվում էր վերևի հրամանով: Նույնիսկ այն փաստը, որ ո՛չ մեկնարկային կետերում, ո՛չ ուղերթներին, ո՛չ բնակության նոր վայրերում որևէ միջոցառում չէր ձեռնարկված մի ամբողջ ժողովրդի տեղափոխության կազմակերպման համար, ինքնըստինքյան ապացուցում է կառավարության դիտավորությունը՝ հայերին ջնջել երկրի երեսից» (էջ 88):

Կամավորական շարժման մասին գրքում կարդում ենք. «Այն փաստը, որ կազմավորվեց ընդամենը չորս գունդ, հազարական մարդով, ուժ, որը ակնհայտորեն անբավարար էր ռազմական լուրջ գործողություններ իրականացնելու համար, չխանգարեց օսմանյան կառավարությանը օգտագործել այդ հանգամանքը քարոզչական նպատակով» (էջ 88-89):

Պատերազմի սկզբին օսմանյան բանակից զանգվածային դասալքությունները, բնականաբար, ներառեցին նաև հայ զինվորների մի մասը: Եվ այն, որ իշխանությունները բռնագաղթը փորձում էին արդարացնել նրանով, թե իբր դասալիք հայերը քաշվում էին լեռները և

միավորվելով սպառնում էին երկրի անվտանգությանը, հնարավի փաստարկ է, քանի որ Լիման ֆոն Սանդերսի վկայությամբ «Անատոլիայի լեռներում թափառում էին ավելի քան 300 հազար դասալիքներ, որոնց չնչին մասն էին հայեր» (էջ 89): Այո՛, եղել են փաստեր, երբ հայկական ջոկատներն անցել են ռազմաճակատի գիծն ու միացել հայ կամավորներին, մի շարք վայրերում ստեղծվել են հայերի զինված ջոկատներ, որոնք ինքնապաշտպանական մարտեր են մղել թե՛ կանոնավոր բանակի և թե՛ աշիրեթների դեմ: Որտեղ նման դիմադրությունն էական բնույթ ուներ, այնտեղ հայերը փրկվեցին կոտորածից: Ահա այս հանգամանքն էլ թուրքական պաշտոնական աղբյուրները ներկայացնում էին որպես ցեղասպանության պատճառ:

Դրա փոխարեն միանգամայն ակնհայտ էին պատերազմի առաջին իսկ օրերից համիդեների («Թեշքիլաթը-ի մախսուսե») վայրագությունները հայկական բնակավայրերում: «Թեշքիլաթը-ի մախսուսե» կազմակերպության մեջ հիմնականում հավաքագրվում էին բանտերից ազատված հանցագործներ, ինչպես նաև մուհաջիրներ Կովկասից ու Բալկաններից: Նրանք հատուկ պատրաստություն էին անցնում: «Պատերազմի առաջին իսկ ամիսներին այս կազմակերպության ջոկատներին կատարած հարձակումները, թալանն ու սպանություններն այնպիսի ծավալներ ընդունեցին, որ մի շարք վալիներ սկսեցին նրանց դեմ բողոքել» (էջ 90):

Սարիղամիշի պարտությունը «շրջադարձային պահ էր հայահայ քաղաքականության մեջ»: 1915 թ. փետրվարին հայ զինվորները զինաթափվեցին և ուղարկվեցին շինարարական աշխատանքների, որտեղ կամ զոհվեցին քաղցից ու ցրտից, կամ ոչնչացվեցին: Երկրորդ ալիքն առնչվում է Վանի իրադարձություններին: Ապրիլի 19-ից մինչև մայիսի 19-ը իրականացվեցին հայերի, մասնավորապես, երևելի անձանց ձերբակալություններ, նրանցից շատերին հրապարակում կախաղան հանեցին: Այդ ամենը ծառայում էր նույն նպատակին՝ նվազագույնի հասցնել բռնագաղթին հայ բնակչության դիմադրությունը:Նույն այդ ժամանակ բոլոր հայերին հեռացրին պետական ծառայությունից և հայ բնակչությանն արգելեցին տեղափոխվել՝ երկրի ներսում: Սկսվեց հայերի զինաթափումը, որն ուղեկցվում էր թալանով ու սպանություններով:Սրանք բռնագաղթի նախապատրաստական միջոցառումներ էին:

«Ոչնչացման էին ենթակա նաև այն պաշտոնատար անձինք, ովքեր տեղերում հրաժարվում էին կատարել բռնագաղթի մասին որոշումնե-

որը» (էջ 91):

«Բռնագաղթի մասին պաշտոնական որոշումն ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին և հրապարակվել է «Resmi gazete»-ի հունիսի 1-ի համարում: Սակայն հայերի աքսորը սկսվել էր դեռ մարտին (օր. Մարաշում և Ադանայում): Ջանգվածային բռնագաղթ և կոտորած իրականացվեց ամենից առաջ արևելյան վիլայեթներում, որտեղ պատերազմում օսմանցիների պարտության դեպքում կարող էր ստեղծվել Հայկական պետություն: Այդ նահանգներից հայերի աքսորը սկսվեց մայիսին և ավարտվեց օգոստոսի սկզբին» (էջ 92):

Սա միանգամայն նոր մեկնաբանություն է թուրքական պատմագրության մեջ, որը մինչև օրս էլ պնդում է. բռնագաղթը հետապնդում էր ռազմական նկատառումներ՝ մերձճակատային շրջաններից հայերին հեռացնել՝ թուրքական բանակի թիկունքի անվտանգությունն ապահովելու համար: Մի դիտողություն՝ բոլոր շրջաններից չէ, որ հայերին բռնագաղթեցրին: Մի շարք վայրերում (օր. Տարոն) բնաջնջեցին հենց տեղում:

Որպես կանոն՝ տղամարդիկ ոչնչացվում էին դեռ մինչև բռնագաղթը: Իսկ այնտեղ, որտեղ նախապես հնարավոր չէր լինում կատարել այդ «մաքրազարդումը», բռնագաղթի քարավանների հենց առաջին կանգառում տղամարդկանց առանձնացնում ու ոչնչացնում էին: «Կոտորածներին, բացի «Թեշքիլաթը-ի մախսուսեի» անդամներից և քուրդ աշիրեթներից, մասնակցում էին նաև զինվորական միավորումները (մասնավորապես ժանդարմերիան) և քաղաքացիական ազգաբնակչությունը» (էջ 92):

Բռնագաղթի երկրորդ շրջանը Արևմտյան Անատոլիայի և Թրակիայի հայության տեղահանությունն էր: Տեղահանության միջանկյալ կայանը Հալեպն էր, որտեղ կենդանի հասածները «կենտրոնացվում էին համակենտրոնացման ճամբարներում: Այս մահվան ճամբարներից դուրս պրծնելը հրաշք էր համարվում» (էջ 93): Հալեպից հայերին ուղարկում էին հարավային Սիրիա կամ արևելյան Միջագետք, այսինքն՝ Արաբական անապատ: «Այդ հավասարազոր էր մահվան: Անապատում ստեղծված համակենտրոնացման ճամբարներն ավելի շուտ դառնալու էին գերեզմանոց... Ականատեսը նկատում է. «այստեղ մարդկանց անմիջապես չեն սպանում, որպեսզի թեթևացնեն նրանց տառապանքները, այլ գերադասում են նրանց սպանել դանդաղ մահով»: Սա քաղաքականության նոր «նվաճում է»: Բնականաբար, կոտորածն ավելի քիչ օրինական է, քան սովամահությունը: Սրանով /թուրքերը/ «փրկեցին» քաղաքակրթության պատիվը» (Յոհ. Լեփսիուս):

Բռնագաղթն ավարտվեց 1916 թ. վերջին:

Կոտորածից առաջ կայսրությունում բնակվում էր 2.1 միլիոն հայ (պատրիարքարանի տվյալներով) կամ 1.3 միլիոն (թուրքական տվյալներով): Հավանական է համարվում, որ 200 հազ. հայ չտեղահանվեց, տեղահանվածներից 150-200 հազարը փրկվեց և 250 հազարը փախավ Ռուսաստան, իսկ առևանգված կանանց ու երեխաների թիվն ընդհանրապես անհայտ է (հավանաբար 200 հազար): Երիտթուրքերի պարագլուխների դատավարության տվյալներով ոչնչացվել է 800 հազար հայ: Լեփսիուսը հաշվում է մեկ միլիոն: Մյուս աղբյուրների տվյալները տատանվում են 600.000-1.5 միլիոնի միջև:

Թալեաթը 1916 թ. օգոստոսի 31-ին Գերմանիայի ներկայացուցիչ Ֆորստ Հոգենլոհե-Լանգենբուրգին ասաց. «Հայկական հարց այլևս գոյություն չունի» (էջ 94):

***

Թ.Աքչամի գրքի երկրորդ մասում քննարկվող գլխավոր հարցն է՝ ինչո՞ւ են թուրքերը ժխտում հայերի ցեղասպանության իրողությունը: Եվ այդ հարցին պատասխանելու համար հեղինակը մեծ էջերն է կատարում: Նախ քննարկվում են Հայոց ցեղասպանության և հրեական ցեղասպանության (Հոլոքոստ) առնչությունները: Հեղինակը դեմ է դրանց նմանակմանը:

Ըստ հեղինակի՝ սխալ է այն կարծիքը, որ ցեղասպանության համար որոշիչ գործոն հանդիսացավ թուրքական ռասիզմը... Թուրքերի մոտ դժվար է գտնել տեսություն, որը նախատեսեր հայերին որպես ազգ ոչնչացնել, ինչպես այդ տեղի ունեցավ հրեաների բնաջնջման պարագայում: Սկսած 1880-ական թթ., չնայած հակասեմիտիզմին հոգեհարազատ գաղափարախոսական ավանդույթների զարգացմանը, թուրքական հասարակությունում հայերի՝ որպես էթնոսի, բնաջնջման գաղափարը չդարձավ ամբողջ հասարակության մտածողության ձև...

Ռասիզմը, ըստ հեղինակի, բնութագրական գիծ չէր նաև օսմանյան ղեկավար շրջանակների աշխարհընկալման մեջ: Եվ որպես այս մտքի հաստատում նշվում է, որ 1914 թ. փետրվարին մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան Պողոս Նուբարին նախարարական պաշտոն առաջարկեց իր կառավարությունում: Եվ ապա՝ «անմտություն է ժամանակ վատնել հայերին կոտորելու պլանի գոյության մասին փաստաթղթեր գտնելու

վրա» (էջ 97):

«Հայերի կոտորածը նպատակ չուներ վերացնելու հայկական ռասան... այլ՝ նվազեցնել հայ բնակչության թիվը..., որպեսզի նա այլևս չկարողանար սպառնալ թուրքական պետականությանը և փրկել /օսմանյան կայսրության/ տարածքի մնացած մասը»: Այդպիսով, հեղինակը, տուրք տալով տիրապետող մտածողությանը, այդուհանդերձ չի կարողանում բացատրել, թե ինչպե՞ս հայերը կարող էին սպառնալ թուրքական պետականությանը:

Ինչ վերաբերում է տարածքի մնացած հատվածի փրկության մասին հեղինակի դիտողությանը, ապա Արևմտյան Հայաստանը Ասիական Թուրքիայի տարածքի 1/4-ն էլ չէր կազմում , իսկ 1914 թվին այն 1/8-ից էլ փոքր էր, և պնդել, թե Արևմտյան Հայաստանի կորուստը նշանակում էր «մնացած տարածքների կորուստ», մեղմ ասած անտեղյակների համար է: Հավանաբար Թ. Աքչամն էլ իր գործընկերների նման մերժում է Հայաստան հասկացությունը և չի ընդունում այն իրողությունը, որ թուրքերը տիրացել են հայերի պատմական հայրենիքին:

Ճիշտ է հեղինակը, երբ գրում է. «Կրոնական գործոնը, որի օգնությանը դիմեցին կոտորածներն իրականացնելու համար, չի բացահայտում կատարվածի նպատակը: Իշխող շրջաններն այս գործոնին դիմեցին միայն մեկ նպատակով՝ հավաքագրել մահմեդական բնակչությանը և նրան վերածել հանցագործության մեղսակցի» (էջ 97):

Ռասայական գործոնի երկրորդական լինելու գլխավոր պատճառը օսմանաթուրքական վերնախավի կառավարման փիլիսոփայությունն է, ավելի ճիշտ, նման փիլիսոփայության բացակայությունը: «Երիտթուրքերը առանձնապես չէին հետաքրքրվում քաղաքական գաղափարներով» (Ֆերոզ Ահմեդ):

1911 թ. մեջլիսում հայտարարվեց. «Մեր մեջլիսի անդամների գլխավոր թերությունը սկզբունքների բացակայությունն է... Ընդ որում, անսկզբունքայնությունը հատուկ է ինչպես իշխանություններին, այնպես էլ ընդդիմությանը» (էջ 98):

Թուրքիայի նախկին նախագահներից մեկը՝ Ջեմալ Բայարը, գրում է. «Երիտթուրք պարագլուխների շրջանում կարելի էր հանդիպել ինչպես պանօսմանիզմի դոկտրինայի, այնպես էլ պանիսլամիզմի կողմնակիցների, պանթուրքիստների և կամ պարզապես թուրք ազգայնականների: Կային նաև օպորտունիստներ» (էջ 98): Օսմանյան կառավարողները ունեցել են միայն մի սկզբունք՝ ցանկացած գնով երկարացնել կայսրության կյանքը: Դրա համար էլ «Պետական մարդկանց համար որևէ գաղափարախոսության չափանիշը՝ նրա օգտակարությունն էր: Եվ հանգամանքների թելադրանքով նրանք փոխել են գաղափարախոսությունը հանուն իրենց շահերի պաշտպանության» (էջ 98):

Թուրքական ազգայնամոլության կնքահայր Յուսուֆ Ակչարան «Երեք քաղաքական գործիչներ» գրքում, որը համարվում է պանթուրքիզմի հռչակագիրը, այդ ուսմունքին իր հակումը բացատրում է «պետության համար վերջինիս օգտակարությամբ»:

Գրող Եակուբ Կադրի Կարաօսմանօղլուի վկայությամբ Թալեաթը Ջ.Գեոքալփին ծաղրում էր, որ նա մեծ տեղ էր հատկացնում գաղափարախոսությանը (էջ 99): Ք. Կարաբեքիրը բազմիցս հայտարարել է, թե հանուն հայրենիքի փրկության պատրաստ է դառնալ բոլշևիկ: Ամասիայում թուրքական ազգային շարժման ղեկավարները քննարկում էին՝ ընդունել բոլշևիկյա՞ն գաղափարախոսությունը, թե՞ ամերիկյան մանդատը:

Օսմանյան կառավարական շրջանների մոտեցումների մի առանձնահատկությունը պաշտոնական փաստաթղթերում առկա գործելակերպի և գործնական քաղաքականության միջև անհամապատասխանությունն է: Դրանով է բացատրվում նաև Հայոց ցեղասպանության մասին պաշտոնական փաստաթղթերի բացակայությունը: Այդ փաստաթղթերը կազմվում էին՝ խստորեն հետևելով շարիաթի պահանջներին, բացարձակապես անտեսելով իրական կյանքի երևույթները: Իրականում հայկական կոտորածների մասին որոշումը ընդունվել է բանավոր: Իրոք՝ բռնագաղթը սկսվելուց հետո ընդունված մի փաստաթղթում կարդում ենք. «Արևելյան վիլայեթներից, Զեյթունից և այլ վայրերից հայերին Դիարբեքիրի վիլայեթի հարավ, Եփրատ գետի հարթավայր, Ուրֆայի (Սուլեյմանիեի) շրջակայքը աքսորելու մասին որոշումն ընդունվել է բանավոր» (Բ. Լևիս, էջ 101): Ուրեմն՝ սկզբում բռնագաղթի մասին բանավոր որոշում և ավելի ուշ՝ գրավոր փաստաթուղթ, մանավանդ, որ երկու դեպքում էլ իշխանությունները համառորեն ժխտում էին բռնագաղթի իրողությունը: Անտանտի տերությունների մայիսի 24-ի հայտարարության կապակցությամբ օսմանյան դեսպանություններին ուղարկված հրահանգում բացարձակորեն ժխտվում է դեպորտացիայի իրողությունը, հայտարարելով՝ «Անտանտի երկրների պնդումները ստահոդ կեղծիք են» (էջ 102):

«Ահա թե ինչու, - գրում է Աքչամը, - այն հետազոտողները, ովքեր

հույս ունեն թուրքական արխիվներում գտնել գենոցիդը հաստատող փաստաթուղթ... շփոթվում են, դրանցում գտնելով հետաքննության նյութեր հայերին վատ վերաբերվող պաշտոնյաների մասին» (էջ 102): Հայերի բռնագաղթի ժամանակ տեղի ունեցած չարաշահումների և անօրինությունների փաստերն ուսումնասիրելու համար ռազմական նախարարությունում ստեղծված հանձնաժողովը (որը գործեց մինչև 1918 թ. վերջը) դատի տվեց 1397 հոգու: Նույն տարվա նոյեմբերի սկզբներին երիտթուրքերի համագումարում Թալեաթը հայտարարեց, թե պետությունը դեմ էր հայերի հանդեպ բռնություններին, սակայն որոշ պաշտոնյաներ չարաշահեցին վստահությունը, որի հետևանքով առաջացան միջադեպեր (էջ 16):

Շնքեթ Սյուրեայի վկայությամբ արտասահման մեկնելուց առաջ Թալեաթն իր ընկերոջ բնակարանում այրեց մի ամբողջ ճամպրուկ փաստաթղթեր (էջ 103):

Հայերի ցեղասպանությունը, ի տարբերություն հրեականի, «թուրքերին խոստանում էր որոշակի օգուտներ... Հայերի ցեղասպանությունը իրականացվեց ոչ թե հանուն վերացական գաղափարախոսության, այլ որպեսզի ստացվեն միանգամայն շոշափելի օգուտներ:

Այստեղ խոսքը հայերի ունեցվածքը թալանելու միջոցով թուրք հարուստների նոր շերտի երևան գալու մասին չէ, քանի որ ցեղասպանությունը Թուրքիայի տնտեսությունը 150-200 տարով ետ շպրտեց... Հայերի և հույների հետ միասին տնտեսական կյանքի աշխուժությունն ու բարեկեցությունը նույնպես երկար ժամանակ լքեցին Անատոլիան» (էջ 104):

Ցեղասպանությունից մեծ օգուտ քաղեց պետությունը. այն հնարավորություն ստացավ ստեղծելու ազգային պետություն՝ Անատոլիայի տարածքում: Կարելի է ասել, որ հայերի ցեղասպանությունը... իրականացվեց հենց այդ նպատակով: Հուսեյին Ջահիդը գրում է. «Մարդիկ, ովքեր մտածել և իրականացրել էին հայերի բռնագաղթը, դրանով փրկեցին Թուրքիան... Բռնագաղթի որոշումը սարսափելի էր, սակայն երկրի համար ծայրաստիճան անհրաժեշտ», և Թալեաթն ու նրա ընկերները դրան գնացին միմիայն հանուն «երկրի բարեկեցության և փրկության» (էջ 105):

«Օսմանյան բոլոր կառավարողները և երիթուրքական կառավարությունն ամենից շատ վախենում էին, որ քրիստոնյա փոքրամասնությունը ինչ որ ժամանակ կտիրանա Անատոլիային: Այնպես որ այդ աշխարհատարածքի մաքրազարդումը քրիստոնյաներից, չէր սահմանափակվում միայն հայերով և իրականացվում էր դեռ մինչև համաշխարհային պատերազմը, իսկ Անատոլիայի թրքացումը, մասնավորապես բալկանյան պատերազմներից հետո, դարձավ կառավարության կենտրոնական խնդիրը: Ջելալ Բայարի հուշագրություններից երևում է, որ դեռ մինչև պատերազմը կազմվել էր քրիստոնյաներին բռնագաղթելու մանրամասն պլան: «1914 թ. առաջին ամիսներին օսմանական իշխանությունները բախվեցին երկու խնդիրների.

ոչնչի առաջ կանգ չառնող ընդդիմություն, որը պատրաստ էր չարաշահել ամեն տեսակի ազատություն.

ոչ թուրք տարրերի՝ առկայությունը, որոնք բացահայտ, թե թաքուն սպառնում էին կայսրության ամբողջականությանը:

Դրանցից առաջինը քաղաքական և լուծելի խնդիր էր, իսկ երկրորդը՝ մահացու վտանգավոր: Ինչպես կառավարությունն, այնպես էլ Միությունն և առաջադիմությունն կուսակցության կենտրոնական կոմիտեն և ռազմական նախարարությունում անցկացվող գաղտնի խորհրդակցությունների գլխավոր թեման ստրատեգիական շրջաններում խիտ բնակչություն ունեցող և արտաքին ուժերի կողմից աջակցություն ստացող ոչ թուրք ժողովուրդների վերաբնակեցումն էր»:

Էշրեֆ Կուշչուբաշին վկայում է, որ նման խորհրդակցություններ տեղի ունեցան նաև 1914 թ. մայիս, հունիս և օգոստոս ամիսներին: Դրանց «մասնակցել են Միություն և առաջադիմություն կուսակցությանը նվիրված, հայրենասիրական տրամադրություններով և ինքնազոհաբերության պատրաստ» անդամներ, որոնց ամենատարբեր պատրվակներով հրավիրում էին Կ. Պոլիս: Հետաքրքիր է, որ այդ խորհրդակցությունների մասին ոչինչ չգիտեին նույնիսկ կառավարության որոշ անդամներ (Ալի Քեմալ Մերան):

Կազմվեցին մանրամասն տեղեկագրեր Անատոլիայի էթնիկական մաքրազարդման և թուրքացման եղանակների մասին: Վերջապես՝ այդ պլանները գործի դրվեցին պատերազմից դեռ շատ առաջ, Էգեյան ծովափին, առավելապես Իզմիրում ու նրա շրջակայքում: Այդ պլանը կազմված էր երեք մասից.

1. կառավարության կողմից ձեռնարկվելիք ընդհանուր միջոցառումներ.
2. հատուկ միջոցառումներ, որ իրականացվելու էին բանակի կողմից.

3. միջոցառումներ, որոնք իրականացնելու էր Միություն և առաջադիմություն կուսակցությունը (Ջ. Բայար):

Արդյունքում՝ 130 հազար հույն արտաքսվեց Հունաստան: Թոյնբին գրում է. «Հունական համայնքը բռնությամբ լրիվ արտաքսվեց իրենց տներից և հողերից: Շատ դեպքերում հույների ունեցվածքը պետությունը բռնագրավում էր, իսկ տիրոջը սպանում... Ահաբեկչության ալիքը մի շրջանից անցնում էր մյուսը: Ահաբեկչական գործողություններն իրականացնում էին ժանդարմերիային որպես օժանդակ ուժ ամրացված ավազակախմբերը»: Այդ ավազակախմբերի նման գործողությունները «Թեշքիլաթը-ի մախսուսեի» ղեկավար Բշրեք Կուշչուբաշին անվանում է «բռնագրավման գործողություններ»:

«Հայերի գենոցիդը Անատոլիայի թուրքացման բաղկացուցիչ մասն էր» (էջ 106): «Թուրքերը հայերի դեմ օգտագործեցին նույն միջոցներն, ինչ հույների դեմ: Նրանց զինակոչում էին օսմանյան բանակ և ուղարկում բանվորական գումարտակներ... Հայերի նման հազարավոր հույն զինվորներ զոհվեցին ցրտից, քաղցից և նման բաներից... Հույներին խմբերով և հսկողության տակ ուղարկում էին Անատոլիայի խորքերը... Այս եղանակով զոհված հույների թիվը հայտնի չէ, քանի որ բերվող տվյալները տատանվում են 200 հազարի և մեկ միլիոնի միջև» (էջ 107): Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հունաստանի վարչապետ Վենիզելոսը հայտարարեց, թե 300 հազար հույն կոտորել են, իսկ 450 հազար ապաստան են գտել Հունաստանում: Ինչո՞ւ Արևմտյան Անատոլիայում թուրքացման քաղաքականությունը իրականացվեց առանց բնաջնջման խոշոր գործողությունների (չնայած այստեղ ևս կոտորածների առանձին դեպքեր եղան), իսկ երկրի արևելքում այն ցեղասպանության տեսք ընդունեց: Նախ՝ այն ժամանակ դեռևս պատերազմ չկար, և արտաքին ուժերը վերահսկում էին իրավիճակը: Իսկ պատերազմը սկսվելուց հետո դրսի միջամտության վտանգը վերացավ. միայն պատրվակ էր պետք: Ահմեդ Ռեֆիկը 1919 թ. գրեց, թե հայերի գործողությունները հիանալի պատրվակ էին երիտթուրքերի համար՝ իրականացնելու թուրքացման պլանը, ազատվելու հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու անհրաժեշտությունից և վերջնականապես «լուծելու» Հայկական հարցը: «Վանի հայերի ապստամբությունը, ռազմական գործողությունների խոչընդոտումները երիտթուրքերին առիթ տվեցին իրականացնելու ազգային իղձերը... նրանք ընտրեցին հայերին ֆիզիկապես բնաջնջելու և այդ միջոցով արևելյան վի-

լայեթների հարցը վերացնելու ուղին» (էջ 108):

Հույների պարագայում թուրքերը դեռևս հույսեր ունեին վերածնելու Մեծ կայսրությունը, իսկ հայերի պարագայում «ամբողջ հասարակությունը ընկղմված էր խորը վատատեսության մեջ... Բոլորը սպասում էին կայսրության վերջին: Խոսքը գնում էր արդեն ոչ թե «սովորական պայմաններում» որոշ շրջանների թուրքացման, այլ Դողան Ավճիօղլիի խոսքերով. «ամբողջ ազգի ապրելու կամ անհետանալու մասին» (էջ 108-109):

Դեռ մինչև պատերազմը մշակված պլանի համաձայն, ռազմական պարտության դեպքերում թուրքերը կետրոնանալու էին Անատոլիայում և շարունակելու էին կռիվը: Սարիղամիշի պարտությունից հետո այդ պլանը գործի դրվեց:

Մինչև XIX դարի 60-70-ական թվականները թուրքերի համար Անատոլիան արհամարհելի տարածք էր, լոկ հարկերի և բանակը սնդամթերքով ապահովելու աղբյուր: Հետագայում Անատոլիայի ռազմավարական նշանակության հանդեպ վերաբերմունքը շեշտակիորեն փոխվեց: Ժամանակի լրագրերը գրեցին, թե Անատոլիայի հանդեպ արհամարհական վերաբերմունքը կործանարար է ազգի համար:

«Ոչ թուրք էթնիկական խմբերի գրգռիչ կեցվածքը պանթուրքիզմի կողմնակիցներին հարկադրեցին ապացուցել, որ Անատոլիան թուրքական հող է» (էջ 111): Եվ ահա սպառնալիք է կախվել նաև Անատոլիայի գլխին: «Հասկանալի է, որ Օսմանյան կայսրության սահմանների անկասելի կրճատվելը Փոքր Ասիան վերածեց... թուրք ժողովրդի վերջին օթևանի: Պատմական փորձը ցույց է տվել, որ ինքնորոշման համար մյուս ժողովուրդների պայքարն ուղղված էր թուրք ժողովրդի բուն գոյության դեմ: Անատոլիայի ոչ թուրք ժողովուրդները, արևելքում՝ հայերն ու քրդերը, արևմուտքում՝ հույները, պատրաստ էին ցանկացած պահին պայթեցնելու այդ հպարտ ժողովրդի վերջին ամրոցը» (էջ 111-112):

Նախ՝ Անատոլիայի հանդեպ պետական նոր քաղաքականության հեղինակը ոչ թե երիտթուրքերն էին, այլ Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանը:

«Մենք պետք է կենտրոնանանք Անատոլիայում: Փառք ալլահին, որ մենք այն ունենք». սրանք սուլթանի խոսքերն են: Անատոլիայի թուրքացման քաղաքականության հեղինակը ևս Աբդուլ Համիդն էր: Այդ նա իրականացրեց ոչ միայն Բալկաններից ու Ղրիմից, այլև Կովկասից

թուրքական տարրերի ներգաղթն Անատոլիա և նրանց բնակեցումը քրիստոնյա ազգաբնակչության տարածքներում:

Երկրորդ՝ հայերն Անատոլիային տիրելու ձգտում չեն ունեցել. ավելին՝ մինչև Առաջին աշխարհամարտը նրանք նույնիսկ կայսրության կազմից դուրս գալու լուրջ ծրագիր չեն ունեցել, այլ լոկ պահանջել են բարենորոգումներ սեփական հայրենիքում, անվտանգ, առանց ճնշումների, հարստահարությունների ապրելու համար: Եվ ասել, թե երիտթուրքերին կոտորածի մղեց այն, որ պատերազմից հետո նորից արծարծվելու էր բարենորոգումների խնդիրները, որի «իրականացումը թուրքերի համար նշանակում էր վերջ իրենց բազմադարյան տիրապետության...», մեղմ ասած ճիշտ չէ: Ստում է Նաումանը, երբ գրում է. «Բարենորոգումների անխուսափելի հետևանքը լինելու էր Հայաստանի անջատվելը, սակայն չէ որ դա հավասարազոր էր կայսրության կործանմանը»: Առավել ևս անտրամաբանական է, երբ բարենորոգումների հնարավոր հետևանք են համարվում թուրքերի զանգվածային կոտորածները: Հայերը թուրքերի վրա ձեռք չեն բարձրացրել, բացառությամբ 1918թ., երբ Հայոց ցեղասպանությունն իրողություն էր, և վրեժխնդրության ձգտումը՝ միանգամայն բնական ու հասկանալի:

«Ամեն մի մանրուք հաշվի էր առնված,- գրում է Թ. Աքչամը,- Անատոլիայում լայնածավալ ազգային դիմադրություն հնարավոր էր միայն այն դեպքերում, եթե երկրամասի բնակչությունը միացեղ լիներ: Պատահական չէ, որ երիտթուրքերի գաղափարախոսները ցանկացած առիթով պնդում էին, որ «ժամանակակից պետություն հնարավոր է ստեղծել միմիայն միասնական էթնիկական ընդհանրության առկայության պայմաններում»: Խնդիրը հայերի թիվը նվազագույնի հասցնելն էր: Միայն այդ ժամանակ կվերանար թուրքերի գոյությանը սպառնացող վտանգը...»: Սա մեխանիկական կրկնություն է Թալեաթի հետյալ խոսքերի. «Եթե մենք ցանկանում ենք հարատևել մնացած տարածքներում, ապա պետք է ազատվենք այդ օտարածին տարրերից»: Հայերի թվի կրճատումը, «մինչև հիմնախնդիրներ չհարուցող մակարդակի», հայտարարվեց բռնագաղթի գլխավոր նպատակ, և այդ մասին բացահայտ ասվում էր վիլայեթներ ուղարկված հրահանգներում: Բռնագաղթի ընթացքում այն իրականացնողները պետք է խստորեն ելնեին հետևյալ պահանջներից.

հայերի թիվը նոր բնակավայրերում չպետք է գերազանցեր մահմեդականների թվի 10 տոկոսը,

նոր վայրերում հայերի հիմնած բնակավայրերը պետք է կազմված լինեին ոչ ավելի, քան 50 տնից (էջ 113):

Սկզբում իսլամ ընդունած հայերին չէին բռնագաղթեցնում, սակայն, հաստիճանաբար, իսլամ ընդունել ցանկացողների թիվը սպառվեց, և որոշվեց հայկական ծագում ունեցող բոլոր անձանց աքսորել, անկախ կրոնական պատկանելությունից:

«Հայերի ցեղասպանության բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ դրանում մասնակցում էր քաղաքացիական բնակչությունը, որը հենց սկզբից ակտիվ մասնակցություն ցույց տվեց հայերի կոտորածներին: Նույնիսկ եղան դեպքեր, երբ /մահմեդական/ բնակչությունը հարձակվեց ժանդարմական ջոկատների վրա, որոնք փորձում էին պաշտպանել հայերին» (էջ 115): Այդ բնակչության հիմնական նպատակը հարստանալն էր: Եվ պետությունն ամեն կերպ գրգռում էր զանգվածների թալանչիական կրքերը: 1915 թ. սեպտեմբերի 13-ի՝ լքյալ գույքերի մասին օրենքը նպատակ ուներ հայերի ունեցվածքն այնպես օտարել, ցաքուցրիվ անել, որ դրանց տերերն այլևս չկարողանային հիմնավորվել նախկին վայրերում: Ահա թե այդ մասին մեջլիսում ինչ ասաց Ահմեդ Ռիզան. «Սա բացահայտ բռնություն է, մարդկանց ծծրակից բռնած դուրս են բերում գյուղից, ապա նրանց ունեցվածքը նետում են աղացի տակ... Հայերի ունեցվածքը մասամբ արդեն թալանված է»: Այդ գործընթացն այնպիսի ծավալներ ընդունեց, որ կարճ ժամանակում մսխվեց հայերի ունեցվածքը:

Գերմանական շարքային քաղաքացին հրեաների ցեղասպանության մասին ասում է. «ես ոչինչ չգիտեմ», իսկ պետությունն ընդունում է այդ իրողությունը: Թուրքիայում պետությունը համառորեն հրաժարվում է ընդունել ցեղասպանության փաստը, իսկ շարքային թուրքը, ընդհակառակը, այն ընդունում է, չնայած բացարձակ անտարբերությունն է դրսևորում իշխանությունների մերժողական կեցվածքի հանդեպ:

Ինչո՞ւ Թուրքիան չի ընդունում Հայոց ցեղասպանության իրողությունը:

«Հիշողության զանգվածային կորուստը» հանցագործություն կատարածի հոգեբանությունն է: Տվյալ դեպքում խոսքը մի այնպիսի հրեշավոր երևույթի մոռանալու մասին է, ինչպիսին ցեղասպանությունն է:

Թուրքիայում գտնում են, որ այն ազատագրական պայքար, քաղաքացիական կռիվ էր հայերի և հույների դեմ, ինչը բացարձակ խաբեու-

թյուն է, քանի որ այդ պատերազմը տարվում էր ոչ թե զավթիչների, այլ ազգային փոքրամասնությունների դեմ:

«Ազատագրական պատերազմի ամբողջ ընթացքում Անատոլիայում գտնված Անտանտայի զորամասերի... վրա չի արձակվել ոչ մի գնդակ: Այդ պատերազմում առաջին գնդակն արձակվեց 1918 թ. դեկտեմբերի 19-ին Դերտ-յոլում: Եվ կրակեցին հայ զինվորների վրա... Թուրքերը ոչ միայն դեմ չէին անգլիական օկուպացիային, այլև ցանկանում էին, որ այն իրականացվի» (էջ 135):

Գրքի վերջին գլուխը նվիրված է ցեղասպանության ընկալման խնդրին: Հեղինակը, մասնավորապես, ծանրանում է Թուրքիայի արտաքին գործերի նախարարության աշխատակիցներ Կամարան Գյուրյունի և Բիլյալ Շիմշիտի տեսակետների վերլուծության վրա, իսկ այդ տեսակետները հանգում են Հայոց ցեղասպանության իրողության ժխտմանը:

***

Թ.Աքչամի գիրքը սովորական երևույթ չէ: Թվում է, թե այն սկիզբն է Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության մի նոր ժամանակահատվածի: Գրքի նշանակությունը ոչ միայն թուրքական պատմագրության համար միանգամայն նոր, եղածին տրամագծորեն հակադիր հարցադրումներն են (չնայած դրանցից մի քանիսի հետ համաձայնվել չի կարելի), այլ նաև այն, որ Թ. Աքչամը հարկադրում է նաև մեզ՝ հայ պատմաբաններիս, ուսումնասիրության շրջանակի մեջ առնել մի շարք դիտարկումներ ու նոր երանգներ, փորձել ցեղասպանության հիմնահարցերը քննարկելիս ուշադրությունից դուրս չթողնել թուրք հետազոտողների, մասնավորապես ներկայացված գրքի հեղինակի փաստարկները:

Գրախոսող՝ Ստեփան Պողոսյան

Գրքի հավելվածում զետեղված են վկայություններ.

Ֆալիխ Ռիֆկի Աթայ, Չիթապտղե լեռներ, Ստամբուլ, 1981, էջ 35-36:

(Հեղինակը վկայում է, որ երբ ինքը՝ ռազմական ուսումնարանի սան, փորձեց ընդունվել «Թեշքիլաթը-ի մախսուսեի» շարքերը, դոկտոր Նազմը նրան պատասխանում է. «Այդ ջոկատներ մենք ընդգրկում ենք միայն բանտարկյալների, այն քեզ նման երիտասարդների տեղ չէ»):

Միհրադ Շյուքրու Բլեդա, Կայսրության անկումը, Ստամբուլ, 1979, էջ 56-59:

(«Մի անգամ ես Դիարբեքիրի վալի Ռեշիդ բեյին ասացի.

- Չէ որ դուք բժիշկ եք և ձեր պարտականությունը մարդկանց փրկելն է: Ինչպե՞ս կարող էր պատահել, որ ձեր նախաձեռնությամբ այդքան մարդիկ ծերբակալվեին և ոչնչացվեին:

- Ազգային զգացմունքները մասնագիտությունից ուժեղ գտնվեցին: Այլ կերպ լինել չէր կարող: Ավելի լավ է, որոշեցի ես, մենք նրանց ոչնչացնենք, քան նրանք մեզ»):

Ալի Ֆուադ Էրդենի, Առաջին աշխարհամարտի տարիների սիրիական հուշերը, Ստամբուլ, 1953, էջ 120-123:

(Թոշակի անցած բանակի գեներալը վկայում է. «Հարյուր հազարավոր մարդկանց տեղափոխությունը հազարավոր կիլոմետրեր ինչ-որ բանով հիշեցնում է ժողովուրդների գաղթը հին ժամանակներում... Պայմանները, որոնցում ապրում էին տեղահանվածները, շատ բարենպաստ էին ժանտախտի և բծավոր տիֆի տարածման համար: Ճանապարհին գաղթվածները տարածեցին այդ վարակը, և այն հասավ նաև կանոնավոր բանակի զինվորներին»):

Ա. Ֆուադ Էրդեն, Չեթեները, էջ 216-221:

(Առկա է հետևյալ վկայությունը. «Հալեպի նահանգապետից ստացվեց հեռագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Այսօր ինձ մոտ եղան Խալիլ բեյը և Սիմեդ բեյը՝ երկուսն էլ ազգակապետեր: Հայտնեցին, որ Դիարբեքիրի վիլայեթում ոչնչացման գործողությունն արդեն ավարտված է: Նույն նպատակով նրանք եկել են Սիրիա և սպասում են հրամա-

նի: Ես նրանց ծերբակալեցի: Սպասում եմ ձեր հրահանգին»: Պատասխան հեռագրում Ջեմալ փաշան պահանջում է. «անմիջապես նրանց ազատ արձակել»):

Զիյա Շաքիր, Նորագույն պատմության երեք մեծ գործիչներ. Ջեմալ, Թալեաթ, Էնվեր; Ստամբուլ, 1944, էջ 52-53:

(Այստեղ վկայություն կա վերը հիշապակված Սիմեդի մասին, որը Զոհրապի դահիճն էր. «Ընկերության («Միություն և առաղիմություն») ֆիդայիների թվում էր ոմն Չերկեզ Սիմեդը: Լինելով կոմիտեական, այս արյունախումը կատարում էր զանազան գաղտնի հանձնարարություններ»: Սպանություններից մեկը մեծ աղմուկ հանեց, և նա փախավ մայրաքաղաքից ու ակտիվ մասնակցություն ունեցավ Դիարբեքիրի հայության ջարդին):

Սիմեդ Ռեֆիկ, Երկու կոմիտե, երկու հանցագործություն:

(Առկա է հետևյալ վկայությունը. «Իթթիհատականները ձգտում էին հայերին ոչնչացնել ամբողջությամբ... Հայրենիքի հազարավոր որդիներ, լինի հայ, թե թուրք, դարձան կոմիտեների զոհեր: Պատերազմի սկզբին Ստամբուլից Անատոլիա շպրտվեցին հարյուրավոր զինված ավազակախմբեր՝ կազմված նախկին բանտարկյալներից և գողերից: Մեկ շաբաթ նրանք պատրաստություն անցան ռազմական նախարարության դիմացի հրապարակում, ապա «Թեշքիլաթը-ի մախսուսեի» էմիսարների ուղեկցությամբ ուղարկվեցին Անդրկովկասի հարևան շրջանները: Այս ավազակախմբերը հայերի հանդեպ իրականացրին ամենազազանային գործողություններ»):

Պատմական դատավարություն: Նորից մեծություն սուլթանի... որոշմամբ ստեղծված ռազմական դատաարանի վճիռը, հատ. 1, 1919 թ. (երիտթուրք լիդերների վերաբերյալ դատավճիռը):